Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

80 ԵՐՖԻ ԱԱԳԼ 1943

A. ALIKHANYAN National Laboratory

Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ



Change the world with Science

Փոխենք աշխարհը գիտությամբ

2025 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հաշվետու ժամանակահատվածում (2025թ.) իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ փորձարարական և տեսական ֆիզիկայի, կիրառական և միջուկային ֆիզիկայի, տիեզերական ճառագայթների, աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի ոլորտներում՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

- Բարձր էներգիաների մասնիկների ֆիզիկա՝
  - ✓ Տարրական մասնիկներ և միջուկային ֆիզիկա,
  - ✓ Քվանտային քրոմոդինամիկա,
  - ✓ Նեյտրինային ֆիզիկա,
- Դաշտի քվանտային տեսություն,
- Լարերի տեսություն, մաթեմատիկական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Քվանտային ֆիզիկա, վիճակագրական ֆիզիկա, տոպոլոգիական մեկուսիչներ, SPT փուլեր,
- Քվանտային Հոլլի էֆֆեկտ, եռաչափ ինտեգրելիություն, ոչ կրիտիկական լարեր, ուժեղ փոխազդեցություններ,
- Կիրառական մաթեմատիկա, կենսաֆիզիկա,
- Աշխատանքներ՝ կատարված ԼՈՒԷ-75 էլեկտրոնային գծային արագացուցչի վրա,
- Աշխատանքներ՝ կատարված պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի վրա,
- Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում,
- ԱԱԳԼ-COMPASS համագործակցություն,
- ԱԱԳԼ-Belle II համագործակցություն,
- Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրություն (H.E.S.S. և CTA)
- Հետազոտություններ Ջեֆերսոնի անվան Լաբորատորիայի՝ JLab A, B, C և D փորձարարական սրահներում,
  - ✓ B սրահում շարունակվել է RGA և RGB տվյալների հավաքման ժամանակահատվածների ընթացքում ստացված E12-12-001, E12-12-001A, E12-11-103B, E12-07-104A գիտափորձերի տվյալների մշակումը.
  - ✓ Չեզոք մասնիկների սպեկտրոմետրի նախագծի հետ կապված աշխատանքներ
  - ✓ Հաշվետու ժամանակաշրջանում ԱԱԳԼ-Jlab համագործակցության անդամները մասնակցել են D փորձարարական սրահում կատարվող GlueX գիտափորձի աշխատանքներին,
- Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին,
- PbWO4 բյուրեղների բնութագրերի ուսումնասիրում՝ EIC-ի կալորիմետրի նախատիպի կառուցման համար,
- EmCal կալորիմետրի նախատիպի կառուցում և ուսումնասիրություններ
- Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ,
- Հետազոտություններ նյութագիտության ոլորտում.
  - ✓ Խիտոզանի նոր ածանցյալների սինթեզ և ուսումնասիրություն
  - ✓ Նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրություններ

- Լազերային համակարգերի խմբի կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.
  - ✓ Հավաքվել և համալրվել է լազերային լաբորատոր սարքավորումը, որի միջոցով կատարելագործվել է էլեկտրոնային փնջի ֆոկուսացման համակարգը::
  - ✓ Հավաքվել և համալրվել է լազերային/օպտիկական համակարգ՝ տարբեր ֆոտոկաթոդներից ֆեմտովայրկյանային էլեկտրոնային փնջեր ստանալու նպատակով: Համակարգը ներառում է լազեր, որը գեներացնում է 166 ֆվ տևողությամբ, 515 նմ ալիքի երկարությամբ ֆեմտովայրկյանային օպտիկական իմպուլսներ՝ 40 ԳՀց կրկնման հաճախությամբ: Ճառագայթի ալիքի երկարությունը BBO ոչ գծային բյուրեղի միջոցով փոխակերպվում է 515 նմ-ից 257.5 նմ-ի, որից հետո այն ֆոկուսացվում է ֆոտոկաթոդի վրա:
  - ✓ Իրականացվել են ուսումնասիրություններ լազերային իմպուլսների և ընդհանուր համակարգի բարձր ռադիո-հաճախության հետ սինխրոնիզացնելու ուղղությամբ, ըստ լազերի շահագործման ձեռնարկի:
- GEANT4 փաթեթի միջոցով կատարվել է $CsPbBr_3$ և Zn_2SiO_4 նյութերի պրոտոնային ճառագայթահարման մոդելավորում՝ 15.5 ՄէՎ էներգիայի փնջի կիրառմամբ:
- Շարունակվել են աղիքային ցուպիկի ընտանիքին պատկանող մանրէների վրա գերկարճ էլեկտրոնային փնջերի (CANDLE, AREAL) ազդեցության հետազոտությունները:
- Գերկարճ էլեկտրոնային փնջերի կիրառմամբ շարունակվել են հետազոտությունները, որոնք ուղղված են «Ակտարա» պեստիցիդի (ակտիվ բաղադրիչ՝ թիամեթոքսամ) նկատմամբ բարձր արդյունավետությամբ կենսատրանսֆորմացիա իրականացնող բակտերիալ մուտանտների ստացմանը:
- Մշակվել և պատրաստվել է ֆոտոդիոդի չափման համակարգ, հիմնված երկփուլային բարձր արագությամբ գործող ուժեղացուցիչի շղթայի վրա (ուժեղացում-թողունակություն գործակից՝ մոտ 100 ՄՀց և ավելի քան 100 Վ/մկվ արագության գործակից):
- ԱԱԳԼ-ի ԼՈՒԷ-75 համալիրի գծային արագացուցչի էլեկտրոնային փնջի ելքին տեղադրվել է տատանվող լարի մոնիտոր՝ փնջի նոր պրոֆիլավորման համակարգ:
- Հարաբերականության ընդհանուր տեսության մեծ ճշտությամբ ստուգման արդյունքները՝ LARES-2 արբանյակի (European Space Agency, Italian Space Agency) տվյալներով, ներկայացվել են առնչվող երևույթների հետ միասին:
- Նեյրոնային ցանցերի միջոցով հետազոտվել է S-աստղերի դինամիկան Գալակտիկայի կենտրոնում: Ստացվել է վերին գնահատական մութ նյութի առավելագույն ներդրման համար:
- Հետազոտվել են Տիեզերքի վաղ շրջանում առաջացած գրավիտացիոն ալիքների հատկությունները:
- Ուսումնասիրվել են Գերնոր աստղերի հատկությունները: Առաջարկվել են սահմանափակումներ դրանց պայթյունի մեխանիզմների համար:
- Նոր-Ամբերդի և Արագածի գիտահետազոտական կայաններում իրականացվել է 24/7 մշտադիտարկում՝ հետևյալ ուղղություններով.
  - ✓ Տիեզերական ճառագայթների տարբեր տեսակների մասնիկների հոսքերի մշտադիտարկում՝ կիրառելով բարձրադիր գիտական կայաններում տեղադրված մասնիկների դետեկտորներն ու սպեկտրոմետրերը:

- ✓ Մթնոլորտային պարպումների գրանցում և մշտադիտարկում՝ արագագործ ալեհավաքների միջոցով:
- ✓ Երկրի մակերևույթի մոտ էլեկտրական դաշտի չափում՝ էլեկտրական դաշտի չափիչ սարքերի ցանցի միջոցով:
- ✓ Եղանակային պարամետրերի մշտադիտարկում՝ DAVIS օդերևութաբանական կայանի միջոցով:
- ✓ Գեոմագնիսական դաշտի մշտադիտարկում:
- ✓ Մասնիկների հոսքերի մշտադիտարկում Արևելյան Եվրոպայի և Գերմանիայի լեռնագագաթներին՝ SEVAN եվրոպական ցանցի միջոցով:
- ✓ Արագածի գիտական կայանների երկնքի՝ AllSky տեսախցիկների համակարգի միջոցով մշտադիտարկում:

- Արագածում տեղադրվել են չորս նոր գիտափորձարական համակարգեր: Կատարվել են հետևյալ հետազոտությունները.
  - ✓ Էլեկտրոնների արագացման պայմանների ուսումնասիրություն մթնոլորտում՝ մինչև 50 ՄէՎ էներգիական տիրույթ:
  - ✓ Ամպրոպային ամպերում «ձյան» և «գրաուպելի» դիպոլների ձևավորման մեխանիզմների հետազոտություն:
  - ✓ MOS պրոցեսի հետազոտություն GEANT4 մոդելավորման և Արագածի մասնիկային սպեկտրոմետրերի տվյալների հիման վրա:
  - ✓ Էլեկտրոն-գամմա ճառագայթների հեղեղների զարգացմամբ պայմանավորված մթնոլորտային նոր առկայծումների ուսումնասիրություն:
  - ✓ Մթնոլորտային բռնկումների տեսակների և պայմանների հետազոտություն, որոնք հանկարծակի դադարեցնում են մասնիկների հոսքը:
  - ✓ ASNT, SEVAN, CUBE, NaI մասնիկային սպեկտրոմետրերի միջոցով էներգետիկ սպեկտրների վերականգնում՝ 300 կէՎ–100 ՄէՎ էներգիաների տիրույթում:
  - ✓ RREA պրոցեսի մոդելավորում՝ CORSIKA ծրագրով՝ ուժեղ մթնոլորտային էլեկտրական դաշտերում:
  - ✓ GEANT4 հաշվարկներ՝ Արագածի մասնիկների դետեկտորների և սպեկտրոմետրերի արձագանքի ֆունկցիաների գնահատման համար:
  - ✓ SEVAN, STAND1 և STAND3 դետեկտորների հաշվարկների իրականացում՝ ASNT և NaI ցանցերի չափած էներգետիկ սպեկտրների հիման վրա:
  - ✓ Նեյտրոնային հոսքի գնահատում ԱՎԱ-ների ժամանակ՝ SEVAN 010 զուգադիպությամբ:
  - ✓ MAKET սրահում մյուոնային դետեկտորի վերագործարկում և հորիզոնական մյուոնների հոսքի չափման վերականգնում:
  - ✓ «Սպիտակ տուն» կայանի վերականգնում և 2 SEVAN դետեկտորների գործարկում:
  - ✓ STAND4 դետեկտորի պատրաստում Նոր-Ամբերդում՝ դետեկտորների և էլեկտրոնիկայի փորձարկման համար:
  - ✓ SEVAN դետեկտորի նոր ռեժիմների համար ծրագրային ապահովման արդիականացում և նոր պլատաների մշակման իրականացում՝ ներառյալ համընկնումների գրանցումն ու 20–25 սմ հաստությամբ պլաստիկ սցինտիլյատորների մեջ անջատվող էներգիայի չափումը:

- Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնում իրականացվել են հետազոտություններ հետևյալ ուղղություններով.
  - ✓ ^{99m}Tc բշժկական ռադիոիզոտոպի ստացման տեխնոլոգիաների կատարելագործում:
  - ✓ ^{68}Ga բշժկական ռադիոիզոտոպի ստացման տեխնոլոգիաների կատարելագործում:
  - ✓ ^{61,64}Cu բշժկական ռադիոիզոտոպների ստացման տեխնոլոգիաների կատա-րելագործում:
- Belle II գիտափորձի տվյալների ուսումնասիրությունները շարունակվել են երեք հիմնական ենթաուղղություններով.
  - ✓ ARICH գրանցիչի կատարողունակության գնահատման հետ կապված մեթոդական ուսումնասիրություններ:
  - ✓ Pythia8 գեներատորի պարամետրերը կարգավորելու նպատակով իրականացվել են մեծածավալ Մոնտե Կառլո ուսումնասիրություններ:
  - ✓ Belle II գիտափորձի տվյալների հիման վրա B-մեզոնի տրոհումներում Մութ Նյութի թեկնածու հանդիսացող հակաբարիոնի որոնումների համար նախատեսված ալգորիթմի բարելավում, համապատասխան Մոնտե Կառլո ուսումնա-սիրություններ:
  - ✓ Տաու-լեպտոններին առնչվող ուսումնասիրություններ:
- Հայտնաբերվել է տեքստերում բանալի բառերի զտման էֆեկտիվ ոչ-ուղորդված (unsupervised) մեթոդ, որն իր արդյունավետությամբ զգալի գերազանցում է առկա մե-թոդներին:
- Ցույց է տրվել, որ պոլարիտոնային Բոզե-կոնդենսացիան կարելի է օգտագործել քվան-տային բիթի (քյուբիթի) կառուցման համար:
- Մաթեմատիկական վիճակագրության շրջանակներում առաջարկվել է ամենահավա-նական պատճառի կոնցեպտը և ուսումնասիրվել են նրա հատկությունները:

ԱԱԳԼ-ի աշխատակիցների թիվը 2025թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ 341 է, այդ թվում՝ գիտական անձնակազմ - 130, ճարտարագիտատեխնիկական անձնակազմ - 80, վարչասպա-սարկող անձնակազմ (այդ թվում, բարձր-լեռնային կայանների և էլեկտրական ենթակայան-ների սպասարկում) - 131: Գիտական աստիճան ունեցող աշխատակիցների թիվը 112 է, որոնցից 23 գիտությունների դոկտոր է, իսկ 89-ը՝ գիտությունների թեկնածու: Պրոֆեսորի կոչում ունի 9 աշխատակից:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԱԳԼ-ն գրանցել է շոշափելի արդյունքներ գիտական համագործակցությունների, ինչպես նաև թողարկած գիտական արդյունքի առումով: Այս մասին են վկայում ԱԱԳԼ գիտնականների կողմից բարձր ազդեցության գործակցով միջազգային գիտական պարբերականներում, հաշվետու տարվա ընթացում ավելի քան 350 գիտական հրապարակումները (270-ը *Web of Science* շտեմարանում, 2025թ. դեկտեմբեր ամսով ինդեքսավորված), միջազգային գիտաժողովների մասնակցությունը, կազմակերպված գիտական միջոցառումները, արտաքին և լոկալ գիտական սեմինարները և այլն (Նկար 1 և Աղյուսակ 1):



Նկար 1. (Յուրաքանչյուր նկար արտացոլում է այդ տարվա հաշվետվության տվյալները՝ վերցված Web of Science շտեմարանից):

Ակնհայտ է, որ գիտական գործունեության առաջխաղացմանը մեծապես նպաստում են միջազգային և տեղական համագործակցությունները: ԱԱԳԼ-ն ընդհանուր առմամբ ունի 70-ից ավելի համագործակցություններ, որոնց թվում են միջազգային առաջատար հետազոտական կենտրոններում՝ *CERN, JLAB, DESY, KEK, H.E.S.S., INR, BNL* և դրանց բաղադրիչ մաս կազմող համագործակցությունները:

Տարի	*2022 թ.*		*2023 թ.*		*2024 թ.*		*2025 թ.*	
	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.	Հրատ.	Հղում.
Հայաստան	**982**	**26300**	**1020**	**26800**	**1407**	**21400**	**1604**	**42808**
ԱԱԳԼ	**192**	**17400**	**220**	**17600**	**176**	**13200**	**270**	**19143**
	20%	**66%**	**22%**	**66%**	**12,5%**	**61,5%**	**16,9%**	**44,6%**

Աղյուսակ 1. (Յուրաքանչյուր սյուն արտացոլում է այդ տարվա հաշվետվության տվյալները՝ վերցված Web of Science շտեմարանից):

Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ավելի քան 140 գործուղումներ: Դրանց նպատակն է եղել ընթացիկ համագործակցությունների շրջանակներում համատեղ աշխատանքների իրականացումն ու գիտափորձերի մասնակցությունը, ուսանողների և երիտասարդ մասնագետների վերապատրաստումը, գիտաժողովներին մասնակցությունը, ստաժավորումը և այլն: 2025թ.-ին, ԱԱԳԼ աշխատակիցների գործուղման հիմնական երկրներն են՝

ԱՄՆ, Շվեյցարիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսրայել, Գերմանիա, Իսպանիա, Ճապոնիա, Հունաստան, ՌԴ և այլն:

ԱԱԳԼ գիտական գործունեության բարձր ակտիվության, ինչպես նաև գիտնականների և գիտական խմբերի կողմից գեներացված նոր գաղափարների շնորհիվ հաշվետու տարվա ընթացքում շարունակվել է ակտիվ մասնակցությունը տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից 2025թ.-ին հայտարարված դրամաշնորհային մրցույթներում ֆինանսավորման են երաշխավորվել ԱԱԳԼ կողմից ներկայացված հետևյալ նախագծերը՝

- «Գիտական արդյունավետության խթանման դրամաշնորհային ծրագիր 2025» մրցույթ (2 ծրագիր)
- «Երկակի նշանակության գիտական նախագծեր 2025» մրցույթ (1 ծրագիր)
- «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթ (2 ծրագիր)
- «Պետության պահանջարկի վրա հիմնված (demand driven) գիտահետազոտական նախագծեր - 2025» մրցույթ (1 ծրագիր)
- «Փորձարարական մշակումների նախագծեր (Experimental Development Projects) 2025» մրցույթ (2 ծրագիր)
- «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր 2025» մրցույթ (2 ծրագիր)
- «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր - 2025» մրցույթ (1 ծրագիր)
- «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2025»» մրցույթ (1 ծրագիր)

Տեղական ոչ պետական և միջազգային դրամաշնորհների մրցույթներում նույնպես գրանցվել են նշանակալի հաջողություններ:

Երիտասարդ հետազոտողների թվի ընդլայնումը շարունակում է մնալ ԱԱԳԼ ռազմավարական առաջնահերթություններից մեկը: Հաշվետու տարվա ընթացքում կատարվել են երեք թեկնածուական ատենախոսությունների պաշտպանություններ, իսկ ԱԱԳԼ ասպիրանտուրա ընդունվել են չորս նոր ասպիրանտներ:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են ճանաչողական շրջայցեր դպրոցականների և ուսանողների համար: Բացի ներքին և արտագնա դասախոսություններից, կազմակերպվել են նաև լրացուցիչ դասախոսություններ, հանրային միջոցառումներ, որոնք կրելու են շարունակական բնույթ:

Ռազմավարական նշանակություն ունի նաև գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների արդիականացումը և զարգացումը: Հաշվետու տարվա ընթացքում ԱԱԳԼ-ն այս ուղղությամբ նույնպես արձանագրել է նշանակալի առաջընթաց: Հաշվետու ժամանակահատվածում ձեռք են բերվել մեծ թվով գիտական սարք-սարքավորումներ, գրասենյակային կահույք և այլն:

Ենթակառուցվածքների արդիականացման և տեխնոլոգիական վերազինման ձեռքբերումների շարքում են «Առաջնակարգ դետեկտորներով լաբորատորիայի» վերազինումը և Համակարգչային կենտրոնի վերազինումը, ինչը կհանգեցնի անվտանգության, արդյունավետության և շահագործման ժամկետների զգալի ավելացմանը:

Միջազգային դրամաշնորհ	**15,180,560**
Արտաբյուջետային ներհոսքեր	**173,809,180**

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե հետբուհական կրթություն	**5,918,513**
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	**312,000**
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե ենթակառուցվածքի պահպ և զարգացում	**1,031,865,300**
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե գիտա աստիճանի հավելավճար	**28,864,000**
ԲԿԳ Միջ.գիտատեխ.շտեմ.ներառված հրատարակութ.աջակցություն	**548,829**
ԲԿԳ Գիտ ստոբաժ. Նյութատեխ.բազայի արդիականացում	**39,600,000**
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե գիտական միջոցառման կազմակերպում	**16,300,000**
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե թեմատիկ	**803,798,600**
Ընդհանուր	**2,116,196,982**

Աղյուսակ 2. Հաշվետու տարվա ընթացքում ԱԱԳԼ դրամական ներհոսքերը (**միավորը՝ ՀՀ դրամ**):

Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2025թ.-ի ընդհանուր մուտքերի մեջ	49 %
Բազային ֆինանսավորման մասնաբաժինը 2025թ.-ի մուտքերի մեջ՝ առանց ԲԿԳԿ-ի թեմատիկ դրամաշնորհային ծրագրերի	85 %

Աղյուսակ 3.

ԱԱԳԼ-ն, որդեգրած գիտության հանրայնացման խթանման քաղաքականության և իր գիտական գործունեության տպավորիչ արդյունքների շնորհիվ, շարունակաբար եղել է մամուլի ուշադրության կենտրոնում, հետևյալ ձևաչափերով՝

- ✓ Ասուլիսների հրավեր և մասնակցություն,
- ✓ Հարցազրույցների հրավեր և մասնակցություն,
- ✓ Մամուլը մեր մասին,
- ✓ Նկարահանված հոլովակներ ինստիտուտի գիտական ձեռքբերումների մասին,
- ✓ Կազմակերպված սեմինարների լուսաբանում և այլն:

Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոն

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ, Ռ.Պ. Մանվելյան

Հաշվետու ժամանակահատվածում **Ս. Մատինյանի անվան տեսական ֆիզիկայի կենտրոնի (տեսական ֆիզիկայի բաժանմունք)** հետազոտությունների իրա-կանացման հիմնական ուղղություններն են եղել՝

- Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա (տարրական մասնիկների և միջուկային ֆիզիկայի տեսություն, Քվանտային Քրոմոդինամիկա, Նեյտրինային Ֆիզիկա),
- Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, վիճակագրական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ,
- Քվանտային ֆիզիկա,
- Կոնդենսացված միջավայրերի և ճառագայթման ֆիզիկա,

Այդ ուղղություններով 2024 թ. կատարվել են արդյունավետ հետազոտություններ և ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները՝

I. Բարձր էներգիաների ֆենոմենոլոգիա [1]-[6]

[1]- ում
Մեր հիմնական նպատակն է հաշվարկել ՔՔԴ ուղղումները for $\bar{B} \to X_s\gamma$ և $\bar{B} \to X_s\gamma\gamma$ տրոհումների, ինչպես նաև $B_s - \bar{B}_s$ սիստեմի խառնման պարամետրերի համար: Մենք ստանում ենք բարելավված կանխատեսումներ ֆիզիկական մեծությունների համար փորձարարական տվյալների հետ համեմատելու համար: Արդյունքները կարող են օգտագործվել նոր ֆիզիկայի վրա սահմանափակումներ ստանալու համար:
Արդյունքները ստացվել են լայն միջազգային համագործակցության շնորհիվ, մասնավորապես, պրոֆ. Գրոյբի , ինչպես նաև պրոֆ Նիերստեի հետ:
$\bar{B} \to X_s\gamma$: α_s^2 **<u>ուղղումները c քվարկի ֆիզիկական (ոչ զրո) զանգվածի համար:</u>**
Հաշվարկներն ավարտված են և փաստորեն առաջին անգամ մենք ստացել ենք O1, O2 օպերատորների alphas^2 կարգի ներդրումները c քվարկի զանգվածի բոլոր ֆիզիկական արժեքների համար: Ավելի կոնկրետ, մենք ստացել ենք բանաձևեր, որոնք թույլ են տալիս տալիս արդյունքները ներկայացնել z=mc^2/mb^2 փոփոխականի նկատմամբ շարքի տեսքով z=0 կետի շուրջ, ինչպես նաև z=1/10 կետի շուրջ:

b->s gamma gamma, alphas կարգի ուղղումները O2-O7 օպերատորների ինտերֆերենցիայի համար
Մենք շարունակում ենք B->Xs gamma gamma տրոհման O2-O7 օպերատորների ինտերֆերենցիայի հետ կապված ՔՔԴ alphas կարգի ուղղումների հետ հաշվարկները: Այս տրոհման դեպքում ստացվող ինտեգրալների բերելը վարպետ ինտեգրալների բավականին բարդ խնդիր է, մի շարք դիագրամների համար հաշվարկը ամիսներ է տևում: Դրա համար մենք օգտագործել ենք ինստիտուտում գոյություն ունեցող սերվերը, ինչպես նաև թեմայի շրջանակներում գնված նոր հզոր սերվերը: Այժմ բոլոր դիագրամների համար այդ հաշվարկն ավարտված է, և մենք անցել ենք բուն վարպետ ինտեգրալների հաշվարկին:

Անհրաժեշտ է նշել, որ s-քվարկի համար մենք վերցնում ենք ոչ զրոյական արժեք, ավելի կոնկրետ մենք հաշվարկում ենք վարպետ ինտեգրալները s-քվարկի, c-քվարկի զանգվածների հետևյալ արժեքների համար (pb, ps, q1, q2 b-քվարկի, s-քվարկի, ֆոտոնների քառաչափ իմպուլսներն են):
pb=ps+q1+q2; s1=(pb-q1)^2, s2=(pb-q2)^2
mc/mb=0.27,0.29,0.31; ms/mb=0.4/4.8, 0.5/4.8, 0.6/4.8; (s1+s2)/mb^2<1.
Այժմ մենք սկսել ենք կիրառել նաև հաշվարկների նոր մեթոդ, օգտագործելով դիֆերենցիալ հավասարումները s1/mb^2 և s2/mb^2 փոփոխականների նկատմամբ: Վարպետ ինտեգրալները վերածվում են շարքի ըստ այդ փոփոխականների մինչև s1/mb^2 և s2/mb^2 -ի բավականաչափ բարձր աստիճաններ և լուծվում են դիֆերենցիալ հավասարումները: Դրա համար օգտագործում ենք AMFlow և DiffExp ծրագրերը: AMFlow-ի միջոցով կարողանում ենք գրեթե ճշգրիտ հաշվել վարպետ ինտեգրալների արժեքները կամայական կետում: Դա հաշվելուց հետո օգտագործելով DiffExp ծրագիրը կամ AMFlow ծրագրի DESolver փաթեթը՝ կարելի է լուծել դիֆֆերենցիալ հավասարումները՝ շատ բարձր ճշտությամբ: Այս հաշվարկների համար օգտագործվել են ծրագրի շրջանակներում գնված հզոր սերվերը, ինչպես նաև ինստիտուտում գոյություն ունեցող սերվերը:
Ստացված են արդյունքներ փաստորեն բոլոր դիագրամների համար: Հոդվածը պատրաստման փուլում է:

|ΔB|=2 քառաֆերմիոնային օպերատորների վերանորմավորման հաստատունները:
Մենք հաշվարկել ենք α_s կարգում |ΔB|=2 քառաֆերմիոնայինR_2, R_3և$\tilde{R}_2$, $\tilde{R}_3$ օպերատորների վերանորմավորման հաստատունները: Այդ օպերատորները առաջանում են ըստ ծանր քվարքային վերլուծության հաջորդը առաջատարի նկատմամբ կարգում, և ունեն հետևյալ տեսքը

$$R_2 = \frac{1}{m_b^2}\left(\bar{b}\overleftarrow{D}_\rho\right)_i \gamma^\mu L(D^\rho s)_i \otimes \bar{b}_j \gamma_\mu L s_j,$$
$$R_3 = \frac{1}{m_b^2}\left(\bar{b}\overleftarrow{D}_\rho\right)_i L(D^\rho s)_i \otimes \bar{b}_j L s_j,$$

որտեղ $L = (1-\gamma_5)$,$D_\rho = \partial_\rho - i g_s A_\rho^a T^a$, i և j գունային ինդեքսներ են: Գույնով վերադասավորված $\tilde{R}_i$ օպերատորները ստացվումեն R_i օպերատորներից՝ փոխանակելով s_i և s_j: Բացի այդ, մենք ստացել ենք հետևյալ առնչությունները յուրաքանչյուր ֆերմիոնային գծի վրա երկու և երեք Դիրակի մատրիցների համար՝

$$[\gamma_\mu\gamma_\nu\gamma_\rho L]_{lm} \otimes [\gamma_\rho\gamma_\nu\gamma_\mu L]_{np} \to (4 - a\cdot\epsilon)[\gamma_\mu L]_{lm} \otimes [\gamma_\rho L]_{np},$$
$$[\gamma_\mu\gamma_\nu L]_{lm} \otimes [\gamma_\nu\gamma_\mu L]_{np} \to (8 - b\cdot\epsilon) L_{lp} \otimes L_{nm},$$

որտեղ a և b հաստատունները ֆիքսվում են համապատասխան օպերատորների Ֆիրցի ձևափոխությունների նկատմամբ ինվարիանտության պահանջից: $l,\dots,p$-ն Դիրակի ինդեքսներն են:R_2կամ$\tilde{R}_2$ օպերատորների Ֆիրցի ձևափոխությունների նկատմամբ ինվարիանտությունիցստացել ենք a=12 և b=4, մինչդեռ R_3կամ $\tilde{R}_3$ օպերատորների Ֆիրցի ձևափոխությունների նկատմամբ ինվարիանտությունիցստացվում է b=10:a և b գործակիցների ընտրությունը ապահովում է, որ վերանորմալացված միօղականի մատրիցական տարրը բավարարի Ֆիրցի սիմետրիային, այսինքն՝ այս մատրիցական տարրերը հավասար են R_2^F, R_3^Fօպերատորների մատրիցական տարրերին, որոնք ստացվել ենR_2,R_3-ից Ֆիրցի ձևափոխությունների միջոցով.



Նկար: $R_{2,3}$և$R^F_{2,3}$օպերատորների ներդրումներով դիագրամների օրինակներ:
b և s դաշտերի վրա գործող ածանցյալները համապատասխան գծերի վրա նշված են կետերով:
Հոդվածը պատրաստման փուլում է:

[2].-ում $B_s - \bar{B}_s$ համակարգի զանգվածի սեփական վիճակների միջև $\Delta\Gamma_s$ լայնության տարբերության ճշգրիտ չափումը պահանջում է համապատասխան տրոհման մատրիցի α_s/m_b կարգի հաշվարկ: Ծանր քվարքային վերլուծությունում կարգով ճնշված անդամների քվամտա–քրոմոդինամիկական ուղղումները ներառում են 7-չափողականության քառաքվարքային օպերատորների վերանորմավորում, որոնց համար դեռևս ընդհանուր մեթոդաբանություն հասանելի չէ: $\overline{MS}$ սխեմայում 7-չափողականության օպերատորների մատրիցական տարրերի մեկ-օղականի ուղղումները խախտում են կարգի հաշվարկը, բայց մենք գտել ենք, որ պատասխանատու անդամները ինֆրակարմիր-վերջավոր են և ցույց ենք տալիս, որ դրանք կարող են կլանվել վերջավոր հակաանդամների մեջ, որոնք համեմատական են 6-չափողականության օպերատորներին: Մենք հաշվարկել ենք այդ բոլոր հակաանդամները և նաև ստուգել մեր արդյունքների համապատասխանությունը հադրոնային մատրիցական տարրերի հետ, որոնք հաշվարկել ենք մեծ թվով N_c-գույների սահմանում: Ճիշտ կարգի հաշվարկի պայմանը ենթադրում է սահմանափակումներ Evanescent օպերատորների հնարավոր սահմանումների վրա:

[3].-[6].-ում Ա. Կոցինյանը 2025 թվականին հիմնականում ներգրավված էր CERN-ում COMPASS փորձի տվյալների վերլուծությամբ: Նաև մասնակցել է վերլուծության արդյունքների հիման վրա հոդվածներ գրելուն: Ա. Կոցինյանը Որպես AANL-ի ներկայացուցիչ՝մասնակցում ու ներկայացնում է իր մրցավարական զեկույցները ընթացիկ նախագծերի վերաբերյալ JINR ծրագրի մասնիկների ֆիզիկայի խորհրդատվական կոմիտեի նիստերին Դուբնայում

Տեսական Բաժանմունքի առ. գ.ա. Ա. Իոաննիսյանը կատարել է աշխատանքներ և որպես տեսաբան ունեցել է ներդրում նեյտրինային ֆիզիկայի հետ կապված եքսպերիմենտալ համագործակցությունում (JUNO, DUNE):
Տեսական Բաժանմունքի առ. գ.ա. Ն. Իվանովը պաշտոնապես հանդիսանում եմ ԵրՖԻ-ի ներկայուցիչը միջազգային SPD NICA ծրագրում: Ակտիվ մասնակցել եմ CDR SPD NICA ստեղծման պրոցեսում: Պատրաստել է Մտադրությունների Համաձայնագիր (Memorandum of Understunding) ԵրՖԻ-ի և JINR-ի միջև, ըստ որի մեր էկսպերիմենտատորները կմասնակցեն էլեկտրոմագնիսական կալորիմետրի ստեղծման և տեղադրման պրոցեսներում SPD NICA գիտափորձի համար: Կողմերը ստորագրել են այս Համաձայնագիրը 2022 թ. Հունիս ամսին:

II. Դաշտի քվանտային տեսություն, լարերի տեսություն, մաթեմատիկական ֆիզիկա և ինտեգրվող մոդելներ [7]-[32]

[7]-ում ներկայացված են երկու հիփոթեզ ունիվերսալ մուլտիպլետների մասին: Առաջինը կայանում է նրանում, որ su և so խմբերի համար իրանց Յունգի դիագրամմաները կապնված են վերտիկալ գումարի բանաձևով: Յունգ դիագրամմաների վերտիկալ գումարը սահմանված

է աձս աշխատանքում և ուսումնասիրված են նրա հատկությունները: Կցված ներկայացման k աստիճանի չբերվող ներկայացումների Յունգի դիագրամմաները կարելի է պարամետրիզացնել երկու N-ից չկախված դիագրամմաներով: Իրենց վերտիկալ գումարը տալիս է մուլտիպլետի so անդամի դիագրամման: Այս հիփոթեզը ստուգված է բոլոր հայտնի դեպքերի համար՝ կցված ներկայաձման երկուսից չորրորդ աստիճանների համար, և մի քանի անվերջ ներկայացումների շարքերի համար: Այս հիփոթեզից հետևում է ունիվերսալ Կազիմիրների հաշվելու պարզ բանաձև, որը հայտնի դեպքերում տալիս է ճիշտ պատասխաններ: Այս բանաձևով հաշված է կցված ներկայացման հինգերորդ աստիճանի Կազիմիր սեփական արժեքները ունիվերսալ տեսքով, ինչը հաստատում է հայտնի հիփոթեզը այս մասնավոր դեպքում: Երկրորդ հիփոթեզը վերաբերվում է վերտիկալ գումարի սահմանմանը, և կապում է այն ֆոլդինգի պատկերման հետ, ավելի ճիշտ, նրա դուալ տարբերակի հետ:

[8], և [9] աշխատանքներում դիտարկվում են ներկայացումներ, առաջացոխ կցված ներկայացման աստիճանների վերլուծությունում: Ապացուցված է N->N թեորեմ այդ ներկայացումների համար: Գտնված է Կազիմիր օպերատորի ընդհանուր տեսկը, նրա հատկությունները N->N ձևափոխության նկատմամբ, ինչպես նաև ունիվերսալության հատկությունները: Քննարկված են այդ ամենի հետևանքները վերնշված վերլուծության համար:

[10]-ում նկարագրվելու է նոն-ունիվերսալության ֆակտորի ամենաընդհանուր տեսկը:
Նաև՝
ա) Պատրաստում է ռեվյու “Vogel’s universality and Chern-Simons theory”, մոտ կիսով չափ պատրաստ է:
գ) Լեկցիաներ: Ռ. Մկրտչյանը
կարդացել է 10 լեկցիա Հայ-Ռուսական համալսարանի դպրոցում հետևյալ ծրագրով՝
“Law of the large numbers, action principle, symmetries and conservation laws” :
դ) Մ. Ավետիսյանը նաև աշխատում է ամերիկյան գործընկերոչ Լիա Բերմանի հետ ANSEF գրանտի շրջանակներում:

[11]-ում մենք առաջարկել ենք նոր կառուցողական մոտեցում՝ Օսբորն-Պետկու ձևակերպման շրջանակներում երեք կետանոց կոնֆորմ կորելյացիոն ֆունկցիայի պահպանման պայմանների լուծման համար, որը ընդհանրացվել է մեր կողմից բարձր սպինների համար: Նույն սպին ունեցող կոնֆորմ հոսանքների կորելյացիոն ֆունկցիաների համար մենք առաջարկում ենք ընդհանուր հիպոթեզ, ըստ որի՝ Օսբորն-Պետկու կառուցվածքային տենզորը, որը բավարարում է համապատասխան սիմետրիայի պայմաններին, կարող է ստացվել սպին 1 և 2 կառուցվածքային տենզորների հիմնական անդամների կոմբինացիայից, բարձրացված համապատասխան սպին s-ին համապատասխան աստիճանի: Մենք ստուգել ենք այս հիպոթեզը սպին 3 և 4 դեպքերի համար և ցույց տվել, որ պահպանվող երեք կետային ֆունկցիայի կառուցումը կարող է վերածվել ալգեբրաիկ խնդրի՝ կառուցված անդամների դիվերգենցիաների աջ կողմերը կրճատելու միջոցով: Բացի այդ, այս դիտարկումից հետևում է, որ սպին 3 և 4 դեպքերի համար մեր լուծումները կարող են մեկնաբանվել որպես CFT-դուալ մեկ չափով ավելի AdS տարածության մեջ խորանարդային փոխազդեցության

[12]-ում ուսումնասիրվել է մեկ այլ առավելություն այս դիտարկման՝
բարձր սպինների կոնֆորմ անոմալիայի կառուցվածքի ուսումնասիրությունը, որը ծագում է երեք կետային կորելյացիոն ֆունկցիայի սինգուլյար վարքագծից d = 4 չափում: Բարձր սպին ունեցող կորելյատորների համար այս ճշգրիտ կառուցողական մոտեցումը ներկայանում է որպես ամենահարմար մեթոդ՝ կորելյացիոն ֆունկցիայի սինգուլյարության

ուսումնասիրության համար՝ բացելով ուղի հետքի անոմալիայի կառուցվածքի բացահայտման համար բարձր սպիների դեպքում: Այս ասպեկտը կլուսաբանվի առաջիկա հրապարակման մեջ :
[13] -ում մենք ստանում ենք նոր համաչափություն և նոր արտահայտություն SL(2,C) խմբի ունիտար հիմնական ներկայացումների 6j-- սիմվոլների համար: Սա մեզ թույլ տվեց նրանց համար ստանալ Ռեջե-ի համաչափության անալոգը:
[14]-ում մենք դիտարկում ենք b → i սահմանում առաջացող հիպերբոլիկ Ռոյսենարսի մոդելի կոմպլեքս ռացիոնալ ռեդուկցիան և մանրամասն ուսումնասիրում ենք երկու մասնիկի դեպքը: Համապատասխան ալիքային ֆունկցիաները նկարագրվում են կոմպլեքս հիպերերկրաչափական ֆունկցիաներով Մելին-Բարնսի ներկայացումում: Սահմանվում են դրանց դուալ ինտեգրալ ներկայացումը և անդրադարձման համաչափությունը կապակցման հաստատունում: Բացի այդ, դիտարկվում է հիպերբոլիկ Բաքստերի Q-օպերատորների կոմպլեքս սահմանը: Հիպերբոլիկ Ռոյսենարսի մոդելի մեկ այլ կոմպլեքս ռեդուկցիա ստացվում է՝ վերցնելով b → 1 հատուկ սահման: Բացի այդ, նկարագրվում են կոմպլեքս Կալոգերո-Սազերլանդի տիպի մոդելների երկու նոր ռեդուկցիաներ:
[15] -ում Մենք առաջարկում ենք Ռոյսենարսի ալիքային ֆունկցիաների սուպերսիմետրիկ ընդհանրացում, դրանց համար գրում ենք համապատասխան տարբերության հավասարումը և բացատրում, թե ինչպես են դրանք N=1 սուպերսիմետրիկ Լիուվիլի դաշտի տեսության մեջ հայտնվում որպես մոդուլար ձևափոխության միակետային S-մատրից: Մենք նաև մեկնաբանում ենք դրանց կապը T[SU(2)] եռաչափ N=2 սուպերսիմետրիկ տրամաչափային տեսության բախշման ֆունկցիայի հետ՝ Z_2 գործողությամբ մոդիֆիկացված սեղմված եռագնդի վրա:

[16] -ում Քառաչափ տարածաժամանակում ուսումնասիրել ենք H_1 տիպի Արջիրես-Դուգլասի տեսությունը Ω-ֆոնում: Այդ նպատակով կառուցել ենք Լիուվիլի 3/2 ռանգի անկանոն վիճակը: Ստացված արդյունքները համեմատել ենք ընդհանրացված հոլոմորֆային անոմալիայի մոտեցման հետ, որն ապահովում է պրեպոտենցիալի վերլուծությունը ըստ Ω-ֆոնի $\epsilon_{1,2}$ պարամետրերի: Նաև քննարկել ենք Նեկրասով-Շատաշվիլու սահմանը՝ $\epsilon_1 = 0$, ստացել ենք քվանտային Զայբերգ-Վիտենի կորը, որը հանդիսանում է այլընտրանքային գործիք՝ վերոնշյալ տեսությունը ուսումնասիրելու համար:

[17] -ում Ստացել ենք բանաձևեր, որոնք թույլ են տալիս միավորել որոշակի տրված կարգով անսահման շարքը՝ Պոստ-Մինկովսկյան (փոքր գրավիտացիոն կապի հաստատուն) կամ Պոստ-Նյուտոնյան (փոքր արագությունների) ուղղումներով: Այս ուղղումներն առնչվում են գրավիտացիոն ալիքների ձևին, որոնք առաքվում են մարմինների շարժման արդյունքում՝ Շվարցշիլդի երկրաչափության մեջ՝ ընդհանուր (փակ կամ բաց) հետագծերով շարժման դեպքում :
Կոնկրետ՝ շրջանաձև ուղեծրերի դեպքում, հաշվարկել ենք ալիքի տեսքը և էներգետիկ հոսքը մինչև 30PN կարգը և համեմատել դրանք առկա գրականության արդյունքների հետ: Մեր արդյունքները հիմնված են Հոյնի (և դրա կոնֆլուենտ) հավասարման լուծումների նոր հիպերերկրաչափական ներկայացման վրա:

[18], [19] -ում մենք շատ մանրամասն ուսումնասիրում ենք կանոնավոր կոնֆորմ բլոկերի ստացման ռեկուրսիվ մոտեցումներ: Ավելի ճշգրիտ ուսումնասիրում ենք այսպես կոչված BPZ երկրորդ կարգի դիֆերենցիալ հավասարումը , որին բավարարում է երկրորդ մակարդակի այլասերված դաշտի ներդրմամբ կոնֆորմ բլոկը : Նախ, ներկայացնում ենք այդ հավասարման լուծումը կրկնակի շարքի տեսքով, որը ԱԳԹ դուալության տեսանկյունից համապատասխանում է ինստանտոնային շարքին: Այնուհետև ցույց ենք տալիս, որ շարքի անդամների գործակիցները միարժեք կերպով որոշվում են ռեկուրենտ առնչությամբ:

Օգտվելով Դ. Գայոտոյի և Յորգ Թեշների կողմից առաջարկված մոտեցումից, մասնակիորեն գումարում ենք շարքը և ցույց տալիս, որ արդյունքը կարելի է գեղեցիկ ձևով արտահայտել մեկ հիպերերկրաչափական ֆունկցիայով և դրա ածանցյալով: Այս նոր ներկայացումը զգալիորեն հեշտացնում է տարբեր ասիմպտոտիկ տիրույթների միջև կապի ուսումնասիրումը: Որպես հավելյալ արդյունք՝ մենք ստանում ենք միակցման (fusion) և հյուսման (braiding) գործակիցների պարզ արտածում: Մանրամասն նկարագրում ենք նաև այն նուրբ ընթացակարգը, որի միջոցով այլասերված դաշտը միավորվում է ելքային վիճակի հետ՝ արդյունք ստանալով ընդհանուր քառակետ կոնֆորմ բլոկ:

[20] -ում վերլուծվել է Ցերնիկեի համակարգի վերջերս առաջարկված դասական/քվանտային մեխանիկական մեկնաբանությունը, հաստատվել է դրա համարժեքությունը սֆերայի կամ պսևդոսֆերայի (Լոբաչևսկու հարթության) վրա գտնվող Հիգսի օսցիլատորի հետ: Ցույց տրվեց, որ դասական Ցերնիկեի համիլտոնյանի ոչ իրականությունը կեղծ տրամաչափի աննշան արտեֆակտ է և կարող է վերացվել կանոնիկ ձևափոխության միջոցով: Այս կանոնիկ ձևափոխության քվանտային համարժեքը նմանության ձևափոխությունն է, որը նույնացնում է համակարգը քվանտային Հիգսի օսցիլատորի հետ՝ α,β պարամետրերից կախված ինտեգրման չափանիշով: Երբ α=2β, ստացվում է Հերմիտյան համիլտոնյան, որը նկարագրում է (կեղծ)ոլորտի վրա գտնվող ազատ մասնիկ, մինչդեռ այս կետից շեղումը հանգեցնում է պսևդոհերմիտյան համակարգի:

[21] -ում առաջարկվել է երկչափ N=2 սուպերկոնֆորմ մեխանիկայի պարզ մոդել՝ սպին-ուղեծր փոխազդեցության անդամով, ցույց է տրվել, որ այն ժառանգում է սկզբնական ազատ մասնիկի Գալիլեյան սիմետրիան: Այնուհետև առաջարկվել է այս համակարգի քվատերնիոնային համարժեքը, որը նկարագրում է քառաչափ N=4 սուպերկոնֆորմ մեխանիկան D(1,2|α): Համիլտոնյանի բոզոնային մասը նկարագրում է կոնի վրա գտնվող ազատ մասնիկը, մինչդեռ ֆերմիոնային մասը պարտադիր կերպով ներառում է սպին-ուղեծր փոխազդեցության անդամը:

[22]-ում ներկայացվելեն N=7 սուպերկոնֆորմ մեխանիկայի երկու տարբերակ՝ ակնհայտ so(7) և su(2)×su(2) R-սիմետրիաներով, որոնք ունեն բացառիկ G(3) դինամիկ սիմետրիա: Այս G(3) տեսությունները կառուցելու համար մշակվել է բացառիկ g(2) հանրահաշվի կովարիանտ ներդրման երկու նոր տարբերակ so(7) հանրահաշվում, ապա so(7)-ի ներդրման so(8)-ում: Արդյունքում, միատարր ձևով կառուցվել են երկու N=8 սուպերկոնֆորմ մեխանիկա՝ OSp(8|2) և F(4) գերկոնֆորմալ հանրահաշվներով և N=7,G(3) գերկոնֆորմ սիմետրիաներով:

[23]-ում կառուցել էն գերլիցքեր և Համիլտոնյաններ գերկոնֆորմալ մեխանիկայի բոլոր տարբերակների համար, որոնք կապված են osp(8|2), F(4), osp(4*|4) և su(1,1|4)-սուպերհանրահաշվարկների հետ: Ֆերմիոնային և բոզոնային դաշտերը դասավորված են գեներատորների մեջ, որոնք ընդգրկում են համապատասխան so(8),so(7),so(5)⊕su(2) և su(4)⊕u(1)սուպերկոնֆորմ հանրահաշվարկների R-սիմետրիայի հոսանքները: Այս R-սիմետրիայի գեներատորների բոզոնային և ֆերմիոնային մասերը առանձին-առանձին սահմանում են շարժման ինտեգռալները և կազմում են նույն հանրահաշվարկները:

[24]-ում ներկայացված է C^N-Սմորոդինսկի-Վինտերնիցի և դրա կորացած համարժեք CP^N-Ռոսոխատիուսի մոդելների ակնարկ՝ կենտրոնանալով դրանց պահպանվող մեծությունների, սիմետրիայի հանրահաշվի և քվանտացման վրա:

[25]-ում Քվանտային դաշտի տեսությունը տեղայնացված սոլիտոնների առկայության դեպքում ավելի բարդ է, քան վակուումային սեկտորի քվանտային դաշտի տեսությունը, հիմնականում սոլիտոնի զրոյական ռեժիմների արդյունքում: Այս աշխատանքում մենք

փորձում ենք հասկանալ, թե որքանով է այս իրավիճակը տարածվում ընդլայնված սոլիտոնների վրա: Այդ նպատակով մենք հստակորեն կառուցում ենք դոմենային պատի լարին կամ թաղանթին համապատասխանող քվանտային վիճակը՝ ուշադիր դիտարկելով զրոյական ռեժիմները: Սա արվում է ինչպես կոմպակտ, այնպես էլ անվերջ ընդլայնված սոլիտոնների համար: Որպես կիրառություն, մենք հաշվարկում ենք դոմենային պատի լարի տեղափոխման ռեժիմի դիֆերենցիալ հավանականությունը, տրված իմպուլսով, մուտքային ճառագայթման մեկ քվանտով գրգռվելու համար:

[26]-ում Մենք հաշվարկում ենք տիրույթի պատի սոլիտոնի միջակ լարվածությունը $\phi 4$ կրկնակի հորատանցքի մոդելում: Մեր արդյունքը համընկնում է Դաշենի, Հասլախերի և Նևեի (1974) 1+1d-ում և Ջայմունգայի, Սեմենոֆի և Զարեմբոյի
(1999) 2+1d-ում ստացված նախորդ արդյունքների հետ: Լրացուցիչ 25 տարվա ընդմիջումից հետո մենք ստացել ենք 0.0410959 մ3 միջակ լարվածության ուղղում 3+1d-ում: Այս դեպքում, ի տարբերություն ցածր չափողական դեպքերի, նույնիսկ նորմալ դասավորությունից հետո կան ուլտրամանուշակագույն դիվերգենցիաներ, որոնք պահանջում են ինչպես զանգվածի, այնպես էլ կապակցման հաստատունի վերանորմալացում: Մենք վերանորմալացրել ենք կապակցումը այնպես, որ արդյունավետ պոտենցիալում եռակետային փոխազդեցությունը տրվում է դրա ծառի մակարդակի արժեքով՝ զրոյական արտաքին իմպուլսների դեպքում:

[27]-ում Ընդհանուր (2+1)-չափական սկալյար մոդելում մենք դիտարկում ենք ճառագայթման մեկ քվանտի ցրումը տիրույթային պատի լարից, որը գրգռում կամ ապագրգռում է պատի ներքին ձևի ռեժիմը: Մենք այս երկու գործընթացները անվանում ենք Ստոքսի և հակա-Ստոքսի ցրում: Մենք հաշվարկում ենք այս գործընթացների հավանականության խտությունները քվանտային դաշտի տեսության առաջին կարգում՝ որպես մուտքային իմպուլսների և անկյունների ֆունկցիա: Մենք ներառում ենք ինչպես այն դեպքը, երբ միջադեպային մասնիկը փոխանցվում է, այնպես էլ այն դեպքը, երբ այն հետ է ցատկում: Մեր արդյունքները տրված են որպես նորմալ ռեժիմների և տարրական ֆունկցիաների վերջավոր-չափական ինտեգրալներ, իսկ թվային արդյունքները ներկայացված են $\phi 4$ կրկնակի ջրհորի մոդելի մասնավոր
դեպքում:

[28]-ում Վերջերս մենք պնդել ենք, որ 3+1 չափանի $\phi 4$ կրկնակի հորանի մոդելում տիրույթի պատը կարող է կառուցվել որպես սեղմված, կոհերենտ վիճակ, և որ մեկ օղակում այն ունի վերջավոր լարվածություն՝ տրված ընդհանուր, բայց չճշտված վերանորմալացման պայմաններում: Այս գրառման մեջ մենք հիմնավորում ենք այս պնդումը՝ ցույց տալով, որ գորտուկը վերջավոր է, և ինֆրակարմիր դիվերգենցիաները ճշգրտորեն չեզոքացվում են: Մենք նաև ուշադիր ենք անդրադառնում նորմալ կարգավորված զանգվածային մասշտաբի վերանորմալացմանը:
Ֆադեևը և Կորեպինը ընդգծել են, որ ուլտրամանուշակագույն դիվերգենցիաները չեզոքացվում են սոլիտոնային հատվածում, եթե դրանք չեզոքացվում են վակուումային հատվածում, երբ համապատասխան հաշվարկները նույնական են
ուլտրամանուշակագույնում: Հետևաբար, մենք վերանորմալացնում ենք վակուումային հատվածի դիվերգենցիաները՝ օգտագործելով Շրյոդինգերի պատկերի դեղատոմսը, որը սերտորեն արտացոլում է տիրույթի պատի հատվածում նմանատիպ
հաշվարկները:

[29]-ում 1+1 չափումներում հայտնի է, որ սոլիտոններին համապատասխանող քվանտային

վիճակները լավ նկարագրվում են կոհերենտ վիճակներով: Իր 1975 թվականի Էրիսեի դասախոսություններում Քոլեմանը նկատել է, որ այս կառուցումը չի տարածվում ավելի բարձր չափումների վրա, քանի որ կոհերենտ վիճակներն ունեն անվերջ էներգիայի խտություն: Նա մարտահրավեր է նետել ուսանողներին կառուցել ավելի բարձր չափումներում գտնվող սոլիտոններին համապատասխանող քվանտային վիճակները, մի խնդիր, որն այսօր էլ մնում է չլուծված: Այնուամենայնիվ, նույնիսկ 1+1 չափումներում ճիշտ քվանտային վիճակները իրականում տրվում են կոհերենտ վիճակների դեֆորմացիաներով: 3+1 չափումային $\phi 4$ կրկնակի փոսիկով մոդելում մենք ցույց ենք տալիս, որ առաջատար դեֆորմացիան, որը պարզապես սեղմում է, արդեն չեզոքացնում է տիրույթի պատի սոլիտոնի էներգիայի խտության մեկ օղակի դիվերգենցիան:

[30]-ից [32]-ում Հակաանդրադարձողականությունը կարևոր է արևային մարտկոցների արդյունավետությունը օպտիմալացնելու համար: Բարձր բեկման ցուցիչ ունեցող նյութերով արդյունավետ հակաանդրադարձման հասնելը մարտահրավեր է դրանց բնորոշ բարձր անդրադարձունակության պատճառով, ինչպես նկարագրված է Ֆրենելի հավասարումներով: Վերջին հետազոտությունները ուսումնասիրել են նանոանհարթ մակերևույթների ներուժը, որտեղ անհարթության պարամետրերը շատ ավելի փոքր են, քան ընկնող լույսի ալիքի երկարությունը: Այս ուշադրությունը փոխվել է ժամանակակից տեսական մոտեցումների ի հայտ գալու հետ մեկտեղ, որոնք ներառում են փոփոխված սահմանային պայմաններ: Մեր ուսումնասիրությունը հետազոտում է թույլ անհարթ անթափանց մակերևույթներ և ցույց է տալիս ցրման գործակիցների կանխատեսումների զգալի տարբերություններ՝ համեմատած հին տեսությունների հետ: Այս արդյունքները հաստատվում են նանոանհարթ սիլիցիումային թաղանթների վրա 300-400 նմ ալիքի երկարություններում կատարված փորձարարական արդյունքներով: Սպեկտրի այս հատվածում ամդրադարձումը զգալիորեն նվազում է, ինչը նոր հնարավորություններ է բացում արևային մարտկոցների տեխնոլոգիայի համար՝ սպեկտրի նախկինում անհասանելի շրջաններից էներգիան օգտագործելու համար:
Դիտարկվել է լիցքավորված մասնիկի ճառագայթումը, որը հատում է սալիկների հերթագայող կույտը օպտիկական տիրույթում: Ուսումնասիրվել են ինչպես անկարգ, այնպես էլ պարբերական կույտերը: Ցույց է տրվել, որ հերթագայող անկարգ և պարբերական կույտերի հատուկ տեսակի համար ճառագայթման խնդիրը կարող է լուծվել ճշգրիտ Բրյուստերի դիտարկման անկյունների համար՝ հետ և առաջ: Ճառագայթման ինտենսիվության սալիկների քանակից N2-ի ուժեղ կախվածությունը վերահաստատվել է անկարգ կույտի հատուկ դեպքում: Սա հանգեցնում է Բրյուստերի անկյունների ուժեղ ուղղորդվածության՝ կամ առաջ, կամ հետ՝ կախված կույտի պատահականության տեսակից: Պարբերական ֆոտոնային բյուրեղի որոշակի տեսակի դեպքում Բրյուստերի անկյան տակ դիտարկվող ճառագայթման ինտենսիվության համար ռելյատիվիստական մասնիկների մոտ հայտնաբերվում է E4 ուժեղ էներգետիկ կախվածություն: Մասնիկների էներգիայի հետագա աճը հանգեցնում է հագեցման: Համապատասխան ֆոտոնային բյուրեղի (PhC) գոտիական կառուցվածքը ունի գրաֆենի Դիրակի կոների նման վարքագիծ: Մենք առաջարկում ենք այս հատուկ տիպի 1D ֆոտոնային բյուրեղը որպես ռելյատիվիստական մասնիկների դետեկտոր կիրառելու համար:

III. Քվանտային ֆիզիկա,Վիճակագրային ֆիզիկա Տոպոլոգիական մեկուսիչներ, SPT փուլեր, Քվանտային Հոլի էֆֆեկտ, եռաչափ ինտեգրելիություն, Ոչ-կրիտիկական լարեր, ուժեղ փոխազդեցություններ,, կիրառական մաթեմատիկա, կենսաֆիզիկա [33]-[35].

[33]-ում Մենք կառուցել ենք երեք վիճականոց Potts-մոդելի եռանկյուն վանդակի վրա պաշտպանված $Z_3 $ համաչափություններով պարամագնիսների բաց եզրային վիճակների Համիլտոնյաները: Մենք ուսումնասիրում ենք այդ բաց եզրերով մանրադիտակային մոդելները և քննարկում համապատասխան դաշտի կոնֆորմալ տեսությունները և դրանց կենտրոնական լիցքերը:

[34]-ում Ուսումնասիրում ենք Հարրիսի պայմանի կիրառելիությունը երկչափ գրավիտացիայի առկայության պայմաններում: Հաշիվները տեղի են ունեցելՎուպերտալի և Պադեբորնի համալսարաններում: Հաշիվները հաստատում են մեր սպասելիք արդունքները, այն է որ Հարրիսի պայմանը
վերախմբավորման կարիք ունի գրավիտացիայի արկայության
դեպքում:

[35]-ում Ուսումնասիրվել ենք Deep Inelastic scattering պրոցեսները
կիրառելով ամպլիտուդների ֆակտորիզացիայի հիպոթեզը 4 չափանի
տարածությունում և երկայնական երկու չափում կիրառելով ինտեգրվող Sin-Gordon մոդելում ստացված արդյունքները:: Համեմատել ենք HERA-(1997-2005)-իկատարված e{+}p փորձերի արդյոնքների հետ, որտեղ չափվել են համապասխան ստրուկտուր ֆունկցիան և գտել ենք շատ լավ համնկնում է մեկը բաժանած x անգամ լոգարիտմ քառակուսի x վարքի հետ:Ինչը հաստատում է այս վարքի ունիվերսալ լինելը, բոլոր ասիմպտոտիկ ազատ
տեսությունների համար:

[36]-ում Կառուցվել են ներքին տոպոլոգիական կարգով օժտված պարաֆերմիոնային շղթաները, որոնք համապատասխանում են համաչափությամբ սպինային կլաստերներին: Ստացված համակարգերը օժտված են ներքին տոպոլոգիական փուլով: Պարաֆերմիոնային համակարգը տրոհվում է երկու առանձին ենթաշղթաների՝ յուրաքանչյուրն օժտված ներքին տոպոլոգիական կարգով, որը ժառանգվում է կլաստերի մոդելի համապատասխան SPT կարգից: Վերջինս նկարագրում է պարաֆերմիոնային զույգությունը: Բաց շղթայում հայտնաբերվել են չորս զրո էներգիայով եզրային մոդեր: Փակ համակարգի համար եզրերը ոլորվում են պարաֆերմիոնների ընդհանուր զույգությամբ: Ազատ սահմաններով համակարգը ունի տարածական զույգության համաչափություն զույգ քանակով սպինների դեպքում և PT համաչափություն, կենտ քանակով սպինների համար: Պարբերական սահմանային պայմաններով օժտված մոդելը ունի համաչափություն, որը բնութագրվում է հակաունիտար դիհեդրալ խմբով:

[37]-ից [39]-ում Կառուցվել և ուսումնասիրվել է սիմպլեկտիկ հանրահաշվի դեֆորմացիան Դանկլի օպերատորների միջոցով, որը նկարագրում է ընդհանրացված Կալոգերոյի մոդելի դինամիկական համաչափությունը: Այդ համակարգի ալիքային ֆունկցիաները, որոնք արտահայտված են դեֆորմացված սֆերիկ ֆունկցիաներով, դասակարգվել են ըստ կոնֆորմ խմբի չբերվող ներկայացումների:

Կառուցվել և ուսումնասիրվել են նաև կոնֆորմ խմբի այն ներկայացումները, որոնք առաջանում են ինտեգրալներից:
Ուսումնասիրվել են նաև կոմուտացման առնչությունները դեֆորմացված սիմպլեկտիկ հանրահաշվի գեներատորների միջև, որոնք նկարագրում են դինամիկական համաչափությունը կամայական արտացոլման խմբին համապատասխանող Կալոջերոյի համակարգի համար:

[40]-ում Մենք կառուցել ենք եռանկյուն վանդակի վրա տեղադրված չորս Վիճականոց Potts- մոդելի Z_4 համաչափություններով պաշտպանված պարամագնիսների բաց եզրային վիճակների Համիլտոնյաները:
Մենք ուսումնասիրում ենք այդ բաց եզրերով մանրադիտակային մոդելները և քննարկում համապատասխան դաշտի կոնֆորմալ տեսությունները և դրանց կենտրոնական լիցքերը: Աշխատանքը վերջացված է և կուղարկվի տպագրության այս տարի:

Մեն մոտ
Post-Doc և 21AG-1C024 դրամաշնորհում աշխատող Չենան Վեյը տպագրել է երեք աշխատանք **[41],[42],[43]** և մեկ աշխատանք Ա.Սեդրակյանի հետ ավարտման փուլում է:

[44]-ում Մենք ուսումնասիրել ենք ստրուկտուր ֆունկցիաները ճշգրիտ լուծվող մոդեներում ինչպիսին են O(N) սիգմա մոդելը SU(N) եվ Գրոս-Նեվյու մոդելը խորը ոչ առաձգական ցրման փոքր x-երի դեպքում: Այս երկու մոդեները ասիմպտոտիկ ազատ տեսություններ են:Մենք գտել ենք այս երկու տեսությունների համար ունիվերսալ պահվածք 1/xln^{2}(x) Բյորկենի փոքր x-երի համար:Այս արդյունքով մենք հաստատում ենք Բալոգ-Վայսի հիպոթեզը այս ունիվերսալ պահվածքի համար:Մոդելների երկրորդ խմբի համար -Sine-Gordon,sinh-Gordon եվ Z(N) Իզինգի մոդելների համար, մենք գտել ենք աստիճանային վարք x^{-lamda}.Sine-Gordon տեսության ստրուկտուր ֆունկցիաների հատուկ պահվածքը հնարավոր է լինի կրիտիկական 4D -QCD-ի համար:

[45]-ում ուսումնասիրվում են տարբեր կամրջող լիգանդներով մի շարք երկմիջուկային և եռմիջուկային հակաֆերոմագնիսական պղնձի (II) կոմպլեքսների սինթեզը, կառուցվածքային բնութագրումը և մագնիսական հատկությունները: Հետազոտությունը օգտագործում է հակաֆերոմագնիսական տեսական մոդելներ և փորձարարական տվյալներ՝ մագնիսական բնութագրերը, ներառյալ մագնիսացման պլատոները, մագնիսական ընկալունակությունը և խճճվածքի էնտրոպիան վերլուծելու համար: Արդյունքները ցույց են տալիս կոմպլեքսների մագնիսացման վարքագծի զգալի փոփոխություններ՝ բացահայտելով տարբեր 1/3 մագնիսացման պլատոներ և հագեցվածության կետեր, որոնք համապատասխանում են տարբեր փոխանակման փոխազդեցությունների: Խճճվածքի էնտրոպիայի վերլուծությունները հետագայում համադրում են այս մագնիսական անցումները՝ հնարավորություն տալով պատկերացում կազմել այս մետաղ պարունակող սպին-1/2 միացությունների քվանտային վարքագծի մասին ցածր ջերմաստիճաններում: Այս արդյունքները ընդգծում են լիգանդների նախագծման կարևորությունը պղնձի (II) կոմպլեքսների մագնիսական հատկությունների կարգավորման գործում՝ հիմք հանդիսանալով նմանատիպ հակաֆերոմագնիսական համակարգերի ապագա ուսումնասիրությունների համար: Պղնձի (II) իոնների 18 երկմիջուկային կոմպլեքսների մագնիսացումը, մագնիսական ընկալունակությունը և խճճվածքի էնտրոպիան (EE) գծագրվում են (տե՛ս ստորև նկարները) որպես մագնիսական դաշտի ֆունկցիա:



Fig. 2. Magnetization for dinuclear complexes of copper (II) ions as a function of magnetic field for the complexes reported in Table 1.



Fig. 3. Magnetic susceptibility for dinuclear complexes of copper(II) ions as a function of magnetic field, corresponding to the complexes listed in Table 1.



4

Fig. 5. Entanglement entropy for dinuclear complexes of copper(II) ions as a function of magnetic field for the complexes listed in Table 1.

եռամիջուկային հակաֆերոմագնիսական պղնձի (II) համալիրների մագնիսական ընկալունակության փորձարարական չափումները համեմատվում են վերլուծական տեսական արդյունքների հետ՝ որպես ջերմաստիճանի ֆունկցիա: Եվ նրանք լավ արդյունքներ են ցույց տվել: Ստորև ներկայացված են 4 եռամիջուկային հակաֆերոմագնիսական պղնձի (II) համալիրների մագնիսացման պլատոյի, մագնիսական ընկալունակության և խճճվածության էնտրոպիայի տեսական արդյունքները՝ որպես արտաքին մագնիսական դաշտի և ջերմաստիճանի ֆունկցիա:



Fig. 6. (**a**) Magnetization for complexes reported in Table 2 as a function of magnetic field. (**b**) Magnetic susceptibility varying magnetic field. (**c**) $T\chi$ as a function of temperature on a logarithmic scale. (**d**) Entanglement entropy as a function of magnetic field.

Մեր արդյունքները հաստատում են մագնիսացման սարահարթի, մագնիսական ընկալունակության գագաթների և խճճվածության էնտրոպիայի միջև կապը: Այս արդյունքները արժեքավոր պատկերացում են տալիս սպին 1/2 հակաֆերոմագնիսական մետաղներ պարունակող միացությունների քվանտային վարքագծի մասին և ընդգծում են հետագա փորձարարական ուսումնասիրությունների կարևորությունը՝ տեսական կանխատեսումները հաստատելու համար:

[46]-ում Մենք ուսումնասիրում ենք քվանտային խճճվածքի տարբեր տեսակներ օկտանուկլային հետերոմետաղական 3d/4f կոմպլեքսներում, որոնք նշանակվում են որպես Ni4+2 Gd 4+3 արտաքին մագնիսական դաշտի ազդեցության տակ, օգտագործելով ճշգրիտ անկյունագծայնացման մոտեցումը: Այս մոլեկուլային մագնիսները, որոնք կարող են արդյունավետորեն նկարագրվել Հայզենբերգի սպինային մոդելներով, բաղկացած են երկու նույնական Ni4+2 Gd 4+3 կուբանային ենթամիավորներից, որոնք կամուրջավորված են ացետատային և հիդրոքսիդային լիգանդներով:



FIG. 1. Schematic representation of the molecular structure of $Ni_4^{2+}Gd_4^{3+}$ complexes. Orange spheres represent nickel ions, while light blue spheres denote gadolinium ions. The intra-cubane exchange interactions are defined as follows: blue solid lines indicate the exchange interaction J_{nn} between Ni ions, black dotted lines represent the exchange interaction J_{ng} between Ni and Gd ions, and red dashed lines correspond to the interaction J_{gg} between Gd ions. The orange dashed line, labeled zJ', represents the inter-cubane interaction between the two identical $Ni_2^{2+}Gd_2^{3+}$ cubane units.



FIG. 6. (a) Temperature dependence of the 1–3 tangle negativity, $\mathcal{N}_{n1(n2g1g2)}$, for the complex (1) described by Hamiltonian (1) with parameters: $D_n = 0$, $J_{nn} = 1.53$ cm^{-1}, $J_{ng} = 0.0074$ cm^{-1}, $J_{gg} = -0.288$ cm^{-1}, $g_n = g_g = 2.0$ and inter-cubane interaction $zJ' = 0.0013$ cm^{-1}. (b) Magnetic field dependence of $\mathcal{N}_{n1(n2g1g2)}$ at various temperatures for the same parameter set as in panel (a). It is worth noting that, here, $\mathcal{N}_{n1(n2g1g2)}$ behaves identically to $\mathcal{N}_{n1n2}$.

Նկարներ 6(ա), 6(բ)-ում մենք պատկերել ենք Ni2+4 Gd3+4 հետերոմետաղական կոմպլեքսների (1) 1-3 խճճվածության գրաֆիկը՝ առանց միաիոնային անիզոտրոպիայի (single-ion anisotropy D=0): Նկար 6(ա)-ում մենք պատկերում ենք (1)-ի բացասական Nn1(n2g1g2)-ը որպես ջերմաստիճանի ֆունկցիա մագնիսական դաշտի տարբեր արժեքների համար: Nn1(n2g1g2) բացասականության ավելի հստակ դաշտային կախվածությունը տարբեր ֆիքսված ջերմաստիճանների համար ցույց է տրված Նկար 6(բ)-ում: Մեր արդյունքները ավելի լայն նշանակություն ունեն մոլեկուլային մագնիսներում, մասնավորապես՝ հետերոմետաղական 3d/4f կոմպլեքսներում, քվանտային խճճվածքի նախագծման և վերահսկման համար: Միաիոնային անիզոտրոպիայի՝ ամուր խճճվածքներ առաջացնելու և ուժեղացնելու ունակությունը խոստումնալից ուղի է ապահովում այս մագնիսական միացություններում նոր քվանտային առանձնահատկությունների ուսումնասիրության համար:

[47]-ում Ուսումնասիրությունը ներկայացնում է երեք հակաֆերոմագնիսական եռամիջուկային պղնձների (C24H46Cu3N8O10 (1), C24H48Cu3N6O5I2 (2), C21H40Cu3N6O4I2 (3)) քվանտային մագնիսական հատկությունների և խճճվածության վերլուծությունը: Եռամիջուկային պղնձե կոմպլեքսների՝ 1, 2 և 3 (ա), (բ) և (գ) համար համապատասխանաբար ներկայացված են լոգարիթմական բացասականությունը LN (կարմիր կոր), մագնիսացումը (նարնջագույն կոր) M և մագնիսական ընկալունակությունը χ (կապույտ կոր)՝ որպես արտաքին մագնիսական դաշտի h ֆունկցիա T = 0.3K ջերմաստիճանում:



Figure 2: The logarithmic negativity LN (red curve), magnetization (orange curve) M and magnetic susceptibility χ (blue curve) as a function of the external magnetic field h at $T = 0.3K$ for trinuclear copper complexes **1**, **2** and **3** (a), (b) and (c) respectively.

Նկար 3(ա)-ում մենք ներկայացնում ենք հակաֆերոմագնիսական եռամիջուկային նիկելային կոմպլեքս 4-ի ([Ni3(saltagtBu)(bpy)3(H2O)3]Cl · 3dmf · 3H2O) χT մագնիսական ընկալունակության մեր անալիտիկորեն ճշգրիտ արդյունքը՝ որպես ջերմաստիճանի T ֆունկցիա: Մենք նաև անալիտիկորեն հաշվարկել ենք նիկելային կոմպլեքս 4-ի մագնիսացումը, մագնիսական ընկալունակությունը և լոգարիթմական-բացասականությունը՝ որպես արտաքին մագնիսական դաշտի h ֆունկցիա նույն փորձարարական պարամետրերի համար՝ J = −35.9 սմ–1 և g = 2՝ T = 0.3K ցածր ջերմաստիճանում (տե՛ս նկար 3(բ)):



Figure 3: Magnetic susceptibility χT for trinuclear copper complex **4** versus temperature T (a). The logarithmic negativity LN (red curve), magnetization (orange curve) M and magnetic susceptibility χ (blue curve)as a function of the external magnetic field h for trinuclear nickel complex **4** at $T = 0.3K$ (b).

Այս կապը արժեքավոր պատկերացում է տալիս ցածր ջերմաստիճաններում մետաղական հիմքով սպին-1/2 և սպին-1 միացությունների քվանտային վարքագծի մասին, միաժամանակ ընդգծելով հետագա փորձարարական վավերացման անհրաժեշտությունը:

[48]-ում Մենք ուսումնասիրում ենք ադամանդե շղթաների վրա երկքառակուսի հանգույց-հանգույց փոխազդեցություններով սպին-1 հակաֆերոմագնիսական Իզինգ-Հայզենբերգի մոդելները՝ կենտրոնանալով գերկայուն կետերի և ցիկլերի ի հայտ գալու վրա (մանրամասների համար տե՛ս ստորև):



Figure 2: Structure of Ising and Ising-Heisenberg diamond chain. Gray circles are Ising spins,black ones are Heisenberg spins

Օգտագործելով կրկնվող հարաբերություններ՝ բազմաչափ ռացիոնալ արտապատկերումներ ստանալու համար, մենք վերլուծում ենք դրանց կայունությունը Լյապունովի առավելագույն ցուցիչի միջոցով: Սա բացահայտում է դինամիկ առանձնահատկությունների և մագնիսացման պլատոյի միջև հստակ կապը : Մագնիսացման և Լյապունովի առավելագույն ցուցիչների միջև կա ուժեղ կապ (տե՛ս ստորև):



Figure 4: (a) Magnetization plateau (b) Super-stable cycle;
$D = 2.0; J = 3.0; J_1 = 2.0; J_2 = 1.; K = K_1 = K_2 = 0.5; T = 0.0002;$

Մեր արդյունքները ընդգծում են, թե ինչպես է գերկայուն վարքագիծը արտացոլում համակարգի մագնիսական և դինամիկ հատկությունների հիմնական ասպեկտները տարբեր պարամետրերի ռեժիմներում:

[49]-ում Մենք առաջարկեցինք կամայականորեն շարժվող լիցքավորված մասնիկի էլեկտրական դաշտի գծերի խնդրի ընդհանուր լուծում: Գծային բևեռացված հարթ ալիքով շարժվող լիցքավորված մասնիկի համար լուծվել է էլեկտրական գծերի խնդիրը: Նման գծերի նկարազարդումները հետագծի հարթությունում ցույց են տրված Նկար 1-ում՝ ալիքի ամպլիտուդի երկու արժեքների համար:



Figure 1. Electric field lines for a charged particle moving in a plane wave: (a) $\alpha = 5$ and (b) $\alpha = 2$ (parameter α characterizes the intensity of the electric field E of the wave in units $\sqrt{2}mc\omega/e$, where m and e are mass and charge of particle, ω is wave angular frequency). The trajectory is represented in black color. In both cases, the number of lines depicted is 18 and they correspond to a uniform distribution of the initial direction of the line relative to the movement of the charge at the moment of observation. A line of dots emitted tangentially to the trajectory of motion is also noted (blue); the particle radiation field is concentrated near this line (see section 4).

Գծերը պարամետրացվեցին ժամանակի հետամնաց պահերին հետագծից արձակվող լուսային ազդանշաններով (կետերով): Այս պարամետրացումը լուծում է հետամնացության

հավասարումը, որը կապում է դիտարկման կետը հետագծում գտնվող կետի հետ: Այս աշխատանքում ցույց է տրվում, որ նմանատիպ պարամետրացումը թույլ է տալիս լուծել հետամնացության հավասարումը կամայական միաչափ բազմաձևության վրա, որը ձևավորվում է եռաչափ տարածության մեջ երկու մակերևույթների հատման միջոցով: Մանրամասնորեն քննարկվում է այն դեպքը, երբ միաչափ բազմաձևությունը երկու հարթությունների հատման միջոցով ձևավորված ուղիղ գիծ է: Գտնված պարամետրիկ լուծումը թույլ է տալիս հաշվարկել համապատասխան Լիենար-Վիխերտ դաշտը և պատկերացնել դրա դինամիկան ժամանակի մեջ: Տրված են դաշտի նկարագրադումներ/անիմացիաներ շրջանագծով շարժվող ռելյատիվիստական լիցքի շարժման հարթությանը զուգահեռ ուղիղ գծերի համար:

[50]-ում Մենք ուսումնասիրել ենք մրցակցային փոխազդեցությունների ազդեցությունը համախմբերի համարժեքության վրա: Մենք դիտարկել ենք միաչափ Իզինգ մոդելը՝ ֆերոմագնիսական միջին դաշտի փոխազդեցություններով և կարճ ազդեցությամբ գործակիցներով, որոնք կարող են լինել կամ ֆերոմագնիսական կամ հակաֆերոմագնիսական: Չնայած մոդելի հարաբերական պարզությանը, միկրոկանոնիկ համախմբում մեր հաշվարկները բացահայտում են հարուստ փուլային դիագրամ: Համեմատությունը կանոնիկ համախմբի համապատասխան փուլային դիագրամի հետ ցույց է տալիս փուլային անցման կետերի և գծերի առկայությունը, որոնք տարբեր են երկու համախմբերում: Որպես օրինակ, փուլային դիագրամի մի հատվածում, որտեղ կանոնիկ համախմբը ցույց է տալիս կրիտիկական կետ և կրիտիկական վերջնակետ, միկրոկանոնիկ համախմբն ունի լրացուցիչ կրիտիկական կետ և նաև եռակի կետ: Համախմբի անհամապատասխանության շրջանները սովորաբար տեղի են ունենում ավելի ցածր ջերմաստիճանների և մրցակցող փոխազդեցությունների ավելի մեծ բացարձակ արժեքների դեպքում:

[51]-ում Մենք դուրս ենք բերել միաչափ եռավիճակ Փոթսի մոդելի փուլային դիագրամը՝ կանոնիկ համախմբում՝ լրացուցիչ միջին դաշտի փոխազդեցությամբ: Ազատ էներգիան ստացվում է մոդելը սպին-1 Բլում-Էմերի-Գրիֆիթսի մոդելի վրա արտապատկերելով և այն լուծելով Հաբբարդ-Ստրատոնովիչի ձևափոխության և փոխանցման մատրիցի մեթոդի միջոցով: Վերջավոր ջերմաստիճանում հայտնվում է բարդ կառուցվածք՝ առաջին կարգի անցումների գծերով, երկու եռակի կետերով և կրիտիկական կետով: Փուլային դիագրամը երկչափ է, քանի որ կան երկու կարգավորելի պարամետրեր՝ ամենամոտ հարևանի կապը K և ջերմաստիճանը T: Մենք ցույց ենք տավել, որ փուլային դիագրամը չի ներկայացնում երկրորդ կարգի փուլային անցման գծեր, քանի որ կարգի պարամետրը սիմետրիա խախտող չէ: Հատկանշական է, որ մենք կարողացել ենք անալիտիկորեն որոշել առաջին կարգի փուլային անցման գծերից մեկը: Մենք նաև ապացուցել ենք, որ երբ ամենամոտ հարևանի կապը K-ն մեծ է և բացասական, առաջին կարգի անցման ջերմաստիճանը դառնում է ասիմպտոտիկորեն անկախ K-ից:

[52]-ում Մաքսինների ոչ գծային կլանումը փորձարարականորեն ուսումնասիրվել է մի շարք հրապարակումներում, և այս նոր 2D նյութերի կիրառումը լայնաշերտ գերարագ ֆոտոնիկայում արդեն ցուցադրվել է: Մասնավորապես, մաքսինները օգտագործվել են մոդելավորված մանրաթելային լազերներում բարձր կայունության ֆեմտովայրկյանային իմպուլսների ստեղծման համար: Տարբեր մաքսիններում սեսանելի-մոտակա ինֆրակարմիր ալիքի երկարության տիրույթում ի հայտ եկող օպտիկական ոչ գծայինությունները տեսականորեն բացատրվել են երկմակարդակ ատոմային համակարգում ոչ գծային կլանման հագեցվածության տեսության հիման վրա: Այս մոտեցումը պահանջում է որոշ անհայտ պարամետրերի համապատասխանեցման անհրաժեշտություն՝ կլանման հագեցման

ինտենսիվությունը որոշելու համար: Սակայն, այս մոտավորությունը հաշվի չի առնում մաքսինի գոտիական կառուցվածքը, և, հետևաբար, ոչ գծային կլանման հագեցման միկրոսկոպիկ բնույթը դեռևս հասկացված չէ: Այս աշխատանքում մենք օգտագործել ենք տիտանի կարբիդ մաքսինի գոտիական կառուցվածքի հաշվարկների հրապարակված արդյունքները և երկգոտային մոդելում կիրառել ենք խտության մատրիցայի տեսությունը՝ ոչ գծային կլանման գործակիցը ռեզոնանսային մոտավորությամբ հաշվարկելու համար: Զարգացված տեսության շրջանակներում բացատրվել են 1000 նմ-ից մինչև 1500 նմ մղման ալիքի երկարություններում ոչ գծային թափանցելիության վերաբերյալ վերջին փորձարարական արդյունքները, և բացահայտվել է կլանման հագեցվածության դինամիկան:

[53]-ում Բազմաչափ (d-չափավոր, d = 1-ից բարձր) մարզական լանդշաֆտում Քրոու-Կիմուրայի (CK) մոդելի ամբողջական լուծումը (միջին մարզականությունը և ավելցուկը) (մարզականությունը d հաջորդականություններից Համինգսի հեռավորությունների ֆունկցիա է) չլուծված խնդիր է: Չնայած միջին ֆիթնեսը ստացվել է, հնարավոր չէ ստանալ ստացիոնար բաշխման ավելցուկներ (բաշխման մաքսիմումի դիրքը d-չափավոր տարածությունում): Այստեղ մենք ձևակերպել ենք Սմերլակի d-չափավոր CK մոդելի տարբերակը և հաշվարկել ենք առավելագույն բաշխումներին մոտ բաշխումը: Վերջինս չի կարող լուծվել ստանդարտ CK մոդելի դեպքում:

[54]-ում Երբ էվոլյուցիոն դինամիկան տեղի է ունենում տատանվող միջավայրերում, ֆիթնես լանդշաֆտներում էվոլյուցիոն դինամիկայի որոշ դասական արդյունքներ պետք է վերանայվեն: Նման ոչ հավասարակշռված պայմաններում ադապտիվ էվոլյուցիայի հատկությունները կարող են շեղվել հավասարակշռության համակարգերում հիմնված սպասումներից: Այստեղ այս ոչ հավասարակշռված դինամիկայի կարևոր ներդրումը բխում է մոլեկուլային էվոլյուցիայի Քրոու-Կիմուրա մոդելում ասիմետրիկ մուտացիաներով երկրաչափական (Բերիի) փուլի առկայությունից: Հաշվի առնելով միայն ֆիթնեսի փոփոխությունները, ինչպես նաև ֆիթնեսի և մուտացիայի փոփոխությունները, ստացվում են Բերիի փուլի վերլուծական արտահայտություններ, որոնք ցույց են տալիս ուժեղ առանձնահատկություններ զանգվածային անցման կետերում: Երկչափ դեպքի համար վերլուծվում են նաև պարբերաբար փոփոխվող պարամետրեր: Քննարկվում են էվոլյուցիոն և պրեբիոտիկ սցենարների համար հնարավոր հետևանքները:

[55]-ում Էվոլյուցիան հաճախ դիտվում է որպես գործակալների միջև մրցակցություն ռեսուրսների համար, որն արդյունավետորեն բացասական էնտրոպիայի կամ ազատ էներգիայի օգտագործումն է ոչ հավասարակշռված վիճակներում: Այս աշխատանքում մենք ուսումնասիրում ենք, թե ինչպես են էնտրոպիկ թափոնների վերացման սահմանափակումները ձևավորում էվոլյուցիոն արդյունքները և ազդում մրցակցող գործակալների կողմից կատարված ընտրությունների վրա: Մենք հիմնվում ենք Բաբաջանյան-Կունին-Ալլահվերդյանի մոդելի վրա, որը ներկայացնում է գործակալները որպես ջերմային շարժիչներ խաղային տեսության միջավայրում: Մենք ներմուծում ենք համակարգի ընդհանուր սառեցման արագության սահմանափակում, որը բխում է ցածր ջերմաստիճանի թերմոստատի հետ դրա փոխազդեցությունից, որը ներկայացնում է համակարգի էնտրոպիկ թափոնների վերացումը: Մենք ցույց ենք տալիս, որ նման սահմանափակման կիրառումը փոփոխում է խաղի Նեշի հավասարակշռության լուծումները:

Մենք նույնականացնում ենք սցենարներ, որտեղ համակցված թափոնների վերացման սահմանափակումը գործակալներին մղում է դեպի տարբեր օպտիմալ ռազմավարություններ, քան անսահմանափակ դեպքում:

[56]-ում Այս աշխատանքում առաջին անգամ ուսումնասիրվել են խոլեստերինի հեղուկ բյուրեղների (ԽՀԲ) ֆոտոնիկ հատկությունները արտաքին մագնիսական դաշտում, պարույրի առանցքին զուգահեռ, սպեկտրի կարճ ալիքի գոտում, որտեղ հայտնաբերվում են բացառիկ կետեր (ԲԿ): Ցույց է տրվել, որ ԲԿ-ում չորս ալիքային թվերից երկուսի իրական մասերը շոշափվում են յուրաքանչյուրի հետ, և նրանց կեղծ մասերը հատվում են: Այստեղ անդրադարձը, անցումը և կլանումը ցույց են տալիս նույն արժեքները ԽՀԲ շերտի երկու սեփական ռեժիմների համար: ԲԿ-ի մոտ անիզոտրոպ կլանման ժամանակ հայտնվում են կետեր, որտեղ նկատվում են մագնիսական ազդեցությամբ հաղորդունակությունը և կլանումը: Հետազոտվել են նաև այս կետերի մոտ լույսի տեղայնացման առանձնահատկությունները, ինչպես նաև վիճակների ֆոտոնային խտության (ՎՖԽ) առանձնահատկությունները: ԲԿ մոտ ՎՖԽ-ը երկու սեփական ռեժիմների համար ցույց է տալիս զգալի փոփոխություններ, հատկապես մագնիս-օպտիկական ակտիվության տարբեր պարամետրերով:

[57]-ում Մագնիսական դաշտի մեծության որոշումը կարևոր տեղ է գրավում արտաքին մագնիսական դաշտերում ավելի բարձր ջերմաստիճանի ջրածնային պլազմայի ախտորոշման մեջ: Ջրածնային պլազմայում սպեկտրոսկոպիկ մեթոդների կիրառումը չափազանց դժվար է մեծ Դոպլերի պատճառով
և սպեկտրային գծերի Stark ընդլայնում: Մագնիսական դաշտի չափումը լույսի բևեռացման հարթության Ֆարադեյի պտույտի դիտարկմամբ հաղորդիչ էլեկտրոնների միջոցով կիրառելի է միայն բարձր մագնիսական դաշտերում բավականին խիտ պլազմայի համար: Այստեղ մենք տեսականորեն ուսումնասիրում ենք ջրածնի պլազմայում մագնիսական դաշտի մեծությունը որոշելու հնարավորությունը՝ հիմնված
Լույսի բևեռացման հարթության ռեզոնանսային Ֆարադեյի պտույտը պլազմայի մնացորդային բնական ատոմների միջոցով (կամ հատուկ ներմուծված կեղտոտ ատոմներով): Մենք նշում ենք, որ այս մեթոդը կարող է օգտագործվել նաև պլազմայում չեզոք բաղադրիչի խտությունը որոշելու համար, երբ հայտնի է մագնիսական դաշտը: Մեր ավելի վաղ ուսումնասիրություններում, միջին և տեղային մագնիսական դաշտը և չեզոք ատոմի խտությունը հայտնաբերվել են պլազմայում:

[58]-ում Քառաբևեռ ոսպնյակներով սխեմա է ներկայացված ռելյատիվիստական ստրոֆոտրոնային տիպի Ազատ էլեկտրոնային լազերի ստեղծման համար: Շարժման հավասարումները լուծված են և գտնված են հետագծերը: Ցույց է տրված, որ ներկայացված սխեմայում էլեկտրոնների շարժումը կայուն է երկու լայնական ուղղություններով էլ:

[59]-ում Ցինկի ֆերիտի նանոմասնիկների ազդեցությունը ցածր ծավալային կոնցենտրացիայում (1 × 10–4) 6CHBT և 5CB նեմատիկ հեղուկ բյուրեղների կառուցվածքային փոփոխությունների վրա, որոնք առաջացել են թույլ մագնիսական դաշտերով, հետազոտվել է մակերեսային ակուստիկ ալիքի (SAW) և լույսի փոխանցման (LT) տեխնիկայի միջոցով: Կիրառվող մագնիսական դաշտի հետևանքով առաջացած կառուցվածքային փոփոխությունները՝ ինչպես աճող, այնպես էլ նվազող ռեժիմներում, ինչպես նաև իմպուլսային փոփոխություններից հետո, ուսումնասիրվել են՝ չափելով SAW-ի թուլացման և LT-ի պատասխանները՝ օգտագործելով գծային բևեռացված լազերային ճառագայթ: Հետազոտվել է նանոմասնիկների ձևի (ձողեր, ասեղներ և կլաստերներ) և ջերմաստիճանի

ազդեցությունը կառուցվածքային փոփոխությունների վրա: Դիտվել է շեմային դաշտի և անցումային ջերմաստիճանի տեղաշարժ: Բացի այդ, փոշու տեսքով առանձին նմուշների մագնիսական հատկությունները հետազոտվել են՝ օգտագործելով M–H կորերը, M–T կորերը և XRD նախշերը: Բոլոր չափումներից ստացված արդյունքները համեմատվում են, և յուրաքանչյուր տեխնիկայի արդյունավետությունը՝ հաշվի առնելով նանոմասնիկների ձևի և կախոցի կայունության ազդեցությունը, գնահատվել է:
[60]-ից [63]-ում Դիտարկված է լիցքավորված մասնիկների թանձրուկի օնդուլյատորային ճառագայթման խնդիրը՝ հաշվի առնելով միջավայրի բևեռացումը: Դիսպերս միջավայրում, զրո անկյան տակ, բացի կոշտ ֆոտոններից, ձևավորվում են նաև փափուկ ֆոտոններ: Ստացվել է բանաձև ճառագայթված փափուկ և կոշտ ֆոտոնների թվի անկյունա-հաճախային բաշխման համար: Եթե փափուկ ֆոտոնների ալիքի երկարությունը մեծ է կամ հավասար ռենտգենյան ԱԷԼ-ի (ազատ էլեկտրոնային լազեր) պրոցեսում ձևավորված միկրոթանձրուկների երկայնական չափսից, միկրոթանձրուկները ճառագայթում են կոհերենտ: Հետևաբար, թանձրուկի ճառագայթումը կլինի մասնակի կոհերենտ: Արդյունքում ձևավորվում է ինտենսիվ, քվազի-մոնոքրոմատիկ և ուղղորդված ռենտգենյան ֆոտոնային փունջ, որոնք կունենան լայն գործնական կիրառություններ:

[64]-ում Մշակվել է բարակ լազերային փնջերի պրոֆիլավորման համակարգ, որը բաղկացած է երկու հիմնական բլոկից՝ տատանվող մետաղալարային ռեզոնատորից (ներառյալ ինքնագեներացման և ռեզոնատորի շարժման համակարգեր) և ֆոտոդիոդից՝ չափման և տվյալների ձեռքբերման շղթայով: Չափման համակարգի առավելությունը հետագայում բարելավվել է մոտ 100 նս լուծաչափով նոր էլեկտրոնիկայի մշակման և մետաղալարի տատանումների պարամետրերի հարմարեցման մեթոդի մշակման շնորհիվ: Նոր էլեկտրոնիկան թույլ է տվել լուծել չափման համակարգի ուշացումների խնդիրները և օգտագործել սկզբնական փորձարկման տվյալները առանց ժամանակային ուղղման: Նոր ֆիթինգի ալգորիթմը թույլ է տալիս միաժամանակ որոշել թելի տատանումների և՛ փուլը, և՛ պարբերությունը՝ հիմնվելով բացառապես ֆոտոդիոդի ազդանշանի վրա:
Տեսական ֆիզիկայի բաժանմունքում աշխատում է գիտությունների 15 դոկտոր, 26 թեկնածու, 1 ասպիրանտ և 1 ուսանող:
Պաշտոնների բաշխումը՝ 16 առաջատար գիտ. աշխատող, 5 ավագ գիտ. աշխատող, 15 գիտ. աշխատող և 4 կրտսեր գիտ. աշխատող, 1 ավագ ճարտարապետ, 1 խորհրդատու , 1 գործավար , 1 ավագ լաբորանտ և 1 լաբորանտ :

2025 թվականին բաժանմունքի աշխատակիցները տպագրել և պատրաստել են տպագրության ավելի քան 64 աշխատանք:



Հ. Վարդապետյանի անվան փորձարարական ֆիզիկայի բաժանմունք

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ, Հ.Հ. Մարուքյան

Հաշվետու ժամանակահատվածում **Փորձարարական ֆիզիկայի բաժանմունքն** իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Աշխատանքներ կատարված 75 ՄէՎ էներգիայով էլեկտրոնային գծային արագացուցչի վրա

2025 թվականին Ա. Ի. Ալիխանյանի անվան Ազգային Գիտական Լաբորատորիայի (ԱԱԳԼ) Փորձարարական Ֆիզիկայի Բաժանմունքի (ՓՖԲ) 75 ՄէՎ էներգիայով էլեկտրոնային գծային արագացուցիչում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ ավարտվեցին դիպոլային մագնիսական վերլուծիչի (անալիզատորի) տրամաչափման աշխատանքները, կատարվեց էլեկտրամագնիսի զզնումը, վերանորոգման և պրոֆիլակտիկ աշխատանքները, որոնք երկար տարիներ չէին անցկացվել բարդ ռադիացիոն պայմանների պատճառով,
- ✓ ստուգվեց մագնիսական անալիզատորի դաշտի համասեռությունը, մնացորդային և ցրված դաշտերը,
- ✓ կատարվեցին ռեգլամենտով պահանջվող յուրաքանչյուր սեանսից առաջ նախատեսված գծային համալիրի պրոֆիլակտիկ աշխատանքները:

Շնորհիվ այդ աշխատանքների 2025 թվականին բարեհաջող իրականացվել են հետևյալ գիտափորձերը.

Ամիս	Գիտախումբ
Հունիս	ՓՖԲ՝ Ա. Հակոբյան, Տ. Քոթանջյան
Հունիս	ՓՖԲ՝ Տ. Քոթանջյան
Հուլիս	ՓՖԲ՝ Ռ. Ավետիսյան
Հուլիս	ՓՖԲ՝ Տ. Քոթանջյան
Հուլիս	ԵՊՀ՝ Ա. Բալաբեկյան
Հուլիս	ՓՖԲ՝ Ռ. Ավետիսյան
Օգոստոս	ՓՖԲ՝ Տ. Քոթանջյան
Օգոստոս	ՓՖԲ՝ Ռ. Ավետիսյան
Նոյեմբեր	ՓՖԲ՝ Ա. Հակոբյան, Տ. Քոթանջյան
Դեկտեմբեր	ՓՖԲ՝ Տ. Քոթանջյան
Դեկտեմբեր	ՓՖԲ՝ Հ. Մկրտչյան
Դեկտեմբեր	ՓՖԲ՝ Տ. Քոթանջյան
Դեկտեմբեր	ՓՖԲ՝ Հ. Մկրտչյան

ԱԱԳԼ Ֆիզիկայի կիրառական հետազոտությունների բաժնի 240/2 խումբը նախապատրաստվում է ՓՖԲ-ի 100/9 արագացուցչային խմբի հետ համատեղ 75 ՄէՎ գծային արագացուցիչի էլեկտրոնային փնջերի կիրառմամբ կատարել պրոֆիլավորում իրենց կողմից մշակված տատանվող լարի մոնիտորներով XY-կայանի օգտագործմամբ:

Նախատեսվում է 240/2, 100/9 խմբերի և Institute for Nuclear Research, Dubna, Radiomics E1, Dubna, 75 ՄէՎ գծային արագացուցիչի էլեկտրոնային փնջերի կիրառմամբ կատարել ^{123}I բժշկական ռադիոիզոտոպի արտադրման նախագծի մշակում՝ հիմնված վանադիումի կոնվերտորի և քսենոնի թիրախի վրա:

Նախատեսվում է համագործակցել 240/2 խմբի հետ արագացնող սեկցիաների ջերմակայունացման նոր համակարգի նախագծի և իրագործման աշխատանքներում:

ՓՖԲ-ի հետազոտական խմբերը, որոնք ծավալում են իրենց գործունեությունը ցածր էներգիաների միջուկային ֆիզիկայի ուղղությամբ, նախապատրաստվում են գիտափորձերի էլեկտրոնային գծային արագացուցիչի վրա, միաժամանակ մշակելով նախկին չափումներում ստացված ֆիզիկական արդյունքները: Հետազոտության համար ընտրվում են ինչպես ֆունդամենտալ նշանակության, այնպես էլ կիրառական միջուկներ, որոնք ուսումնասիրվում են ակտիվացիոն անալիզի մեթոդով:

1. 2023 թ.-ին ԱԱԳԼ-ի ՓՖԲ-ի և ՄՀՄի-ի միացյալ ուժերով էլեկտրոնային արագացուցչի վրա 40, 50 և 60 ՄէՎ մաքսիմում էներգիաներով ֆոտոնային փնջերի օգտագործմամբ իրականացված բնական բիսմուտի թիրախի ֆոտոակտիվացման գիտափորձի արդյունքները հրատարակվել են 2025 թ.-ին “ The European Physical Journal A ” ամսագրում:
2. Արգելակային ֆոտոնների փնջերով իրականացվել են տերբիումի, թուլիումի, յուտեցիումի, տանտալի և բիսմութի թիրախների ճառագայթումներ չորս տարբեր էներգիաների դեպքում՝ Ee =28.8, 29.0, 30.5, 31.0 ՄէՎ: Սկսվել և շարունակվում է ճառագայթված թիրախների գամմա-սպեկտրաչափական վերլուծությունը:

   Ավարտին է հասցվել Ee = 40 ՄէՎ էներգիայի դեպքում նախկինում ճառագայթված թուլիումի թիրախի գամմա-սպեկտրաչափական վերլուծությունը: Առաջին անգամ չափվել են ^{169}Tm(γ,n)^{165}Tm , ^{169}Tm(γ,2n)^{166}Tm , ^{169}Tm(γ,3n)^{167}Tm , ^{169}Tm(γ,4n)^{168}Tm ֆոտոմիջուկային էքսկլյուզիվ ռեակցիաների կտրվածքները, ինչը թույլ է տվել ստուգելու լայնորեն կիրառվող TALYS 2.0 միջուկային ռեակցիաների մոդելի կանխագուշակումները և ընտրելու այդ մոդելի զանազան տարբերակներից ամենաօպտիմալները:
3. Ուսումնասիրվել է բժշկության մեջ օգտագործման համար քննարկվող 159Gd և 153Gd ռադիոնուկլիդների առաջացումը արգելակային փնջի միջոցով: Նշենք նաև, որ EXFOR միջուկային ֆիզիկայի տվյալների բազան առկա է միայն մեկ աշխատանքի տվյալներ: Գիտափորձը կատարվել է օգտագործելով 30 ՄէՎ, 40 ՄէՎ, 50 ՄէՎ և 60 ՄէՎ էներգիայի էլեկտրոնների արգելակային փնջերը: Որպես թիրախ օգտագործվեց 250 մկմ հաստությամբ բնական գադոլինիումը, որը բաղկացած է 7 կայուն իզոտոպներից՝ ^{152}Gd (0.20%), ^{154}Gd (2.18%), ^{155}Gd (14.80%), ^{156}Gd (20.47%), ^{157}Gd (15.65%), ^{158}Gd (24.84%), ^{160}Gd (21.86%), որպես գամմա արգելակային փնջի մոնիտոր՝ 40 մկմ հաստությամբ բնական պղնձի թիթեղներ: Արգելակային փնջի ստացման համար էլեկտրոնային փնջի դիմաց տեղադրվել է 2 մմ հաստությամբ տանտալե փոխակերպիչ (converter): GEANT4, TALYS 2.0 և EMPIRE 3.2 ծրագրերի միջոցով հաշվարկվել են միջին կշռացված ընդլայնական կտրվածքները ուսումնասիրվող նուկլիդների համար:

   Ճառագայթումից հետո կատարվել են հիմնական Gd և մոնիտոր Cu թիրախների սպեկտրոսկոպիկ չափումները բարձր մաքրության CANBERRA գերմանիում դետեկտորի միջոցով, որի տրամաչափման և էֆֆեկտիվության գնահատման համար օգտագործվել է ռադիոակտիվ աղբյուրների ամբողջական հավաքածու՝ բաղկացած ^{57}Co; ^{60}Co; ^{137}Cs, ^{109}Cd; ^{65}Zn; ^{22}Na; ^{133}Ba ռադիոակտիվ աղբյուրներից : Արդյունքների մշակումը կատարվել է GENIE 2000 ծրագրային փաթեթի միջոցով:

   Օգտվելով սպեկտրոմետրիկ տվյալներով և դետեկտորի միջոցով չափումներից հաշվարկվել է հոսանքով միջինացված ընդլայնական կտրվածքի արժեքները ^{195}Gd համար փնջի 30 ՄէՎ, 40 ՄէՎ, 50 ՄէՎ և 60 ՄէՎ էներգիաների դեպքում: Ստացված արդյունքները առավել մոտ են TALYS 2.0 կոդով հաշված տվյալների հետ:

   153Gd ռառիոնուկլիդի տվյալները դեռևս մշակման փուլում են, քանի որ նրա երկար կյանքի տևողությամբ պայմանավերված չափումները դեռ շարունակվում են:

Աշխատանքներ կատարված պրոտոնային C18/18 ցիկլոտրոնի վրա

1. GEANT և SRIM&TRIM ծրագրային փաթեթների օգնությամբ մոդելավորվել է պրոտոնային փնջի անցումը նախատեսված թիրախային համակարգով և հաշվարկվել են պրոտոնների փնջի էներգետիկական սպեկտրները բոլոր հետազոտվելիք թիրախներում: Թիրախների ճառագայթումը պրոտոնային փնջով հետաձգվել է և տեղափոխվել 2026 թ.՝ մինչև C-18/18 ցիկլոտրոնի պրոտոնային փնջատարի շարքից դուրս եկած վակուումային պոմպերի վերականգման աշխատանքների ավարտը:

Հետազոտություններ CERN միջազգային կենտրոնում

Շարունակվել են ԱԱԳԼ-ի երեք խմբերի պլանավորված աշխատանքները CERN LHC-ի CMS, ATLAS և ALICE գիտափորձերում: Ի լրացումն ընդհանուր աշխատանքների ընդունվել են նաև նոր պարտավորություններ և իրականացվել են նոր ծրագրեր.

Շարունակվել են աշխատանքները CMS-գիտափորձի և՛ ֆիզիկական անալիզի, և՛ սերվիսային աշխատանքների մասով, ինչպես նաև Ցածր ուժեղացման հեղհեղային դիոդների (LGAD) թեստավորման և սենսորների կարդացող էլեկտրոնիկայի մշակման աշխատանքները:

ԱԱԳԼ-ում զարգացվել են LGAD դետեկտորների թեստավորման և կարդացող էլեկտրոնիկայի մշակման աշխատանքները, որոնք իրականացվում են Է. Ֆերմիի անվան ազգային արագացուցչային լաբորատորիայի (FermiLab, ԱՄՆ) հետ ակտիվ համագործակցությամբ, և 2025թ. ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ Խմբի անդամների մասնակցությամբ FermiLab-ում իրականցվել են FCFD -չիպի երկրորդ մոդիֆիկացիայով հագեցած սթրիփային դետեկտորի թեստավորման աշխատանքները: Փորձարկումներն իրականացվել են՝ օգտագործելով ինֆրակարմիր լազերային ճառագայթման աղբյուր:
- ✓ FermiLab-ում մշակվել է կոսմիկական մյուոններով ETL (CMS EndCap Timing Layer) մոդուլի թեստավորման համակարգը: Այն կազմված է 2 սիլիցիումային ֆոտոբազմապատկիչներից, 2x2 կառուցվածքով LGAD սենսորով էլեկտրական շղթայից, թեստավորվող ETL-մոդուլից և բարձր ժամանակային լուծողականությամբ բազմականալ սիլիցիումային ֆոտոբազմապատկիչից, որը ծառայում է որպես տրիգգերային համակարգ: Սրա միջոցով հնարավոր եղավ չափել ETL-մոդուլի էֆեկտիվությունը, որը կազմել է շուրջ 30%:
- ✓ ԱԱԳԼ-ում ստեղծվող փորձարարական համակարգի կառուցման հարցում գրանցվել է զգալի առաջընթաց և այն շատ մոտ է ավարտուն վիճակին (600 և 1024 նմ ալիքի երկարությամբ լազերային թեստավորման համակարգ՝ փորձարարական ստենդ, 1մկմ լուծողականությամբ սենսորների դիրքի կառավարման հենակ, ցածր և բարձր լարման սնուցման աղբյուրներ (ավելի լավ բնութագրեր ուեցողները գնման փուլում են), DAQ համակարգ, համկցված փորձնական օսցիլոգրաֆ (փոխարինվվելու է ավելի լավ օսցիլոգրաֆով), ինչպես նաև արված է ծրագրային ապահովումը):
- ✓ Շարունակվել է խմբի ակտիվ մասնակցությունը CMS գիտափորձի սերվիսային աշխատանքներում, որով փակվել են խմբի պարտավորվածությունները CMS-ի նկատմամբ: Աշխատանքները իրականացվել են CMS գիտափորձի տվյալների բազայի արդիականացման, հադրոնային կալորիմետրի տվյալների մշակման, որակավորման և մոնիտորինգի համակարգի թարմացման ուղղությամբ, ինչպես նաև CMS-ում ծանր իոնների ֆիզիկայի համար Մոնտե-Կառլո գեներատորների և CMSSW միջավայրում

ծրագրային փաթեթների թարմացման ուղղությամբ:

Շարունակվում է խմբի ակտիվ ներգրավվածությունը CMS ֆիզիկական անալիզի խնդիրներում:Այս նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ✓ ավարտվել են 4b տրոհման կանալում Հիգգս մասնիկային զույգի (HH) որոնման աշխատանքները 2022-2023թթ. 13.6 ՏէՎ էներգիայով պրոտոն-պրոտոն բախումների ~62ֆբ-1 ինտեգրալ լուսատվությամբ փորձարարական տվյալներում: Այս աշխատանքը անալիզի ռազմավարության օպտիմալացումից հետո իրականացվել է կինեմատիկական երկու ռեժիմներում՝ «Merged» և «Resolved»: Դիտարկվել է HH-զույգի ծնման ոչ միայն հիմնական՝ գլյուոն-գլյուոն միաձուլման (ggF), այլև դրան հաջորդող վեկտոր-բոզոնային միաձուլման (VBF) մեխանիզմով HH-զույգի ծնումը, որի համար մշակվել է անալիզի առանձին կատեգորիա՝ VBF: Արդյունքները ներկայացվել են նշված պրոցեսի կտրվածքի համար վերին սահմանի գնահատմամբ՝ որը տրվել է Ստանդարտ մոդելի (ՍՄ) շրջանակներում կանխատեսվող կտրվածքի համեմատ:
- ✓ Միևնույն ժամանակ 95% վստահելիության աստիճանով տրվել է H-մասնիկի սեփական կապի հաստատունի թույլատրելի տիրույթը՝ –3.3 < κλ < +9.7, արտահայտված ՍՄ-ով կանխատեսած արժեքով՝ κλ = λ/λSM, որտեղ λSM-ը ՍՄ շրջանակներում H-մասնիկի սեփական կապի հաստատունն է (եռամասնիկ HHH՝ λHHH): Կատարվել է 2016-2018թթ. տվյալներում նույն անալիզի վերահաշվարկը նոր ալգորիթմներով, որի արդյունքում ~25% զգայնության աճ է գրանցվել նախկինում հրապարակված արդյունքների հետ համեմատած: Այս աշատանքն անցել է CMS-ի բոլոր փորձաքննությունները և հրապարակվել՝ CMS-PAS-HIG-24-010 (https://cds.cern.ch/record/2947325?ln=en
  Նաև պատրաստվել է հոդվածը ամսագրային տպագրության համար: Ընթանում են ~ 109 ֆբ-1
  ինտեգրալ լուսատվությամբ 2024թ. տվյալների մշակման աշխատանքները:

ATLAS (CERN) TileCal-ի տվյալների որակի վավերացման (Data Quality Validation) առցանց հերթափոխներ:

1. Տարբեր տեսակի մասնիկների, ներառյալ պիոնների, պրոտոնների և կաոնների մեկուսացված հադրոնային արձագանքի ուսումնասիրությունների շարունակում 30 ԳեՎ-ից բարձր էներգիաների դեպքում TestBeam միջավայրում՝ TileCal-ի 2-րդ փուլի արդիականացման ծրագրի համար, ներառելով մեքենայական ուսուցման (ML) և նեյրոնային ցանցերի (NN) վրա հիմնված նոր ու տարբերվող մոտեցումներ:
2. Z(νν)γ անալիզում nTGC ուսումնասիրության համար սիստեմատիկ անորոշությունների ներդրում:
3. Z(νν)γ անալիզում W(ℓν)γ հիմնական և այլընտրանքային նմուշների միջև առկա մեծ անհամապատասխանության խնդրի լուծում:
4. Չեզոք եռակի տրամաչափային կապերի (Neutral triple gauge coupling) ուսումնասիրությունները Z(νν)γ անալիզի շրջանակներում:
5. Աշխատեցի շիթերի Monte Carlo համեմատությունների վրա (Pythia8, Herwig7):
6. Պրոտոն–պրոտոնային բախումների ժամանակ ինկլյուզիվ շիթերի կտրվածքների և շիթերի զանգվածի կախվածության չափումներ՝ օգտագործելով CERN-ի ATLAS դետեկտորով Run-2 և Run-3 փուլերում ստացված տվյալները՝ տարբեր շառավղերի (R) համար: Արդյունքների համեմատում NNLO QCD տեսական կանխատեսումների հետ՝ ուժեղ փոխազդեցության մոդելների ճշգրտության ստուգման և ոչ-պերտուրբատիվ ֆիզիկական էֆեկտների ներդրման գնահատման նպատակով:

Շիթերի էներգիայի և զանգվածի տրամաչափման մեթոդների բարելավում՝ ապահովելու ATLAS դետեկտորում կատարվող ֆիզիկայի վերլուծությունների բարձր ճշտություն և հուսալիություն

7. Նոր Պայմանների տվյալների բազա և COMBAT. RUN4-ի համար կներդրվի նոր «Պայմանների տվյալների բազան» (Conditions Database), և արդեն սկսվել է դրա հաջորդ սերնդի գործիքների ու գրադարանների մշակումը (Նոր առաջադրանք): Զուգահեռաբար իրականացվում է COMBAT բոտի մշակումը RUN4-ի համար, որը նախատեսված է տրամաչափման գործողությունների ավտոմատացման և խելացի կառավարման համար:
8. CI/CD և Ավտոմատացում (Նոր առաջադրանք): GitLab CI-ի միջոցով Tile թողարկումների և TDAQ կախվածությունների ավտոմատացված կառավարման սահմանում՝ ներառյալ ամենօրյա (nightly) հավաքագրումները և միավոր թեստերը (unit tests):
9. Մոնիտորինգի համակարգերի արդիականացում (Նոր առաջադրանք): Հովացման համակարգի վահանակների (dashboards) միգրացիա InfluxDB-ից դեպի կենտրոնական DCS Grafana (PostgreSQL աղբյուրով) և փորձագետների պահանջների հիման վրա նոր վերլուծական գործիքների մշակում:
10. Դիմային (Front-end) էլեկտրոնիկայի մշակում, զարգացում՝ Ցածր լարման համակարգի (LVPS) համար
11. Phase II Upgrade: AuxBoard-ների արտադրական հավաքման և ընդունման փորձարկումների (Acceptance testing) վերջնականացում. QA ընթացակարգերի համար ավտոմատացված թեստերի ինտեգրում և թարմացում:
12. TileCal-ի DQL և DQV հերթափոխերի իրականացում:
13. CALO/FWD հերթափոխեր ATLAS դետեկտորի կառավարման սրահում:
14. TDAQ համակարգչային ադմինիստրացիա և ենթակառուցվածքների սպասարկում Point 1-ում. Point 1 տարածքում համակարգչային ենթակառուցվածքների անխափան աշխատանքի ապահովում, ներառյալ հասանելիության ծրագրերի (Access software), տեսախցիկների, անվտանգության համակարգերի և տեղեկատվական մոնիտորների տեխնիկական սպասարկումն ու կառավարումը:
15. Նախագծային և շինարարական աշխատանքներ Point 1-ում. Աշխատանք նախագծման և շինարարության ոլորտում՝ ուղղված Point 1 կայանի ենթակառուցվածքների բարելավմանը և մոնտաժման նախապատրաստմանը:
16. Տեխնիկական սպասարկում և օժանդակ բաղադրիչների մոնտաժ. Սպասարկման (maintenance) փուլում հասանելիության ենթակառուցվածքների (access parts) ձևափոխում և դետեկտորի նոր օժանդակ բաղադրիչների տեղադրում ու կարգաբերում:

26. ALICE խմբի գործունեության հիմնական ուղղություններն են՝ գիտափորձի տվյալների հավաքագրում, մշակում և ստացված արդյունքների նկարագրություն ֆենոմենոլոգիական մոդելների օգնությամբ: Ինչպես նաև՝ ճարտարագիտական աշխատանքներ կապված ALICE գիտափորձի ITS (Inner Tracking System) դետեկտորի արդիականացման հետ:
27. Սմբատ Գրիգորյանը շարունակել է մասնակցել K+,K+ կամ K-,K- մեզոնների զույգերի ֆեմպտոսկոպիկ կոռելիացիաների ֆիզիկայի ուսումնասիրությանը p-Pb և Pb-Pb բախումներում 5.02 ՏէՎ էներգիայի համար: Նա մշակել է ֆենոմենոլոգիական Blast-Wave-Tsallis-Power մոդելը, որը լավ նկարագրում է LHC և RHIC կոլայդերներում իրականացրած նույնական միջուկների բախումներում (Pb-Pb, Xe-Xe, Au-Au, U-U) չափված զանազան հադրոնների լայնակի իմպուլսի սպեկտրները, ինչպես նաև էլիպտիկ հոսքի մեծությունները v2: Այս աշխատանքի արդյունքները հրատարակվել են arXiv:2509.01807-ում և շուտով կհրատարակվեն նաև Phys.Rev.C ամսագրում:

28. Վադիմ Սամսոնովը շարունակել է իր աշխատանքը CERN-ում նվիրված ALICE գիտափորձի ITS3 դետեկտորի արդիականացմանը: Մասնավորապես,WP5 աշխատանքային խմբի կազմում նա կատարել է ITS3-ի տարբեր նախատիպերի ջերմային փորձարկումներ աերոդինամիկ թունելում: Ապահովել է այդ նախատիպերի կապը DAQ համակարգի հետ:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 185-ն է:

ԱԱԳԼ-COMPASS համագործակցություն

2025 թվականի ընթացքում խմբի աշխատանքները կենտրոնացված էին հետևյալ խնդիրների ուսումնասիրության վրա.

1. Drell-Yan պրոցեսի տվյալների վերլուծություններ

Պիոն-նուկլոն բախումներում երկու լեպտոնների ծնման պրոցեսի լայնակի սպինից կախված ազիմուտային ասիմետրիաների ուսումնասիրում. 2025 թվականին լայնակի սպինից կախված ասիմետրիաների (TSAs) ուսումնասիրության ավարտելը, որում խումբը առաջատար դեր է ունեցել, համարվում էր հիմնական նպատակներից մեկը: Սպինային (սպինից անկախ) ազիմուտային ասիմետրիաների չափումը Drell-Yan-ի պրոցեսում հանդիսանում է ամենադասական մոտեցումներից մեկը՝ ուսումնասիրելու նուկլեոնի սպինի եռաչափ կառուցվածքը և, ավելի կոնկրետ, լայնակի իմպուլսից կախված (TMD) պարտոնային բաշխման ֆունկցիաները (PDFs): Եզակի բևեռացված երկլեպտոնների ծնման կտրվածքը ֆունկցիա է հինգ (երեքը առաջատար, իսկ երկուսը ենթաառաջատար ”twist”) TSA-երից:

COMPASS գիտափորձը հավաքել է Drell-Yan-ի տվյալներ 2015 և 2018 թվականներին՝ օգտագործելով 190 ԳէՎ/վրկ. իմպուլսով π մեզոնների փունջը, որը ընկնում էր լայնակի բևեռացված պրոտոնային (NH3) թիրախի վրա: qT-ով կշռված Drell-Yan և կիսաինկլյուզիվ (SIDIS) TSA-երը, Մոնտե Կարլո հաշվարկների միջոցով ֆոնը գնահատելուց և բոլոր սահմանապակումները կիրառելուց հետո ապահովում են TMD PDF-ներին հասանելիությունը որպես այլընտրանքային և լրացուցիչ միջոցներ: Համապատասխան տեսական շրջանակը ձևավորվել է 1990-ականների կեսերին, և առաջին անգամ կիրառվել է COMPASS-ում՝ SIDIS տվյալներից Սիվերսի PDF-ի առաջին լայնակի մոմենտների (k_T^2 ինտեգրալների) դուրսբերման համար: Ինչպես դասական TSA-ների դեպքում, չափված Սիվերսի և տրանսվերսիտության wTSA-ները որակականորեն համընկնում են մոդելային կանխատեսումների և նշանի փոփոխության հիպոթեզի հետ: Վերլուծությունն ավարտվել է 2025 թ. փետրվարին, իսկ արդյունքները ուղարկվել են տպագրության:

Drell-Yan չբևեռացված կամ բևեռացումից անկախ ասիմետրիաները զանգվածի բարձր արժեքների տիրույթում: Երեք չբևեռացված ասիմետրիաներ (UA) առկա են Drell-Yan-ի կտրվածքում: Ի տարբերություն սպինից կախված ասիմետրիաների, UA-ի վերլուծությունը պահանջում է աքսեպտանսի ուղղումներ Մոնտե Կարլո հաշվարկների հիման վրա և քննարկվում է առանձին: Տարվում են աշխատանքներ տվյալների և մոդելավորման միջև հնարավոր անհամապատասխանությունները բացահայտելու և դիտվող տարբերությունների աղբյուրը հասկանալու համար:

2. 2022 թվականի կիսաինկլյուզիվ (SIDIS) տվյալների վերլուծություններ

2022 թվականի տվյալների վրա հիմնված SIDIS երկհադրոնային TSA-ների վերջնական արդյունքները. “Transversity” պարտոնային բաշխման ֆունկցիայի հասանելիության այլընտրանքային մոտեցումը ապահովվում է կիսաինկլյուզիվ խորը ոչ-առաձգական ցրման (SIDIS) ընթացքում դիհադրոնների ծնման չափումներով, մասնավորապես՝ հակադիր լիցքերով հադրոնային զույգերի (h^+h^-), որոնք առաջանում են

ընթացիկ (current) ֆրագմենտացիայի տիրույթում: Այս դեպքում “Transversity” PDF-ը զուգորդվում է քիրալ-կենտ դիհադրոնային ֆրագմենտացիոն ֆունկցիայի (DiFF) հետ, որը նկարագրում է լայնակի բևեռացված քվարկի չբևեռացված հադրոնների զույգի ֆրագմենտացիայի սպինից կախված կոմպոնենտը:

2022թ. տվյալներից Երկհադրոն Կոլինզ ասիմետրիայի համար ստացվում են բացասական (դրական) փոքր արժեքներ դրական (բացասական) լիցքավորված հադրոնների համար x-ի մեծ արժեքների դեպքում, որը լավ համընկնում է տեսական կանխատեսումների հետ:

Անալիզն ավարտվեց այս տարի և նախապատրաստվում է արդյունքներն ուղարկել՝ “Phys. Rev. Lett.” ամսագրում տպագրելու համար:

2022թ. տվյալներից K^0-երի SIDIS TSA ասիմետրիաների առաջին արդյունքները. 2025 թվականին մեկնարկած 2022 թվականի տվյալների նոր զանգվածային վերամշակման ընթացքում դիտվել է վերականգնված K^0 իրադարձությունների թվի աճ՝ մինչև 20%:

Վերամշակումը դեռևս շարունակվում է, և ներկայում խումբը կենտրոնացած է RICH դետեկտորի արդյունավետության և PID մաքրության որոշման համար նախատեսված հատուկ շրջանակի մշակման վրա: Սա անհրաժեշտ քայլ է՝ մինչև ամբողջական PID-հիմքով ֆիզիկական վերլուծություններին անցնելը, որոնք նախատեսվում են հաջորդ տարի:

ԱԱԳԼ խումբը բացի այդ մասնակցում է մի շարք այլ ուսումնասիրություններում, մասնավորապես φ-մեզոնի մյուոններով ծնման պրոցեսում Սպինային Խտության Մատրիցի Տարրերի (SDME) դուրսբերմամբ և ուսումնասիրությամբ: Խումբը ակտիվորեն ներգրավված է համագործակցության շրջանակում SIDIS, Drell–Yan և GPD վերլուծությունների հետ կապված մի շարք ծառայողական “service” առաջադրանքներում:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 2-ն է:

Հետազոտություններ Ջեֆերսոնի Լաբորատորիայի՝ JLab-ի A, B, C և D փորձարարական սրահներում

A սրահի նախագծեր, որոնց մասնակցում են AANL-JLab համագործակցության ներկայացուցիչները.

- ✓ GEP5 - Large Acceptance Proton Form Factor Ratio Measurements at 13 and 15 (GeV/c)2 .
- ✓ GMN - Precision Measurement of the Neutron Magnetic Form Factor up to Q2 = 18.0 (GeV/c)2 by the Ratio Method
- ✓ GEN2 - Measurement of the Neutron Electromagnetic Form Factor Ratio GnE/GnM at High Q2

2025 թ. –ին Ջեֆերսոն Լաբարատորիա, A սրահ են գործուղվել ԱԱԳԼ երկու աշխատակիցներ, որոնք մասնակցել են.

- 1656 կանալանի էլեկտրամագնիսական կալորիմետրի տեղադրմանը,
- կաբելային համակարգի միացմանը,
- front-end էլեկտրոնիկայի հավաքման և կարգավորման աշխատանքներին:

Աշխատակիցները մասնակցել են A սրահում ընթացիկ գիտափորձերի կատարմանը, մասնակցել են ~40 հերթափոխներին:

B սրահում Շարունակվել է RGA և RGB տվյալների հավաքման հատվածների ընթացքում ստացված E12-12-001, E12-12-001A, E12-11-103B, E12-07-104A գիտափորձերի տվյալների մշակումը.

1. **E12-12-001, E12-12-001A** "CLAS12 դետեկտորի վրա J/ψ մեզոնի շեմին մոտ ֆոտոծնման ուսումնասիրումը"**:**

2. **E12-07-104A.** **"**Դեյտրոն թիրախից Պրոտոն-Հակապրոտոն կոհերենտ էլեկտրաձնում":

Կատարվում են աշխատանքներ նվիրված մեզոնային վիճակների ուսումնասիրմանը, որոնք տրոհվում են $p\bar{p}$ բարիոնային վիճակներին: Ռեակցիան լրիվ էքսկլուզիվ է և իրականացվել է դեյտրոնի վրա կոհերենտ ֆոտոծնման միջոցով: Դիտարկվում է հետևյալ լրիվ էքսկլուզիվ, կոհերենտ ֆոտոծնման ռեակցիան. $\gamma d \rightarrow ep\bar{p}d$, որտեղ դեյտրոնի ճշգրիտ նույնականացման համար օգտագործվում են EC (Electromagnethic Calorimeter) դետեկտորից ստացված էներգետիկ բաշխումները:

Աշխատանքի նպատակն է իրականացված գիտափորձերի շրջանակներում ուսումնասիրել հադրոնային վիճակներ, մասնավորապես՝ որոնք տրոհվում են պրոտոն-հակապրոտոն զույգի, ինչպես նաև պիոն-հակապիոն զույգի: Այդ նպատակով ուսումնասիրվում են լրիվ էքսկլուզիվ և կիսա-ինկլուզիվ ցրումները դեյտրոնային թիրախի վրա:

ԱԱԳԼ-Jlab համագործակցության խումբը կատարել է նաև սերվիսային աշխատանքներ.

- Մասնակցություն ALERT փորձի տվյալների հավաքմանը (16 հերթափոխ):
- Շարունակվել են էլեկտրամագնիսական կալորիմետրի համար նոր ֆոտոէլետրոնային բազմապատկիչների ստուգման աշխատաքները, որոնք իրականցվել են անմիջապես JLab-ում: Աշխատանքի նպատակն էր՝ ստուգել նոր ՖԷԲ-երի աշխատանքային կարգավորումները և գրանցման էֆետիվությունները տարբեր լարումների համար: Ստուգումները ներառում էին ազդանշանի ինտեգրալի վերլուծութուն տարբեր լարումների համար:
- Կատարվում են CVT և BMT դետեկտորների վրա աշխատանքեր: Կատարվում են դետեկտորի հավասարեցման և էֆեկտիվության գնահատման աշխատանքներ: Պարբերաբար մշակվում և փորձարկվում են դետեկտորի հավասարեցման, և որպես հետևանք՝ դետեկտորի էֆեկտիվության գնահատում: Աշխատաքների նպատակն է՝ օգտագործելով հավասարեցման և էֆեկտիվության գնահատման մշակված մեթոդները, ճշգրտել և արդյունավետ օգտագործել ստացված փորձարարական տվայլները: Ընթացիք տարում կատարվել են դետեկտորի էֆեկտիվության գնահատում՝ օգտագործելով Jlab-ում մշակված մեթոդը:

2025 թվականին ԱԱԳԼ-Jlab համագործակցության խումբը, ինչպես նախորդ տարիներին, մասնակցել է Թոմաս Ջեֆերսոնի անվան լաբորատորիայի հետ համատեղ C սրահում կատարվող գիտական ծրագրերին: Խումբը կարևոր ներդրումներ է ունեցել հետևյալ աշխատանքներում.

Մասնակցելէ Jlab-ի C սրահի HMS/SHMS և NPS սպեկտրոմետրներով E12-11-107, E12-11-117, E12-06-104 և E12-24-001 գիտափորձերի կատարմանը և ստացված տվյալների On-Line/Of-Line մշակմանը

E12-11-107 գիտափորձի նպատակն էր՝ միջին ծանրության միջուկների կառուցվածքային ֆունկցիաների և EMC էֆեկտում կարճ-տարածության կոռելյացիաների

(SRC) ուսումնասիրումը: 20սմ հեղուկ LD2 թիրախով, I ≈ 0.3-1.5 μA հոսանքի և E=10.5 GeV էներգիաի էլեկտրոնային փնջով, կուտակվել է անհրաժեշտ քանակի տվյալներ d(e,e'ps) ռեակցիայի համար, օգտագործելով HMS-ը և SHMS-ը՝ ցրված էլեկտրոնների գրանցման համար, և Large Acceptance Detector (LAD) + GEM սարքերը՝ Spectator պրոտոնների գրանցման համար: E12-11-107-ի չափումները տևեցին մինչ հուլիսի 14-ը, հետո սկսվեցին տվյալների մշակման աշխատանքները:

E12-16-104 գիտափորձի նպատակն էր՝ չափել վիրտուալ ֆոտոնի լայնական և երկայնական բևեռացված բաղադրիչներով պայմանավորված կտրվածքների $R=\sigma_L/\sigma_T$ հարաբերակցությունը համարյա ինկլյուզիվ խորը ոչ-առանձգական ցրման SIDIS պրոցոսում: Որպես այս գիտափորձին սերտ կապակցված՝ կատարվեց նաև E12-24-001-ը, որը հայտնի է որպես "nuclear-R-SIDIS". Այս գիտափորձում նույնպես ուսումնասիրվում է լիցքավորված π մեզոնների SIDIS էլեկտրաձնման կտրվածքների $R=\sigma_L/\sigma_T$ հարաբերության կախվածությունը x, Q2 և z կինեմատիկական պարամետրներից, և հարաբերության միջուկային կախվածությունը: Չափումներում օգտագործվել է HMS սպեկտրոմետրը՝ ցրված էլեկտրոնների, իսկ SHMS-ը՝ լիցքավորված պիոնների ($\pi^{\pm)}$ գրանցման համար, ինչպես նաև կրիոգեն LH2, LD2 և C, Al, Cu միջուկային թիրախները: Չափումներն ավարտվեցին 2025 թվականի սեպտեմբերի 3-ին, երբ կատարվեց նախատեսված ծրագրի մոտավորապես 50%-ը: Այժմ ընդանում են տվյալների տեսակավորման, սանդղավորման և մշակման աշխատանքները:

Հաշվետու ժամանակաշրջանում (2025թ.) ԱԱԳL-Jlab համագործակցության անդամները մասնակցել են D սրահում կատարվող GlueX գիտափորձի հետևյալ աշխատանքներին.

1. D սրահում նախորդ տարիներին կառուցված ECAL-ի գործարկման համար կատարվել են մի շարք
աշխատանքներ.
- ECAL LMS-ի մնացած բաղադրիչները տեղադրվել են գործարկման մեկնարկից առաջ:
- ECAL-ը լիովին փորձարկվել է LMS-ի և տիեզերական ճառագայթների միջոցով, բոլոր մոդուլները
գործարկվել են նախքան տվյալների հավաքման սկսելը ֆոտոնային փնջով:
- Բոլոր տրիգերները, ներառյալ ECAL-ը և FCA-ը, փորձարկվել են գործարկումից առաջ, որը թույլ է տվել
փնջի գործարկման ժամանակ տվիալների հավաքումը իրականացնել առանց ուշացումների:
- ECAL-ի սկզբնական բարձր լարման կարգավորումները որոշվել են տիեզերական ճառագայթների տվյալների միջոցով:
- Կատարվել են բազմակի բարձր լարման կարգաբերումներ՝ օգտագործելով Կոմպտոնի ցրման և π0-ի գրանցման տվյալները, ինչի արդյունքում տրամաչափման գործակիցները հավասարեցվել են:

3. Հեռավար մասնակցել են 16 հերթափոխների GlueX-II +JEF գիտափորձերում:

GlueX-II: an extension of the GlueX spectroscopy program at high intensity and with enhanced particle
identification.

JEF: The JLab Eta Factory Experiment: The JEF program aims at performing precision measurements
of various η and η′ decays with emphasis on rare neutral decays.

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 17-ն է:

Չերենկովյան դիտակների օգնությամբ աստղաֆիզիկական աղբյուրների ուսումնասիրում (H.E.S.S.)

ԱԱԳԼ-ի ՓՖԲ-ի Շատ բարձր էներգիաների (ՇԲԷ) գամմա-ճառագայթների աստղաֆիզիկայի խումբը 2025 թ. շարունակել է իրականացնել հետազոտություններ գամմա-աստղաֆիզիկայի ու տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բնագավառներում: : Խումբը շարունակել է մասնակցել H.E.S.S. (High Energy Stereoscopic System) համագործակցության աշխատանքներին, ուսումնասիրել է 100 ԳԷՎ–ից ցածր էներգիաների տիրույթում չերենկովյան պատկերների վերլուծության առանձնահատկությունները, մշակել է միայնակ էլեկտրոնից կամ ֆոտոնից առաջացած (սկզբնավորված) էլեկտրամագնիսական հեղեղների երկայնական զարգացման անալիտիկ մոտարկման նոր մեթոդ ՝ «Ա և Բ մոտարկումների» (Approximation A, B) շրջանակներում:

2025 թ. շարունակվել է H.E.S.S. համագործակցության գիտական ծրագրի իրականացումը՝ գրանցվել են տարբեր դասերի աստղաֆիզիկական աղբյուրների ՇԲԷ γ-ճառագայթման հոսքեր, և ուսումնասիրվել են դրանցում ընթացող ֆիզիկական երևույթները, մասնավորապես՝

- Կազմվել ու ամփոփվել է H.E.S.S.-ի կողմից իրականացված առաջին արտագալակտիկական գամմա-ճառագայթային շրջահայության (HEGS, H.E.S.S. Extra- galactic Survey) արդյունքները: Շրջահայությունն ընդգրկում է արտագալակտիկական երկնքի 2004-2012 թթ. դիտումները, որոնք իրականացվել են H.E.S.S.-ի առաջին փուլի (H.E.S.S.-I) ընթացքում, երբ դիտակների համակարգը բաղկացած էր 12 մ տրամագիծ ունեցող 4 պատկերային մթնոլորտային չերենկովյան դիտակներից (ՊՄՉԴ):
- Շարունակվել են հետազոտությունները 100 ԳԷՎ-ից ցածր էներգետիկ տիրույթում գամմա հեղեղների չերենկովյան պատկերների առանձնացման մաթեմատիկական նոր, ավելի արդյունավետ եղանակ մշակելու ուղղությամբ: Այդ նպատակի համար օգտագործվել է Cherenkov Telescope Array (CTA) ծրագրի Large-Sized Telescope (LST1) ՊՄՉԴ-ի համար մոդելավորված բանկը: LST1 դիտակը տեղակայված է Իսպանիայի Լա-Պալմա կղզու վրա: LST1 դիտակի նշված բնութագրիչները հաշվի են առնվել մոդելավորված բանկը ստեղծելու ժամանակ: Բանկը գեներացվել է օգտագործելով մաթեմատիկական մոդելավորման փաթեթ, որն ընդգրկում է մթնոլորտային հեղեղի զարգացումը նկարագրող MOCCA (MOnte-Carlo CAscades program by A.M.Hillas) ծրագիրը, ՊՄՉԴ-ների օպտիկական արձագանքը մոդելավորող Ray Tracing ծրագիրը, ինչպես նաև գշերային երկնքի ֆոնի մոդելավորման և չերենկովյան պատկերների պարամետրերի հաշվարկման ծրագրերը:
- Մշակվել է անալիտիկ նոր մոտարկում՝ գամմա-քվանտից կամ էլէկտրոնից առաջացած էլեկտրամագնիսական հեղեղների երկայնական զարգացման նկարագրման համար՝ «Ա և Բ մոտարկումների» (Approximation A, B) շրջանակներում:

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 3-ն է:

Մասնակցություն EIC համագործակցության աշխատանքներին

Էլեկտրոն-իոնային կոլայդերը (EIC), որն այժմ կառուցվում է ԱՄՆ Բրուքհեյվենի ազգային լաբորատորիայում (BNL), լինելու է մասնիկների եզակի արագացուցիչ, որտեղ էլեկտրոնները բախվելու են պրոտոնների և միջուկների հետ՝ նուկլոնի ներքին կառուցվածքը մանրակրկիտ ուսումնասիրելու համար: EIC-ի գիտական ծրագիրը ներառում է բարձր էներգիայի ֆիզիկայի ամենակարևոր և հիմնական հարցերը, ինչպիսիք են՝ նուկլոնի սպինի ծագումը, նուկլոնի և միջուկի եռաչափ կառուցվածքը, գլյուոնի դերը միջուկի կառուցվածքում,

հադրոնային զանգվածի ծագումը, Ճշգրիտ էլեկտրա-թույլ փոխազդեցությունը և ստանդարտ մոդելից դուրս ֆիզիկան:

ԱԱԳԼ-ն EIC-ի ֆիզիկական ծրագրին և նրա էլեկտրամագնիսական կալորիմետրի նախագծման և կառուցման աշխատանքներին միացել է 2020 թվականին: Տեղում աշխատանքները հիմնականում կատարվում են ԱԱԳԼ-ի դետեկտորների և մեթոդիկ ուսումնասիրությունների լաբորատոր սենյակում: Ընթացիկ տարում սենյակը դարձյալ համալրվեց ժամանակակից էլեկտրոնիկայի նոր բլոկներով եւ սարքավորումներով: Խմբում կատարվել են էլեկտրամագնիսական կալորիմետրին վերաբերվող մոդելային հաշվարկներ, կալորիմետրի նախատիպի կառուցում եւ ուսումնասիրում:

Ուսումնասիրվել են PbWO4 բյուրեղների բնութագրերը բյուրեղների որակը և չափսերը, օպտիկական թափանցելիությունը, գրանցված լույսի ելքը և այլն

ԱԱԳԼ-ում նախագծվել և կառուցվել է 4×4 շարվածքով, PbWO4 բյուրեղներով կալորիմետրի նախատիպ: Այն մանրամասն ստուգվել է կոսմիկական մյուոններով, հետագայում կստուգվի նաև 75 ՄէՎ էլեկտրոնային գծային արագացուցչի փնջով: Նախքան նախատիպի հավաքումը պատրաստվել են բոլոր մեխանիկական մասերը, չափվել և ընտրվել են PbWO4 բյուրեղները, ստուգվել են ՖԷԲ-ները և նրանց բարձր լարման բաժանիչները: Նախապատրաստվել են ազդանշանային և բարձր լարման մալուխները, էլեկտրոնիկան և DAQ համակարգը:

ՖԷԲ-ի ազդանշանները գրանցվում են տվյալների հավաքման էլէկտրոնային համակարգով: Դրանք թվայնացվում են 12 բիթ ինտեգրող տեսակի CAEN V792N QDC անալոգ-թվային փոխարկիչով: Տվյալների հավաքման և գրանցման ծրագիրը հիմնված է CAEN ֆիրմայի ընդհանուր կոդի վրա, որը նախատեսված է «CAEN VME to USB-2.0/Optical Link Bridge» մոդդուլի միջոցով QDC, TDC և դիսկրիմինատորների հետ աշխատելու համար: Մեր դեպքում այն հարմարեցված է QDC-ի հետ աշխատելուն: Այն տեղակայված է Fedora Linux օպերացիոն համակարգի տակ աշխատող համակարգչի վրա, որը կցված է վերահսկող մոդուլին USB տիպի մալուխով: Հավաքված տվյալները մշակվում են ROOT տվյալների մշակման ծրագրային փաթեթով:

Նախատիպը ուսումնասիրվել է կոսմիկական ճառագայթներով: Կոսմիկական մյուոններից տրիգեր ձևավորելու համար օգտագործվել է երկու միանման սցինտիլյացիոն հաշվիչներ՝ տեղակայված դետեկտորից վերեւ եւ ներքեւ: Այս հաշվիչների ազդանշաններն, անցնելով 20 մՎ շեմով “CAEN 16 Channel N843 CFD” մոդուլով, ձևավորում են 40 նվ տևողության NIM ստանդարտի ազդանշաններ, որոնք հաջորդ “N455 Logic Unit” համընկման մոդուլում առաջացնում են 120 նվ լայնության դարպաս (Gate)՝ QDC լիցք-թվային փոխարկիչի համար:

Չափման արդյունքները հրատարակվել են “Journal of contemporary physics(Armenian Academy of Sciences)” ամսագրում:

Ըստ նախնական ծրագրի նախատեսվում էր իրականացնել J/ψ մեզոնների վերականգնում ePIC դետեկտորում գեներացված դեպքերը մշակելիս: Սակայն ստացված տվյալները ցույց տվեցին, որ Pythia գեներատորում էլեկտրոն–պրոտոն փոխազդեցությունները դեռևս ամբողջությամբ ներդրված չեն, ինչի հետևանքով գեներացված նմուշներում J/ψ մասնիկների քանակը սակավ է: Այս պատճառով կատարվել է D^0 մեզոնների վերականգնում $K^-\pi^+$ տրոհման միջոցով՝ գլյուոնների ասիմետրիայի բնութագրման նպատակով: Մոնտե-Կառլո գեներացված մասնիկների բաշխումներում ներդրվել են փորձնական ասիմետրիաներ ֆիքսված (0.05) ամպլիտուդով, որոնք հետագայում վերականգնվել են $K^-\pi^+$ զույգերի միջոցով

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 2-ն է:

Ռեալ և վիրտուալ ֆոտոններով միջուկների ճեղքման և ֆրագմենտացիայի ուսումնասիրություններ

ՓՖԲ-ի խումբը հիմնականում կենտրոնացված է Ռադիո հաճախականություններով ղեկավարվող գերճշգրիտ ժամանակաչափի մշակման և կիրառությունների վրա: Մասնավորապես, պլանավորվում են հիպերմիջուկների հետազոտություններին նվիրված գիտափորձեր, կատարվում են նանոկառուցվածքների և այլ նյութերի ֆոտոէմիսսիայի ժամանակային հատկությունների ուսումնասիրություն պիկովայրկյանային տիրույթում, մշակվում է բժշկությունում կիրառությունների մեթոդաբանություն: Բացի դրանից, խումբը զբաղվում է ցածր ճնշման համեմատական խցիկների մշակմամբ և կառուցմամբ:

Շարունակվել են ՌՀ թայմերի տեսական և փորձարարական ուսումնասիրությունները: Հիմնական փորձարարական ուսումնասիրությոնները կատարվում են լաբորատորիաուսմ, NKT Origami ֆեմտոֆայրկյանային լազերի հետ սինխրոնիզացված հատուկ ստեղծված համակարգի միջոցով (Նկ. 1): Այն ներառում է լազեր, ՌՀ ժամանակաչափ, ՌՀ գեներատոր, ՌՀ ուժեղացուցիչ և այլ կոմպոնենտներ և թույլ է տալիս անմիջապես չափել տարբեր կոմպոնենտների ազդեցությունը դետեկտորի ժամանակային լուծողականության վրա:

Մասնավորապես, ուսումնասիրվել են տարբեր տեսակի նանոկառուցվացքների ֆոտոէմիսսիայի ժամանակային հատկությունները, ցույց է տրվել, որ որոշ 2-Դ նյութերի համար, մասնավորապես գրաֆենի, նկատվում է մինչև նանովայրկյաններ տևող ֆոտոէմիսսիայի ուշացում: Նկ. 2-ում բերված են փուլային և ժամանակակային բաշխումներ 3 նյութերի համար՝ ձախից աջ. ոսկու բարակ շերտ, MoS2, գրաֆեն: Հստակ երևում է, որ ոսկու համար ֆոտոէմիսսիան, չափման ճշտությամբ, ակընթարթային է, մինչդեռ MoS2-ի և գրաֆենի համար կան ուշացող դեպքեր, ինչը կարելի է մեկնաբանել որպես տաք կրիչների կյանքի տևողության բաշխումներ:

Միևնույն ժամանակ կառուցվել է առանձին համակարգ, որի միջոցով կատարվում են դետեկտորի ներքին կոմպոնենտերի ուսումնասիրություն և կատարելագործում: Մասնավորապես, ուսումնասիրվում է սեփական մշակված ֆոկուսացման համակարգը, որը թույլ կտա բարձրացնել երկրորդական էլեկտրոնների գրանցման էֆեկտիվութունը:

Բացի ՌՀ ժամանակաչափին նվիրված աշխատանքներին կատարվել են տեսական հետազոտություններ, որտեղ ուսումնասիրվել են.

- Պարուրաձև շեղիչի հատկությունները,
- Բաղադրյալ զարկերը (ԲԶ, composite pulses),
- Բարձր ճշգրտության, կայուն քվանտային դարպասները (quantum gates),
- Գերլայնաշերտ (ultra-broadband), գերնեղաշերտ (ultra-narrowband), և գերանցաշերտ (ultra-passband) բաղադրյալ բևեռացման կիսալիք ալիքաթիթեղները (composite polarization half-wave plates),
- Գերլայնաշերտ (ultra-broadband) բաղադրյալ բևեռացման պտտիչները (composite polarization rotators),

Կարգավորելի (tunable) բևեռացման կամայական դանդաղեցուցիչները (arbitrary polarization retarders), պտտիչները (arbitrary polarization rotators) և ղեկավարիչները (arbitrary polarization controllers):

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 7-ն է:

Հետազոտություններ նյութագիտության ոլորտում

ա) Խիտոզանի նոր ածանցյալների սինթեզ և ուսումնասիրություն

2025 թվականին, շարունակել ենք խիտին/խիտոզանային համակարգերի ուսումնասիրությունները: Հեռանկարային ու կարևոր ենք համարել շարունակելլ,

մասնավորապես ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովասար բնակավայրում կիրառվող մեղվափեթակների «հանգուցյալ» մեղուներն (լատ. Apis mellifera armeniaca) օգտագործել որպես խիտին պարունակող բնական հումք:

Ընթացիկ տարում կատարված աշխատանքների արդյունքում սինթեզվել է խիտոզան (CS):և բնութագրվել նաև "gel permeation chromatography (GPC)" մեթոդի կիրառմամբ GPC-մեթոդը հնարավորություն է տալիս որոշելու պոլիմերային՝ CS-ային, համակարգի նմուշի միջին մոլեկուլային կշիռը (ՄՄԿ-AMW):Պոլիմերային համակարգերի համար ՄՄԿ կարևոր բնութագրական մեծություն է:և էական ազդեցություն ունի համակարգի ռեակցիոնունակության, լուծելիության, համատեղելիության ու այլ հատկանիշների վրա:Մեր կողմից սինթեզվել է CS միջին թվային՝ Mn-12.376 ու միջին կշռային՝ Mw20.119, մոլեկուլյար կշիռներով նմուշ նպատակ ունենալով ուսումնասիրել ՄՄԿ ազդեցությունը որոշակի կիրառական՝ օրինակ այրվածքների վերականգնման, ուսումնասիրություններում:

Այդ նպատակովշարունակում ենք աշխատանքները աինթեզելու տարբեր ՄՄԿ բնութագրվող CS նմուշներ:

ԸՆթացիկ՝ 2025 թվականին, չունենք տպագրված աշխատանք:

բ) Նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրություններ

2025թ. խումբը շարունակել է իրականացնել նանոկառուցվածքների և նանոնյութերի ոլորտի հետազոտություններ: Ռազմավարական ուղղություններն են՝ գրաֆենի և այլ երկչափ նյութերի հիմքով քվանտային սարքերի պատրաստումն ու կիրառությունը, քվանտային ֆոտունիկան և արեգակնային էներգետիկան: Բազային հետազոտությունների շրջանակում իրականացվել են տարբեր չափերի և արբեր ֆունկցիոնալացմամբ ոսկու նանոմասնիկների կիրառմամբ արեգակնային էներգիայի փոխակերպիչների սիլիցիումային բջիջների արդյունքավետության բարձրացմանը միտված մեծածավալ հետազոտություններ:

Ձեռք են բերվել արդյունքներ, որոնք կարևոր են ոչ միայն կիրառական տեսանկյունից, այլև հիմնարար քվանտային ֆիզիկայի տեսանկյունից: Խումբն իրականացրել է երկակի նշանակության տեխնոլոգիաներին առնչվող հետազոտություններ: Այդ հետազոտությունների շրջանակում հետազոտվել են իոնական հեղուկների ներգրծությունը գրաֆենի շերտերի օպտիկական հատկությունների վրա:

Մշակվել և հետազոտվել են միկրոկոնտռոլեռի երկու մոդելներ: Վերջիններս թույլ ենտալիս գրաֆենի օպտիկական հատկություններն ադապտացնել միջավայրի ջերմային ֆոնին: Տարեվերջին խմբում մկնարկել են մուարե գրաֆենի հիմքով քվանտային դետեկտորներին առնչվող հետազոտություններ;

Հրապարակումներ գիտական ամսագրերում՝ ընդհանուր թիվը 5-ն է:



Ֆիզիկայի կիրառական հետազոտությունների բաժանմունք

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ., պրոֆ., Վ.Վ. Հարությունյան

Հաշվետու ժամանակահատվածում **Կիրառական ֆիզիկայի հետազոտությունների բաժինն** իրակա-նացրել է հետևյալ հետազոտությունները.

Ճառագայթային ֆիզիկայի և մոդելավորման (240) խումբ

ԱԱԳԼ Ֆիզիկայի կիրառական հետազոտությունների բաժնի ARL Quant'X EDXRF Analyzer սարքը նախատեսված է և կիրառվում է փորձարարական աշխատանքներում XRF-անալիզի մեթոդով նյութերի տարրերի որոշման համար՝ Մենդելեևի պարբերական աղյուսակում նատրիումից՝ Na (Z=11) մինչև ուրան՝ U (Z=92): Այս սարքի միջոցով չափումները կատարվում են 2 միջավայրում՝ օդ և վակուում: Սարքի կարևորությունը կայանում է նրանում, որ այն կարող է որոշել նյութի բաղադրությունը առանց նմուշը վնասելու:

Սարքը ունի կիրառության տարբեր ոլորտներում՝ երկրաբանություն, հանքարդյունաբերություն, հնեաբանություն, սննդի արդյունաբերություն և անվտանգություն, էլեկտրոնիկա, արվեստ, քիմիա, ֆիզիկա:

2025թ-ի ընթացքում կատարվել են չափումներ ինչպես ինստիտուտի աշխատակիցների համար, այնպես էլ տարբեր կազմակերպությունների համար: Չափումները կատարվել են Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորայի աշխատակիցներ Է.Ալեքսանյանի, Հ.Մկրտչյանի, Ն.Մարգարյանի և այլ աշխատակիցների համար, ինչպես նաև «ԷԿՈ ատոմ» ԳԱՄ տնօրեն Գագիկ Մարտոյանի համար:

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքը նվիրված է Zn_2SiO_4 և Zn_2SiO_4:Ce նմուշների հետ էլեկտրոնների և պրոտոնների փոխազդեցությունների մոդելավորմանը՝ օգտագործելով Geant4 ծրագրային փաթեթը: Ուսումնասիրվում են էներգիայի բաշխումները, մասնիկների ներթափանցման խորությունները և առաջացած արատների հաշվարկված խտությունը: Սահմանվել է, որ պրոտոնների և էլեկտրոնային էներգիայի կորուստները կախված են ինչպես ճառագայթի պարամետրերից, այնպես էլ նմուշների կառուցվածքային բնութագրերից: Տարբեր մոդելավորման ռեժիմներում հարվածային ատոմների սպեկտրների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ էլեկտրամագնիսական պրոցեսները, մասնավորապես բազմակի ցրումը, որոշիչ ազդեցություն ունեն էներգետիկ սպեկտրների և երկրորդային իոնային տիրույթների

ձևավորման վրա: Մոդելավորումը ցույց է տվել, որ միջինում, երբ մեկ էլեկտրոն կամ պրոտոն հարվածում է 1 մմ հաստությամբ թիրախային մակերեսին, առաջանում են մոտավորապես 0.103 իոն՝ 1 էՎ-ից մեծ էներգիաներով և ~0.0371 իոն՝ 50 էՎ-ից մեծ էներգիաներով: Պրոտոնների դեպքում առաջանում են ~0.184 իոններ՝ 1 էՎ-ից մեծ էներգիաներով և ~0.0646 իոններ՝ 50 էՎ-ից մեծ էներգիաներով: Այսպիսով, 10^{15} պ/սմ2 հոսքի դեպքում թիրախում առաջանում են ընդհանուր առմամբ ավելի քան 6.46×10^{13} Ֆրենկելի արատներ: 10^{17} է/սմ2 էլեկտրոնային հոսքի դեպքում Ֆրենկելի արատները կկազմեն մոտավորապես 3.71×10^{15}: ≥ 50 էՎ էներգիաներով իոնների հավանական միջակայքերը համապատասխանաբար մոտավորապես 20 նմ, 11 նմ և 5 նմ էին O, Si և Zn-ի համար: Ce-ի դեպքում այս արժեքը 1 նմ-ից պակաս էր:

Ռադիացիոն կենսաֆիզիկայի (240/1) խումբ

Ընթացիկ տարում շարունակվել են գերկարճ էլեկտրոնային փնջերի (CANDLE, AREAL) ազդեցությանը մեկուսացված ԴՆԹ-ի և ԴՆԹ/պորֆիրին կոմպլեքսների վրա:

Հետազոտվել են բակտերիաների ֆոտոդինամիկ վնասազերծման հնարավորությունը տարբեր մետաղ չպարունակող և արծաթ պարունակող մետաղապորֆիրինների առկայությամբ: Ստացված արդյունքների հիման վրա, այն է, որ պորֆիրինները հնարավոր է օգտագործել որպես ռադիոսենսիբիլիզատերներ զարգացվում է հետազոտման ևս մեկ ուղղություն՝ պորֆիրինների առկայությամբ բակտերիաների ֆոտոդինամիկ ապաակտիվացում:

Ռադիոէկոլոգիական աշխատանքների շրջանակներում հողի նմուշառում է իրականացվել Օշական գյուղի մոտակայքից՝ իբրև ռադիոնուկլիդներով (^{137}Cs) ախտոտված տարածք և Ծախկունք գյուղի շրջակայքից՝ իբրև ֆոնային գոտի: Աշխատանքներ են տարվում նմուշներից seudomonas putida և Pseudomonas fluorescens մանրէաբուսակների անջատման ուղղությամբ:

Արագացուցչային դիագնոստիկայի մեթոդների մշակման (240/2) խումբ

1.Բարակ լազարային փնջերի տոմոգրաֆիա

Մշակվել և փորձակվել է բարակ լազերային փնջերի պրոֆիլների բնութագրման նոր տատանվող լարի ռեզոնատորի միջոցով ալգորիթմ, հիմնված պրոֆիլի կորի հաստության մաթեմատիկական որոշման վրա, որը թույլ է տալիս ընտրել այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են լարի տատանումների պարբերությունը և փուլը: Այս ալգորիթմը, որն

իրականացվում է Visual Basic 10-ի վրա հիմնված ծրագրով, հեշտացնում է բարձր լուծումով լազերային փնջի պրոֆիլների ստացումը:

Բարակ լազերային փնջի պրոֆիլավորման մշակված համակարգը բաղկացած է երկու հիմնական բլոկներից՝ տատանվող լարի ռեզոնատորից (ներառյալ ինքնագեներացման սխեման և ռեզոնատորը շարժելու համակարգ) և ֆոտոդիոդով չափման տվյալների ձեռքբերման սխեմայով :

Չափման համակարգը բարելավվել է մոտ 100 նվ լուծաչափով նոր էլեկտրոնիկայի մշակման և լարի տատանումների պարամետրերի fitting մեթոդի մշակման շնորհիվ: Նոր էլեկտրոնիկան թույլ է տվել լուծել չափման համակարգի ուշացումների հետ կապված խնդիրները և օգտագործել առաջնային փորձարարական տվյալները առանց ժամանակային շտկումների: Նոր fitting ալգորիթմը թույլ է տալիս միաժամանակ որոշել լարի տատանումների ինչպես փուլը, այնպես էլ պարբերությունը՝ հիմնվելով միայն ֆոտոդիոդից եկող ազդանշանի վրա: Հաշվարկման ժամանակը զգալիորեն կրճատվել է: Սա նաև հնարավորություն կտա լուծել բարակ լազերային փնջի տոմոգրաֆիայի խնդիրները: **Արդյունքները հրապարակված են՝ Journal of Instrumentation 2025, 20, T07001,** .https://doi.org/10.1088/1748-0221/20/07/T07001

Նախատեսվում է՝

-DET025AL (ThorLABS) արագ ֆոտոդիոդի վրա հիմնված նոր տոմոգրաֆիկ համակարգի մշակում և հավաքում

- համապատասխան ծրագրային ապահովման մշակում

- չափման տիրույթի ընդլայնում ավտոմատացված ճշգրիտ սնուցման համակարգով՝ լազերային փնջի և ռեզոնատորի ապերտուրի համապատասխանեցման համար: Նման համակարգը անհրաժեշտ կլինի նաև անտեսանելի ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթների սկանավորման համար՝ Ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր լուսադիոդների/լուսադետեկտորների օգտագործումը հնարավորություն կտա փնջի պրոֆիլավորումը համապատասխան ալիքի երկարության տիրույթում:

2. ԼՈԻԷ-75 գծային արագացուցչային համալիրի էլեկտրոնային փնջի հորիզոնական և ուղղահայաց պրոֆիլավորում

Մշակվել և պատրաստվել է ԱԱԳԼ-ի ԼՈԻԷ-75 գծային արագացուցչային համալիրի էլեկտրոնային փնջի հորիզոնական և ուղղահայաց պրոֆիլավորման նոր տատանվող լարի մոնիտորներով XY-կայան: Փնջի սկանավորումը կատարվում քայլային շարժիչների միջոցով

մոնիտորների տեղափոխման շնորհիվ: Կայանը շահագործելու համար մշակվելու է VB 22-ի վրա հիմնված ծրագիր:

Նկարում ձախից պատկերված է XY-կայանը, բաղկացած երկու մոնիտորներից, երկու քայլային շարժիչներից՝ համապատասխան էլեկտրական պլատաներով՝ փնջի հորիզոնական և ուղղահայաց պրոֆիլները չափելու համար: Նկարում աջից պատկերված է 1-լարանի մոնիտորը:



Նախատեսվում է՝

- ԱԱԳԼ-ի ԼՈԻԷ-75 գծային արագացուցչային համալիրի էլեկտրոնային փնջի հորիզոնական և ուղղահայաց պրոֆիլավորում՝ նոր մշակված տատանվող լարի մոնիտորներով XY-կայանի օգտագործմամբ:
- 100/9 խմբի և «Institute for Nuclear Research, Dubna, Radiomics E1, «Dubna» հետ համագործակցությամբ, I-123 բժիշկական ռադիոիզոտոպի արտադրման նախագծի մշակում՝ հիմնված վանադիումի կոնվերտորի և քսենոնի թիրախի վրա:
-100/9 խմբի հետ համագործակցությամբ ԼՈԻԷ-75 գծային արագացուցչի կլիստրոնների ջերմակարգավորիչ համակարգի մշակում:

3. Իոնիզացնող ճառագայթման ազդեցության տակ նյութերի կառուցվածքային փոփոխությունների մոնիթորինգ՝ տատանվող լարի միջոցով

Կատարվել են փորձեր իոնիզացնող ճառագայթման ազդեցության տակ տատանվող լարի նյութի կառուցվածքային փոփոխությունների վերլուծման վերաբերյալ:

Լարի կառուցվածքային փոփոխությունները մոդելավորվել են մի քանի եղանակներով: Լաբորատոր պայմաններում լարի նյութը ենթարկվել է առաձգականության սահմանը գերազանցող բեռնման և արագ ջերմային տաքացման և սառեցման օդում: Երկու պրոցեսներն էլ զգալի և վերարտադրելի ազդեցություն են ունեցել լարի բնական հաճախության վրա, ինչը ցույց է տալիս լարի նյութի որոշակի կառուցվածքային փոփոխությունները: Լարի բեռնման և ջերմային մշակման պրոցեսների պարամետրերը ընտրվել են այնպես, որ դրանց ցիկլիկ վերարտադրությունը լարի բնական հաճախությունը վերադարձնի մոտավորապես իր սկզբնական արժեքներին:

18 ՄէՎ էներգիայով և մինչև 6.8×10^{19} պրոտոն/սմ^2 հոսքով պրոտոնային փնջով ճառագայթման դեպքում դիտվել է 4%-ից ավելի մնացորդային հաճախության փոփոխություն, որը զգալիորեն գերազանցում է տատանվող լարի մոնիտորների հաճախության կայունության մակարդակը: Սա թույլ է տալիս պնդել, որ ճառագայթման ընթացքում կառուցվածքային փոփոխությունների պատճառով դիտվել է լարի նյութի որոշակի կարծրացում: Դիֆրակտոմետրիկ վերլուծության են ենթարկվել մետաղալարի ճառագայթված և չճառագայթված հատվածների նմուշները: Ճառագայթված նմուշի բոլոր պիկերի ինտենսիվության զգալի աճ է հայտնաբերվել չճառագայթված նմուշների պիկերի համեմատ: Սա նաև վկայում է լարի նյութի բյուրեղային կառուցվածքի փոփոխությունների մասին ճառագայթման ազդեցության տակ:

Նախատեսվում է շարունակել փորձերը՝ ուսումնասիրել կարծրացման պրոցեսը այլ մթնոլորտներում/վակուումում: :

Փորձերի արդյունքները ներկայացվել են IV International Scientific School for Radiation Physics and Related Applications named after Academician Alpic Mkrtchyan Yerevan–Gyumri, Armenia (16–21 June 2025) կոնֆերանսում, հրապարակված են ASRP 2025 - Alpic School for Radiation Physics ,Book of Abstracts, p. 38, ընդունվել են տպագրման **Radiation Physics and Chemistry** ամսագրում:

Նախատեսվում է մշակել նյութերի կառուցվածքային փոփոխությունների թրթռացող մետաղալարի մոնիտոր:

4. **Միաչափ բազմաձևությունների վրա էլեկտրադինամիկայի մեջ ուշացման հավասարման պարամետրիկ լուծումը**

Կատարվել կամայականորեն շարժվող լիցքավորված մասնիկի համար էլեկտրական դաշտի գծերի պարամետրացում: Դա թույլ է տալիս լուծել ուշացման հավասարումը, որը կապում է դիտարկման կետը հետագծի վրա գտնվող կետի հետ՝ ուշացած ժամանակում: Ընդվորում նմանատիպ պարամետրացումը թույլ է տալիս լուծել ուշացման հավասարումը կամայական միաչափ բազմաձևության վրա, որը ձևավորվում է եռաչափ տարածության մեջ երկու մակերևույթների հատման արդյունքում: Մանրամասնորեն քննարկվում է այն դեպքը, երբ միաչափ բազմաձևությունը երկու հարթությունների հատման արդյունքում ձևավորված ուղիղ գիծ է: Արդյունքում ստացված պարամետրիկ լուծումը թույլ է տալիս մեզ հաշվարկել համապատասխան Լինարդ-Վիխերտի դաշտը և պատկերացնել դրա դինամիկան ժամանակի ընթացքում: Ներկայացված ալգորիթմը հնարավորություն է տալիս ներկայացնել տարբեր մասնիկներից դաշտերը նույն գծերի/մակերեսների վրա և վերլուծել ռելյատիվիստիկ մասնիկների փնջի դաշտի կառուցվածքը:

Արդյունքները ներկայացվել են XXIX International Conference on Integrable Systems and Quantum Symmetries (ISQS29), (Prague, July 7-11) կոնֆերանսում և տպագրվել են **Journal of Physics Conference Series 3152(1):012031. DOI: 10.1088/1742-6596/3152/1/012031.**

Նախատեսվում է շարունակել թեմայի ուսումնասիրությունները:

Պինդ մարմնի Ճառագայթումային ֆիզիկայի (240/3) խումբ

Խմբում կատարվող աշխատանքները նվիրված են արևային բջիջներում բարձր էներգիայով օժտված 18 ՄէՎ պրոտոնային և 3.5 ՄէՎ էներգիայով էլեկտրոնային ճառագայթահարմամբ առաջացած երևույթների փորձարարական ուսումնասիրությանը: Ճառագայթահարվող միջավայրերում (ինչպիսին է տիեզերական տարածությունը) աշխատող սարքերը գտնվում են անընդհատ միաժամանակ տարբեր տեսակի և էներգիայի մասնիկներով ճառագայթահարման ներքո, որոնցից առավել ինտենսիվ են ՄէՎ էներգիայով էլեկտրոնները և պրոտոնները: Այդ տեսանկյունից արդիական է ոչ միայն գիտական այլ նաև կիրառական հետազոտությունները սիլիցիումային էլեկտրոնային սարքավորումների (արևային բջիջներ) բնականոն աշխատանքի կայունության և երկարակեցության խնդիրների ուսումնասիրությունը: Հաշվետու ժամանակում ուսումնասիրվել են 3.5 ՄէՎ էներգիայով էլեկտրոններով և դրան ուղեկցող «մթային հոսանքով» ավելի ցածր էներգիայով

էլեկտրոններով ճառագայթահարման ազդեցությունը արևային բջիջների մթային և լուսային բնութագծերի վրա: Արևային բջիջների վոլտ-ամպերային բնութագծերի չափումները կատարվել են Sol-UV Ultraviolet Solar Simulator սարքի օգնությամբ: Նկատի ունենալով նաև, որ ճառագայթահարմամբ առաջացած ճառագայթահարային արատների կառուցվածքները (կետային, կլաստերային և այլն) նյութերում կախված է հարվածող մասնիկի տեսակից և էներգիայից, հետևաբար մոնոէներգիայով օժտված էլեկտրոններով առաջացրած արատները կլինեն տարբեր համեմատած միաժամանակ տարբեր էներգիայի էլեկտրոնների ազդեցությամբ առաջացած արատների: Քանի որ տիեզերական տարածությունում արևային բջիջները միաժամանակ ենթարկվում են տարբեր էներգիաներով էլեկտրոնների ազդեցությանը, հետևաբար այս ճանապարհով ստացված արդյունքները կարող են ավելի ճիշտ մոդելավորել տիեզերական տարածությունում ընթացող երևույթները: Նմուշները ճառագայթահարվել են պիկովայրկյանային էլեկտրոնային ուղիղ փնջով CANDLE Synchrotron Research Institute-ի AREAL էլեկտրոնային արագացուցիչով: Փորձնականորեն չափվել է նաև «մթային հոսանք»-ի էլեկտրոնների ինտենսիվության բաշխումը ըստ էներգիայի, որը կազմել է լրիվ հոսանքի 65%-ը: Հետազոտությունների համար օգտագործվել են LA-Solar կազմակերպությունից ձեռք բերված նորագույն PERC (Passivated Emitter and Rear Cell) տեխնոլոգիայով պատրաստված բյուրեղային սիլիցիումային արևային պանելներ, որոնցից լազերային սարքի օգնությամբ պատրաստվել են 10մմ տրամագծով նմուշներ:

Ստացված արդյունքների վերլուծված, մշակված, և պատրաստված «Pico-second pulse electron irradiation damage studies in crystalline silicon solar cells» վերնագրով հոդվածը ուղարկվել և ընդունվել է տպագրության Solar Energy Materials & Solar Cells ամսագրում:

Իրականացվել են նաև թերմոդեֆեկտների ուսումնասիրությունը կիսահաղորդչային բյուրեղներում, թեմայի սահմաններում արվել է աշխատանք, որը ուղարկված է տպագրության: Աշխատանքում ազատ էլեկտրոնների կոնցենտրացիայի (n) Δn աճը բարձր ջերմաստիճանային տաքացումից և իզոքրոն թրծումից հետո հաշվարկված է հաշվի առնելով InAs-ի ելակետային միաբյուրեղներում անվերահսկելի խառնուրդների առկայությունը փոքր կոմպլեքսների տեսքով:

Օպտիկական և սպեկտրազննության (240/5) խումբ

Հաշվետու ժամանակահատվածում (2025 թ.) Ֆիզիկայի Կիրառական Հետազոտությունների Բաժնի 240/5 Օպտիկական Սպեկտրոսկոպիայի խումբը բազային ֆինանսավորման շրջանակներում իրականացրել է հետազոտական աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Ջերմակարգավորիչ և պաշտպանիչ բարակ թաղանթների ֆիզիկաօպտիկական հատկությունների ուսումնասիրություն, ներառյալ դրանց օպտիկական սպեկտրների, արտացոլման և կլանման գործակիցների չափումները: Ուսումնասիրվել է էլեկտրոնային և պրոտոնային ճառագայթահարման ազդեցությունը նշված նյութերի կառուցվածքային և օպտիկական բնութագրերի վրա՝ նպատակ ունենալով գնահատել դրանց կիրառելիությունը էքստրեմալ (մասնավորապես՝ տիեզերական) պայմաններում:

2. Կապար-հալոգենային պերովսկիտների հիմքով արևային բջիջների պատրաստում և համալիր ուսումնասիրություն: Իրականացվել է ինչպես օրգանական–անօրգանական, այնպես էլ անօրգանական հալոգենային պերովսկիտների բարակ թաղանթների ստացում ապակի, ապակի/FTO և ապակի/FTO/TiO_2, նաև ճկուն PET/ITO ենթաշերտերի վրա՝ պտտական պատման (spin coating) և ցածր ջերմաստիճանային մշակման եղանակներով: Ստացված նմուշները ուսումնասիրվել են օպտիկական սպեկտրոսկոպիայի, մորֆոլոգիական և կառուցվածքային մեթոդներով:

3. Պերովսկիտային արևային բջիջների ճառագայթակայունության ուսումնասիրություն: Կատարվել են պրոտոնային և էլեկտրոնային ճառագայթահարման փորձարկումներ պերովսկիտային բարակ թաղանթների և պատրաստի արևային բջիջների վրա: Վերլուծվել են ճառագայթահարման հետևանքով առաջացած փոփոխությունները օպտիկական հատկություններում և ֆունկցիոնալ պարամետրերում՝ բացահայտելով ինչպես դեգրադացիոն, այնպես էլ որոշ դեպքերում բարելավող ազդեցություններ:

TiO_2 և SnO_2 էլեկտրոնային անցման շերտերի ստացում և օպտիմալացում պերովսկիտային արևային բջիջների համար: Ուսումնասիրվել է նստեցման տեխնոլոգիական պայմանների ազդեցությունը TiO_2 և SnO_2 շերտերի օպտիկական և կառուցվածքային հատկությունների վրա, ինչպես նաև դրանց ազդեցությունը արևային բջիջների ընդհանուր արդյունավետության և կայունության վրա:

Օպտիկական սպեկտրոսկոպիայի մեթոդների կիրառմամբ իրականացվել է նաև ստացված արդյունքների ընդհանրացում և վերլուծություն, ինչպես նաև իրականացված աշխատանքների հիման վրա գիտական հրապարակումների և նոր հետազոտական ծրագրերի նախապատրաստում:

Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոն

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ, պրոֆ., Վ.Գ. Գուրզադյան

Հաշվետու ժամանակահատվածում **Կոսմոլոգիայի և աստղաֆիզիկայի կենտրոնը** ծավալել է գիտահետազոտական գործունեություն հետևյալ հիմնական ուղղություններով՝

Ուղղությունները

1. LARES-2 արբանյակային գիտափորձի տվյալներով Լենզե-Թիրինգի երևույթի բարձր ճշտությամբ ստուգում, մակընթացային մոդերի արտածում;

2. Գրավիտացիոն և կոսմոլոգիական հաստատունների որոշում լաբորատոր գիտափորձով;

3. Գալակտիկաների մութ հալոների հատկությունները Planck արբանյակի տվյալներով;

4. James Webb Space Telescope-ով դիտված մեծ կարմիր շեղումով գալակտիկաների հատկությունների հետազոտում Կոլմոգորովի մեթոդով;

5. Ուշ տիեզերքում նյութի բաշխման հատկությունները;

6. Գերնորեր, գալակտիկաների ձևաբանական և դինամիկական հատկություններ, էկզոմոլորակներ և դրանց մայր աստղեր:

7. Արհեստական բանականության մեթոդները գալակտիկաների մորֆոլոգիայում:

Արդյունքները հրատարակվել են Q1, Q2 ամսագրերում:

Հիմնական արդյունքները.

1. Շարունակվել են Հարաբերականության ընդհանուր տեսության մեծ ճշտությամբ ստուգման հետազոտությունները LARES-2 արբանյակի (European Space Agency, Italian Space Agency) տվյալներով: Արտածվել են Երկրի մակընթացային 110 մոդերը: Աշխատանքը կատարվել է LARES միջազգային համագործակցության ծրագրով՝ Վ.Գուրզադյանը ղեկավար խորհրդի անդամ: LARES-2 արբանյակը արձակվել էր 2022–ին Եվրոպական տիեզերական գործակալության Կուրու կայանից (ESA spaceport Kourou, French Guiana); (V.G. Gurzadyan, I. Ciufolini, H. Khachatryan, S. Mirzoyan, A. Paolozzi, On the Earth's tidal perturbations.II. LARES 2 satellite, Europ. Physical Journal Plus, 140, 512, 2025):
2. Առաջարկված է երկու հիմնարար՝ գրավիտացիայի G և կոսմոլոգիական Λ հաստատունների որոշում լաբորատոր պայմաններում մեծ ճշգրտությամբ՝ օգտագործելով քվանտային ֆոնոնային գրգռումների դինամիկան Բոզե-Էյնշտեյնի կոնդենսատում (BEC): BEC-ը զգայուն է գրավիտացիոն պոտենցիալի երկու հիմնական

բաղադրիչների՝նկատմամբ, երկուսն էլ առկա են Գուրզադյանի արտածված թեորեմից բխող ամենաընդհանուր ֆունկցիայում: Գրավիտացիայի հաստատունի համար կանխատեսվում է 10^{-17} ն մ^2/ կգ^2 ճշգրտություն՝ 2 կարգով գերազանցելով ներկայումս առկա թվերը: Գիտափորձը հնարավորություն կտա Λ-ի համար գրանցել Երկրի վրա չափման լավագույն սահմանը $<10^{-31}$ մ$^{-2}$, որպես կոսմոլոգիական հաստատունի առաջին լաբորատոր հետազոտություն (H. A. Fernandez-Melendez, A. Belyaev, V. Gurzadyan, I. Fuentes, Probing Lambda-Gravity with Bose-Einstein Condensate, Physical Review Research (Letters) 7, L042051, 2025)

3. Planck արբանյակի տվյալներով ուսումնասիրվել է Կույսի (Coma) կույտի M90 գալակտիկայի մութ հալոն: Գրանցվել է միկրոալիքային ճառագայթման ջերմաստիճանի անհամաչափություն, որը հավանաբար առաջանում է M90 հալոյի պտույտից: M90-ը եզակի "կապույտ շեղումով" (blueshift) գալակտիկա է այդ կույտում, և այս գրանցումը առնչվում է կույտի ներքին դինամիկային, նաև գալակտիկայի կառուցվածքին (F. De Paolis, V.G. Gurzadyan, A.L. Kashin, G. Yegoryan, A. Qadir, N. Tahir, Ph. Jetzer, Messier 90 galactic halo rotation in the microwaves, Astronomy & Astrophysics, (Letters), 694, L2, 2025).

4. Հետազոտվել է ուշ Տիեզերքում կազմավորումների ձևավորումը Վլասովյան կինետիկ մոտեցմամբ: Գրավիտացիոն փոխազդեցությունը կոսմոլոգիական հաստատունի առկայությամբ, ինչպես ցույց է տրվել, լուծում է Հաբլի լարվածությունը (Hubble tension), և ուշ Տիեզերքի համար Հաբլի պարամետրը պետք է տարբերվի նրա գլոբալ արժեքից: Դատարկությունների (voids) և պատերի առաջացման այս մեխանիզմում կոսմոլոգիական հաստատունը բնորոշում է դրանց չափերը, և կանխատեսումները կարող են համեմատվել դիտողական տվյալների հետ: Նյութի բաշխվածության քննարկված մեխանիզմը հաջորդում է ժամանակաշրջանին, որը նկարագրվում է սկզբնական խտության տատանումներով; (V.G. Gurzadyan, N.N. Fimin, V.M. Chechetkin, Cosmic voids and the kinetic analysis. IV. Hubble tension and the cosmological constant, Astronomy & Astrophysics, 694, A252, 2025; V.G. Gurzadyan, N.N. Fimin, V.M. Chechetkin, Astronomy & Astrophysics (in press).

5. James Webb Space Telescope (JWSP) գալակտիկաների խորը սպեկտրային հետազոտությունները հնարավորություն են տալիս հետազոտելու գալակտիկաների էվոլյուցիոն և միջգալակտիկական միջավայրի հատկությունները՝ հաշվի առնելով ֆոտոնների տարածման հսկայական հեռավորությունը: Վերլուծվել են մինչև 7 կարմիր շեղումով JWST գալակտիկաների սպեկտրային տվյալները օգտագործելով Կոլմոգորովի բնութագրիչը՝ ստուգելու կանոնավոր և ստոխաստիկ ենթա-ազդանշանների ներդրումը: Հետազոտված տվյալների համար գրանցվել է գալակտիկաների սպեկտրային հատկությունների որոշ փոփոխություն կարմիր շեղման 2.7 տիրույթում (N. Galikyan, A.A. Kocharyan, V.G. Gurzadyan, Kolmogorov analysis of JWST deep survey galaxies, Astronomy & Astrophysics, (Letters), 696, L21, 2025)

6. Ուսումնասիրվել են Ia դասի Գերնոր աստղերի (ԳԱ-երի) թաղանթների ընդարձակման արագությունները՝ հիմնվելով Si II λ6355 և Ca II IR3 սպեկտրային գծերի վրա: Կարևոր արդյունքներից է այն, որ Si II λ6355 գծի PVF (photospheric-velocity feature) արագությունների բաշխումն ունի արտահայտված երկգագաթ (bimodal) կառուցվածք՝ առանձնացնելով «normal-velocity» (NV) և «high-velocity» (HV) ԳԱ-երի խմբերը: Սակայն, Ca II PVF արագությունների բաշխումը՝ ի տարբերություն Si II-ի, մեկգագաթ (unimodal) է: Համակցելով ԳԱ-երի պայծառության կորերի անկման տեմպերը (Δm_{15}) և PVF արագությունները առաջին անգամ ցույց է տրվել, որ Ca II և Si II PVF արագությունների տարբերությունը (ΔV_{PVF}) զգալիորեն կապված է ԳԱ-երի Δm_{15}-ի հետ: Արագ նվազող (մեծ Δm_{15}) ԳԱ-երը, որոնք բնորոշվում են լուսոլորտի ցածր ջերմաստիճաններով, ցույց են տալիս ավելի մեծ Ca II արագություններ՝ համեմատած Si II-ի: Սա վկայում է, որ նման դեպքերում Ca II գիծը ձևավորվում է թաղանթի ավելի վերին և սառը շերտերում: Ստացվել է նաև, որ Si II PVF արագությունների և Δm_{15} պարամետրի միջև նկատվում է զգալի բացասական կորելյացիա, սակայն միայն այն ԳԱ-երի համար, որոնցում բարձր արագությամբ կլանման բաղադրիչները (HVF - high-velocity feature) թույլ են: Սա համապատասխանում է տեսական ակնկալիքին, ըստ որի ավելի մեծ էներգիայով պայթյունները (փոքր Δm_{15}) ապահովում են թաղանթների ավելի արագ ընդարձակում: Սակայն, երբ HVF-ները ուժեղ են, այս կապը անհետանում է՝ ԳԱ-երի ընդարձակվող թաղանթի մերձաստղային նյութի հետ փոխազդեցության պատճառով (A. A. Hakobyan, M. H. Gevorgyan, A. G. Karapetyan, G. A. Mamon, D. Kunth, V. Adibekyan, L. V. Barkhudaryan, Calcium versus silicon ejecta velocities and decline rates in supernovae Ia: The role of high-velocity features, resubmitted to MNRAS, arXiv:2511.23305).

7. AI-ի միջոցով հետազոտվել է գալակտիկաների դասակարգումը U-Net Variational Autoencoder (VAE) ճարտարապետությամբ, U-Net VAE-ների ուսուցումով EFIGI տվյալների վրա: Տվյալները մշակվում են օգտագործելով ազդանշան-աղմուկ հարաբերակցությունը (PSNR) և կառուցվածքային նմանության ինդեքսը (SSIM), նաև մոդելներ DenseNet-201, ResNet50, VGG16 և GCNN: Մշակված մոտեցումը օգտագործելի է այլ աստղագիտական տվյալների՝ գրավիտացիոն ոսպնյակների, տիեզերական կառուցվածքների բացահայտման համար; (S. Mirzoyan, Enhancing Galaxy Classification with U-Net Variational Autoencoders for Image Denoising, Research in Astronomy and Astrophysics, 25, 095006, 2025; RAA, in press)

Տիեզերական ճառագայթների ֆիզիկայի բաժանմունք

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ, պրոֆ., Ա.Ա. Չիլինգարյան

Մշակվել է համապարփակ մոդել, որը մեկ միասնական շրջանակում բացատրում է բարձր էներգիայի մասնիկների բռնկումները՝ ընդգրկելով մթնոլորտում, տրոպոսֆերայում և տիեզերքում արձանագրվող երևույթները:

Օգտագործելով Հայաստանի տարածքում, Արևելյան Եվրոպայի ամենաբարձր գագաթներում և Գերմանիայում տեղակայված **SEVAN** ցանցի դիտարկումները՝ ներկայացվել է Արեգակի 25-րդ ակտիվության ցիկլի ընթացքում տեղի ունեցած ուժգին արեգակնային իրադարձությունների վերլուծություն, ներառյալ վերջերս գրանցված 77-րդ գետնային մակարդակի ուժեղացումը (Ground Level Enhancement, GLE), որը վերջին ավելի քան 20 տարվա ընթացքում ամենահզորն է: Մշակվել է նոր չափիչ սարքավորում՝ արեգակնային իրադարձությունների ընթացքում մյուոնների և նեյտրոնների պարունակությունը և երկրորդային մասնիկների էներգիան որոշելու համար:

ՏՃԲ-ն մասնակցել է ութ միջազգային գիտաժողովների և սեպտեմբերի 22–25-ը հյուրընկալել է **TEPA** գիտաժողովը՝ ներկայացնելով գիտական արդյունքներ եվրոպական հարթակներում: Սա նպաստել է Հայաստանի գիտական հեղինակության բարձրացմանը արեգակնային ֆիզիկայի, բարձր էներգիայի մթնոլորտային ֆիզիկայի և աստղամասնիկային ֆիզիկայի ոլորտներում:

Ստորև ներկայացվում է **ASEC** հետազոտական ծրագրի համառոտ ակնարկը:

Արագած Տիեզերական Միջավայրի Կենտրոն (ASEC)

Արագած Տիեզերական Միջավայրի Կենտրոնը (ASEC) շահագործում է աշխարհի խոշորագույն բարձրադիր տիեզերական ճառագայթների լաբորատորիաներից մեկը՝ դիտակայաններով ծովի մակարդակից 3200 մ, 2000 մ և 900 մ բարձրությունների վրա: 1940-ականներից սկսած՝ ծրագիրն իրականացնում է բազմատասնամյա շարունակական դիտարկումներ՝ գալակտիկական, արեգակնային և մթնոլորտային աղբյուրներից եկող բարձր էներգիայի մասնիկների վերաբերյալ:

Փորձարարական համալիրը միավորում է լայնածավալ դետեկտորային զանգվածներ և բարձր ճշգրտության սպեկտրոմետրեր, այդ թվում՝

- լիցքավորված և չեզոք երկրորդային մասնիկների համար նախատեսված **SEVAN** մոդուլային ցանցը,
- Արագածի և Նոր Ամբերդի նեյտրոնային մոնիտորները,

- **ASNT**, **STAND1** և **STAND3** շերտային դետեկտորները,
- էլեկտրոն/գամմա դետեկտորներ՝ մոտավորապես 0.3–300 MeV էներգետիկ միջակայքում,
- մեծ չափերի **NaI(Tl)** սպեկտրոմետրերի խումբ՝ 3200 մ, 2000 մ և 900 մ բարձրությունների վրա:

Բոլոր համակարգերն ապահովում են շարունակական մոնիթորինգ ենթամինուտային ժամանակային լուծաչափով: Մասնիկների չափումները համադրված են մակերևույթին մոտ տեղադրված էլեկտրական դաշտի չափիչների և մետեորոլոգիական սենսորների ցանցի հետ, իսկ տվյալները իրական ժամանակում փոխանցվում են **ADEI** հարթակ՝ տեսողականացման, խաչաձև վերլուծության և հետահայաց ուսումնասիրությունների համար:

Սպեկտրների մեկնաբանման և ամպերում մասնիկների արագացումը պայմանավորող դաշտային գոտիների երկրաչափությունն ու ուժգնությունը գնահատելու նպատակով կիրառվում են **GEANT4** դետեկտորային մոդելավորումը և **CORSIKA** մթնոլորտային կասկադների սիմուլյացիաները՝ էլեկտրական դաշտերի ազդեցության ներքո:

Արդյունքներ Արեգակի 25-րդ ցիկլի ընթացքում

Արեգակի 25-րդ ակտիվության ցիկլի ընթացքում ASEC-ը ստացել է մի շարք կարևոր արդյունքներ երկրորդային տիեզերական ճառագայթների հելիոսֆերային մոդուլյացիայի վերաբերյալ: Էական առաջընթաց է հանդիսացել նոր **SEVAN** սարքավորումների ներդրումը, որոնք հնարավորություն են տալիս չափել ինչպես մյուոնային, այնպես էլ նեյտրոնային բաղադրիչները և հաստ սցինտիլյատորային շերտերում թողարկված էներգիան:

Էներգիայի արտազատման հիստոգրամների գրանցումը (ոչ միայն ինտեգրալ հաշվարկների) թույլ է տվել հետևել կոշտության կախված տրանսպորտին և բացահայտել սպեկտրալ կոշտացման կամ փափկացման երևույթները խոշոր տիեզերական եղանակային խանգարումների ժամանակ: Այս հնարավորությունների շնորհիվ հաջողվել է արձանագրել Ֆորբուշի նվազումները, քարտեզագրել անիզոտրոպիայի զարգացումը ցանցի ամբողջ տարածքում և տարբերակել գետնային մակարդակի ուժեղացումները մագնետոսֆերային ազդեցություններից՝ ըստ մյուոն/նեյտրոն հարաբերակցության և էներգիայի արտազատման բնութագրերի:

Նույն մեթոդաբանությունն օգտագործվել է նաև արեգակնային ցիկլի երկարաժամկետ միտումների ուսումնասիրության համար՝ ապահովելով ավելի հստակ համեմատություններ նեյտրոնային մոնիտորների տվյալների, տիեզերական սարքավորումների չափումների և գեոմագնիսական ակտիվության ինդեքսների միջև:

2026 թվականին նախատեսվում է լուծել արեգակնային ֆիզիկայի ամենակարևոր խնդիրներից մեկը՝ ուժգին արեգակնային բռնկումների ժամանակ էներգետիկ պրոտոնների էներգետիկ սպեկտրի վերականգնումը: Այս խնդիրը անմիջականորեն կապված է տիեզերական եղանակի վտանգների հետ՝ արբանյակների և մակերևութային տեխնոլոգիաների համար. կոշտ սպեկտրը, ինչպես բացահայտվում է SEVAN դետեկտորներով, նախազգուշացնում է բարձր էներգիայի պրոտոնների վտանգավոր հոսքի մոտալուտ առաջացման մասին:



Իզոտոպների հետազոտման և արտադրության բաժին

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.թ. Ռ.Կ. Դալլաքյան

Բաժնի գործունեությունը նվիրված է բժշկական իզոտոպների արտադրության տեխնոլոգիաների և սարքավորումների մշակմանը, արտադրությանը:

^{68}Ga բշժկական ռադիոիզոտոպ

Այս ուղղությամբ աշխատանքներն ընթանում են նաև **«ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024», 24LCG-2G028 և IAEA Coordinated Research Project F22073, "Production of cyclotron-based Gallium-68 radioisotope and related radiopharmaceuticals", Research Contract No: 24305** ծրագրերի ֆինանսական աջակցությամբ:

Նախատեսված էր կատարել գալիումի արտադրության համար պինդ թիրախների մշակում և պատրաստում: Պինդ թիրախների ճառագայթման համար օգտագործվում է Nirta Solid Compact թիրախային մոդուլը [1] (Նկ. 1), որը նախատեսված է 24 մմ տրամագծով և 2 մմ հաստությամբ թիրախային հենարանի՝ թիրախակալի համար:



Նկար 1. Nirta Solid Compact Model TS06 թիրախային մոդուլն իր թիրախային հենարանի սխեմայով:

Թիրախակալը կենտրունում ունի 12 մմ տրամագծով խորություն, որի մեջ տեղակայվում է թիրախային նյութը՝ այս դեպքում ցինկ: Թիրախի կողմից հովացումը կատարվում է հելիումի հոսքով, իսկ թիրախային հենարանի ետին պատի կողմից՝ ջրով: Թիրախի պատրաստման համար պետք է հաշվի առնել մի քանի պայմաններ՝

1. Գալիումի արտադրության համար ցինկե թիրախը ճառագայթման ավարտից հետո պետք է լուծել աղաթթվի կամ ազոտական թթվի լուծույթում: Այդ պատճառով թիրախակալը պետք է պատրաստված լինի այդ թթուների նկատմամբ իներտ նյութից:
2. Թիրախի նյութի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել նաև նյութի ջերմահաղորդականությունը, ինչը շատ կարևոր է թրիախի հովացման տեսանկյունից:
3. Սերիական արտադրության համար հիմնականում վաճառվում է հարստացված մետաղական ցինկ-68 փոշի: Հարստացված ցինկե թիթեղներն ավելի քիչ հասանելի են:

4. Արտադրվող իզոտոպի ակտիվությունն ուղիղ կախված է ճառագայթման ինտենսիվությունից: Մյուս կողմից այդ ինտենսիվության առավելագույն արժեքը կախված է թիրախի հովացման հզորությունից:
5. Ըստ ակնկալվող արտադրական ծավալների՝ կարելի է ընտրել Nirta մոդուլի ստանդարտ հարթ թիրախակալներ, եթե ծավալները շատ մեծ չեն, կամ մշակել ավելի բարձր էֆեկտիվությամբ հովացվող թիրախային հենարաններ մեծաքանակ արտադրության համար:

Այս պահանջները հաշվի առնելով՝ որպես թիրախային հենարանի նյութ ընտրվել է նիոբիումը: Այն իներտ է նշված թթուների նկատմամբ, ունի բարձր ջերմահաղորդականություն: Բացի այդ բնական նիոբիումը մոնոիզոտոպ տարր է և համեմատաբար քիչ է ակտիվանում ճառագայթման ընթացքում, ինչը կարևոր է ռադիացիոն անվտանգության տեսանկյունից: Թիրախային հենարանի վրա թիրախային նյութը՝ մետաղական ցինկի փոշին տեղակայվոլ է մեխանիկական մամլման միջոցով: Սա համեմատաբար ավելի պարզ և հեշտ իրագործելի մեթոդ է, հետևաբար շատ նախընտրելի է սերիական արտադրության տեսանկյունից: Թեև այստեղ նույնպես կան տեխնիկական խնդիրներ, որոնք լուծվել են նախագծի իրականացման առաջին տարվա ընթացքում: Դրա մասին կներկայացվի ստորև: Հայաստանում դեռևս չկա գալիում -68 բժշկական կիրառութուն, իսկ մոտ ապագայում ակնկալվող պահանջարկը դեռև մեծ չէ: Այդ պատճառով ընտրվել է Nirta մոդուլի ստանդարտ հարթ թիրախակալի (ՍՀԹ) տարբերակը, և ցինկի փոշին մամլվել է այդպիսի հենարանի վրա: Սակայն զուգահեռ այս աշխատանքների մշակվել և պատրաստվել է նաև հովացման ավելի բարձր էֆեկտիվույթամբ հենարանի տեսակ՝ լոկալ թեք թիրախակալներ (ԼԹԹ), հնարավոր ավելի մեծ պահանջարկի առկայության դեպքի համար:

Աշխատանքները տարվել են երկու ուղղությամբ՝ ստանդարտ հարթ և լոկալ թեք թիրախակալներ:

Ստանդարտ հարթ թիրախ՝ ՍՀԹ

Պատրաստվել են նիոբիումե ստանդարտ հարթ թիրախակալներ՝ Nirta մոդուլի թիրախային հենարանի չափերին համապատասխան: Փորձարկումների համար օգտագորշվել է բնական մետաղական ցինկի փոշի, քանի որ այն մատճելի է համեմատած հարստացվածի հետ, սակայն ունի նույն քիմիական և մեխանիկական հատկությունները: Փոշու մամլան համար օգտագործվել է ձեռքի հիդրավլիկ մամլիչ, որն ունակ է կիրառել մինչև 40 կՆ ուժ:

Առաջին դժվարությունները պայմանավորված էին այն հանգամանքով, որ ցինկի փոշու մամլումից հետո մամլված զանգվածը ուներ ցածր կպչողականություն նիոբիումե հենարանին: Կպչողականությունը մեծացնելու համար կարելի է մեծացնել մամլման ուժը: Սակայն մամլման ուժի մեծացման հետ մեկտեղ դեֆորմանում է նիոբիումե թիրախակալը, ինչը խնդրահարույց է, քանի որ թիրախակալի դեֆորմացիան ետ ուղղելիս պոկվում է մամլված ցինկը: Այս խնդիրը լուծելու նպատակով որոշվեց հենարանի վրա խորդուբորդություններ ավելացնել: Փորձարկվել են տարբեր մեթոդներ, ընտրվել է հղկաթղթով մամլման միջոցով խորդուբորդություններ ստեղծելու մեթոդը: Այսպիսի լուծումը տվեց իր արդյունքը: Նկ. 2-ում պատկերված է նիոբիումե թիրախակալի վրա մամլված 100 մգ զանգվածով ցինկի փոշին:

Նկար 2. 100 մգ զանգվածով մամլված ցինկի փոշին նիոբիումե թիրախակալի վրա:

Մամլման նպատակով կիրառվել է 30 կՆ ուժ: Այս ուժի ազդեցությամբ փոշին ընդունում է հարթ և փայլուն տեսք և արտաքնապես նման է ցինկե թիթեղի: Քանի որ ճառագայթման ավարտից հետո Nirta մոդուլը ցած է գցում թիրախակալը, որը պետք է ընկնի ԿԱԹԻԼ լուծման կայանի մեջ, այն պետք է դիմանա համապատասխան հարվածների: Կպչողականությունը փորձարկվել է 50 սմ բարձրությունից պինդ մակերևույթին ազատ անկմամբ հարվածելու միջոցով: Մամլված ցինկը բազմաթիվ անկումներից հետո չի առանձնանում թիրակալից, ինչը նշանակում է, որ կպչողականությունը բավարար է: Աշխատանքների ընթացքում պատրաստվել են մամլման դետալներ թրծված կարծր համաձուլվածքից և շատ հարթ մակերևույթով: Անմիջապես մամլող մակերևույթի հարթությունը կարևոր է նրա համար, որպեսզի ցինկի փոշին չկպչի մամլող դետալին: Կատարվել են նաև այլ տարաբնույթ մեխանիկական աշխատանքներ բազմաթիվ փորձարկումները իրագործելու նպատակով: Պատրաստված թիրախների նմուշների մեխանիկական ամրությունը բավարարում է արտադրական պրոցեսի պահանջներին: Ցիկլոտրոնի պրոտոնային փնջատարի վակուումային պոմպի՝ շարքից դուրս գալու հետ կապված՝ փնջատարը չի աշխատել 2025 թ գարնանից: Այդ պատճառով պատրաստված թիրախները չեն ճառագայթվել: Սակայն այս հաշվետվությունը գրելու օրերին վակուումային պոմպի խնդիրը արդեն իսկ լուծվում է: Թեմայի կատարողներ Ա. Մանուկյանի, Կ. Հովյաննիսյանի և Դ. Արշակյանի ջանքերով վերանորոգվել է վակուումային պոմպը ներկրված պահեստամասերով, և այժմ այն աշխատանքային վիճակում է: Պահեստամասերը ձեռք են բերվել Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն ՓԲԸ միջոցներով: Վերանորոգման գործում կարևոր է եղել արտասահմանյան գործընկերների հետ խորհրդատվության դերը: Նախագծի ղեկավարը և երկու կատարողներն այցելել են արտասահմանյան գործընկերոջ՝ Ֆրանցիսկո Ալվեշի գիտական կազմակերպություն՝ ICNAS, University of Coimbra, Պորտուգալիա, ծանոթացել գալիումի արտադրության հեղուկ թիրախային տեխնոլոգիաներին, ցիկլոտրոնի գործարկման տեխնիկական խնդիրներին: Կատարվել է նաև գիտական այց ԱՄՆ Նոտր Դամի համալսարան: Ստեղծվել են համագործակցային կապեր Նոտր Դամի համալսարանի պրոֆեսոր Խաչատուր Մանուկյանի հետ, ով զբաղվում է ճառագայթումների համար թիրախների պատրաստմամբ ԱՄՆ-ում: Քննարկվել է համատեղ աշխատանքների ծրագիր, որի արդյունքում ցինկե թիրախների պատրաստման վերաբերյալ նախատեսվում է տպագրել համատեղ գիտական հոդված:

Լոկալ թեք թիրախ՝ ԼԹԹ

Ավելի մեծ ծավալի արտադրություն կազմակերպելու դեպքում անհրաժեշտ կլինի էֆեկտիվ հովացմամբ թիրախակալների կիրառումը: Այս նպատակով մեր թիմի մշակած լոկալ թեք թիրախակալի մոդելը շատ արդիական է (Նկ. 3):



Նկար 3. Ստանդարտ հարթ (ՍՀԹ, ձախ) և լոկալ թեք (ԼԹԹ, աջ) թիրախակալների մոդելները:

ԼԹԹ ունի նույն արտաքին չափերը, ինչ ՍՀԹ, որպեսզի հնարավոր լինի ճառագայթումներ կատարել Nirta մոդուլի օգնությամբ: ԼԹԹ-ն տարբերվում է թիրախային տարածքի զիգզագաձև կառուցվածքով, ինչը թույլ է տալիս ապահովել ավելի մեծ հովացման մակերես: Պրոտոնային փնջի նկատմամբ այդպիսի մակերևույթի լոկալ թեքվածությունը թույլ է տալիս նաև թիրախի նյութի հաստությունը նվազեցնել՝ նույնը թողնելով պրոտոնի շարժման ուղղությամբ թիրախի էֆեկտիվ հաստությունը՝ անհրաժեշտ էներգետիկ միջակայք ապահովելու նպատակով: Թիրախի նյութի հաստության նվազեցումը թույլ է տալիս ա) լրացուցիչ բարելավել հովացումը՝ հնարավորություն տալով ավելի ինտենսիվ ճառագայթման, հետևաբար ավելի բարձր արտադրական ակտիվության, բ) արագացնել թիրախի լուծման քիմիական պրոցեսը: Այս ուղղությամբ մեր խումբը մինչ այս տպագրել է երկու հոդված [2,3]: Այս նախագծի առաջին տարում կատարվել են ջերմային մոդելավորման հաշվարկներ ANSYS փաթեթով, որտեղ հաշվի է առնված նաև պրոտոնային փնջի խտության ոչ հավասարաչափ՝ գաուսյան բաշխումը փնջի լայնական հատույթով [4]: Դա կարևոր լավարկում է, քանի որ իրականում անհամաչափ (կենտրոնում ավելի խիտ) փնջով ճառագայթման դեպքում թիրախի կենտրոնական մասը էլ ավելի է տաքանում: Ուսումնասիրվել է պրոտոնային հոսքի հարթ և երեք գաուսյան բաշխում՝ σ = 4.70 mm, 3.89 mm և 3.14 mm պարամետրերով: Ցույց է տրվել, որ որքան փոքր է սիգմա պարամետրը, այնքան թիրախի կենտրոնում և ծայրերին ջերմաստիճանների տարբերությունը մեծ է: Ցույց է տրվել նաև, որ ցիկլոտրոնի իրական փնջի պարամետրերին մոտ 3,14 մմ սիգմայով փնջի դեպքում ԼԹԹ էֆեկտիվությունը մոտ 30%-ով ավելի բարձր է՝ համեմատած ՍՀԹ հետ:



Նկ. 4. Երկկողմանի ԼԹԹ-ում դեպի հովացնող ջուրը ջերմային հոսքի բաշխման ուրվագծերը փնջի՝ (ա) հավասարաչափ և (բ) գաուսյան (Sigma = 3.14 մմ) բաշխումների դեպքում:

^{99m}Tc բշժկական ռադիոիզոտոպ

99mTc բշժկական ռադիոիզոտոպի արտադրության տեխնոլոգիայի մշակման նպատակով դիմել ենք **«Փորձարարական մշակումների նախագծեր (Experimental Development Projects) 2025»** մրցույթին և շահել՝ 25EDP-2G008:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է պատրաստել ԿԱԹԻԼ և ՋԻՆՋ համակարգերի՝ 99mTc արտադրությանը հարմարեցված մեկական օրինակներ, ինչպես նաև ստանալ նատրիումի պերտեխնետատ:

Կարևոր է նշել, որ ծրագրի կատարողներ են ընդգրկված նաև ՌԻԱԿ ՓԲԸ աշխատակիցներ: Այս հանգամանքը թույլ տվեց ԱԱԳԼ – ՌԻԱԿ համագործակցությունը բարձրացնել նոր մակարդակի: Ծրագրի համաֆինանսավորող է Մատիքս ՍՊԸ, որը հետաքրքրված է ԿԱԹԻԼ և ՋԻՆՋ համակարգերի արտադրությամբ:

$^{61,\,64}$Cu բշժկական ռադիոիզոտոպներ

ԿԱԹԻԼ և ՋԻՆՋ ավտոմատացված և հեռակառավարվող համակարգերը կարող են օգտագործվել նաև այս իզոտոպի արտադրության նպատակով:

Մշակվել է ^{64}Ni -ic ^{64}Cu իզոտոպի ստացման նպատակով կատարվելիք գիտափորձերի մեթոդիկա: Իրականացվել է ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնի հետ համատեղ ^{64}Ni հարստացված թիրախի ճառագայթում, համապատասխան միջուկային ռեակցիաների կտրվածքների չափում: Պատրաստվել է շերտավոր թիրախ՝ բաղկացած նիկելե և պղնձե թիթեղներից՝ նախապես բարակեցնելով նիկելի թիթեղը 30-40 մկմ հաստություններով (Նկ. 5): Տվյալների մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Նկար 5. Նիկել պղնձե բազմաշերտ թիրախ:

Տեխնիկական աջակցություն այլ խմբերին՝ ցիկլոտրոնի պրոտոնային փնջով ճառագայթումներ կատարելու նպատակով

Ցիկլոտրոնի փնջատարի վակուումային պոմպը ծարքից դուրս էր եկել 2025 թ գարնանը: Բաժնի աշխատակիցների ջանքերով ուսումնասիրվել է խնդիրը: Անհրաժեշտ պահեստամասերը ձեռք են բերվել ՌԻԱԿ ընկերության կողմից: ԻՀԱ բաժնի աշխատակիցների ջանքերով կատարվել է վերանորոգում: Կարևոր է եղել Պոտուգալիա և ԱՄՆ մեր այցերի ընթացքում արտասահմանյան գործընկերների խորհրդատվությունը այս հարցում՝ ICNAS, University of Coimbra, Portugal և University of Notre Dame, USA. Այժմ

վակուումային պոմպը աշխատանքային վիճակում է և շահագործվում է տարբեր գիտափորձերի նպատակով:

Ցիկլոտրոնի պրոտոնային փնջով ճառագայթումներ պլանավորող և կատարող ԱԱԳԼ և ԵՊՀ միջուկային ֆիզիկայի ամբիոնի խմբերին ցուցաբերվում է անհրաժեշտ տեխնիկական, մասնագտական օգնություն բաժնի աշխատակիցների կողմից: Ապահովվում է անհրաժեշտ պարամետրերի փնջեր այդ էքսպերիմենտների համար:

Կիրառական ֆիզիկայի խմբում կատարվում են գծային արտադրական էլեկտրոնային արագացուցիչի վակուումային պայմանների ստացման աշխատանքներ՝ Խաչիկ Հարությունյանի գլխավորությամբ: Աշխատանքային ռեժիմի ստացման դեպքում անմիջապես կվերսկսվեն մալուխային միակցման դետալների ճառագայթումները:

Վերանորոգման ախատանքներ

«ԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԾՐԱԳԻՐ - 2024», 24LCG-2G028

Ամրապնդման ծրագրի շրջանակներում սկսվել են խմբի շենքային ենթակառուցվածքների վերանորոգման լայնածավալ աշխատանքները: Արդեն իսկ վերանորոգվել է 15-րդ մասնաշենքում ԻՀԱ բաժնին պատկանող տարածքի ողջ տանիքը: Ներքին վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.թ Ա.Է. Ալլահվերդյան

Բաժանմունքը ստեղծվել է 2022 թվականին: Բաժանմունքի աշխատակիցները զբաղվում են քվանտային տեխնոլոգիաների տեսական մշակմամբ:

2025 թ. գիտահետազոտական գործունեության հակիրճ նկարագրություն՝ ռազմավարական հիմնական ուղղությունները, ձեռքբերումները

Հետազոտությունների հիմնական ուղղությունները

- Քվանտային մետրոլոգիա՝ դիէլեկտրիկ թափանցելիության որոշումը լույսի ցրման միջոցով:

- Քվանտային չափումներ վիճակագրական ֆիզիկայի մեթոներով և գաղափարներով:

- Նոր տեսակի քվանտային վիճակներ, որոնք հիմնված են լույսի աբերացիայի վրա:

- Հավանականային պատճառականություն ֆիզիկայում և մեքենայական ուսուցումում:

- Քվանտային և դասական օպտիկական համակարգեր:

- Կոհերենտ կիսահաղորդչային պոլարիտոնային համակարգեր որպես քվանտային համակարգիչների նոր հարթակ:

- Չեզոք-ատոմային Ռիդբերգյան քվանտային համակարգիչներ եւ սիմուլյատորներ:

- Պտտական մոմենտ պարունակող համակարգերի վիճակագրական ֆիզիկա:

- Ակտիվ, ոչ-հավասարակշիռ կենսաբանական համակարգերը:

- Բակտերիաների և վիրուսների պոպուլյացիոն դինամիկա:

- Կոպերատիվ և մասնակի կոպերատիվ խաղերի տեսության հիմունքները:

- Որոշումների կայացում, վիճակագրական և դետերմինիստիկ մոդելներ:

- Միջդիսցիպլինար հետազոտություններ:

Ձեռքբերումները

-- Ուսումնասիրվել է Ցերնիկեի համակարգը քվանտային և դասական տիրույթներում:

-- Մեքենայական ուսուցման հայտնի մեթոդներից մեկը (ոչ-բացասական մատրիցային ֆակտորիզացիան) կապվել է ընդհանուր պատճառի սկզբունքի հետ:

-- Առաջարկվել է հիմնարար մոտեցում պտտվող համակարգերի վիճակագրական ֆիզիկան նկարարգրելու համար: Ներկայացվել է այդ մոտեցման պարզագույն մոդելը:

-- Առաջարկվել է լուծում Սիմպսոնի պարադոքսի համար: Սա վիճակագրության և մեքենայական ուսուցման հիմնական պարադոքսներից է: Մենք հասել ենք պարադոքսի

լուծմանը լայնացնելով մեքենայական ուսուցման գործիքակազմը, մասնավորապես ընդգրկելով այդտեղ հավանականային պատճառականության կոնցեպտները:

-- Դիէլեկտրիկ նյութերի միկրոստրուկտուրայի որոշման խնդրում առաջարկվել է նոր մեթոդ որը հիմնված է Դոպլերի էֆեկտի վրա: Պարզաբանվել են նրա տարբերությունները ավելի հայտնի Դոպլերի մետրոլոգիայի հետ: Ցույց է տրվել, որ մեթոդը լավացնում է Ռելեյի սահմանը [9]:

-- Ներկայացվել է ներածություն քվանտային չափումների պրոբլեմին: Շեշտվել են այդ պրոբլեմի բաց հարցերը: Մատչելի ձևով ներկայացվել է հեղինակների առաջարկված լուծումը, նրա թերությունները և առավելությունները:

-- Առաջարկվել է քվանտային լույսի նոր տեսակի վիճակներ, որոնք հիմնված են աբերացիայի երևույթի վրա:

-- Բազմաքյուբիթային Ռիդբերգի դարպասները կառուցվել են երկրաչափական փուլի միջոցով: Քյուբիթները իրականացվում են հիպերֆայն ենթամակարդակների օգնությամբ: Մեթոդը ընդհանրացվել է իրարից հեռու քյուբիթների համար, որոնք կապված են ատոմների տրանսպորտացնող շղթայով (քվանտային բաս):

-- Ուլտիմատում խաղը կարևոր նշանակություն ունի քանի որ այստեղ խախտվում են դասական ռացիոնալություն հիմնական սկզբունքները: Մենք առաջարկել ենք այդ խաղի լուծում, որը օգտագործում է ոչ-դասական, բայց այնուամենայնիվ ռացիոնալ սկզբունք: Սա թույլ է տալիս նկարագրել խաղի հիմնական էմպիրիկ օրինաչափությունները:

-- Որոշումների կայացման ոլորտում ձևակերպվել է նոր մեթոդ, որը ընդգրկում է կոգնիտիվ հոգեբանության և պսիքոֆիզիկայի հիմնական օրենքներից մեկը (Վեբերի օրենքը): Այս մեթոդի օգնությամ առաջարկվել է նոր լուծում սակարկումների պրոբլեմին և ասիմետրիկ խաղերում առաջարկի ձևավորման պրոբլեմին:

-- Ունիվերսալ պորտֆոլիոները ուսումնասիրվել են Բայեսյան մոտեցման շրջանակներում:

-- Պարզաբանվել են բակտերիաների հակավիռուսային պաշտպանության հիմնական երկու մեխանիզմերը: Առաջարկվել է հիփոթեզ նրանց առաջացումը և համատեղությունը նկարագրելու համար:

-- Առաջարկվել է պրոտեինների էվոլյուցիայի մոդել, որը կապում է նրան ֆիզիկական և համապատասխան օրգանիզմների պոպուլյացիոն հատկությունները: Մոդելը վերարտադրում է պրոտեինների էվոլյուցիայի կարևոր հատկանիշներից մի քանիսը:

-- Շարունակվել է կենսաբանական էվոլյուցիայի թերմոդինամիկական սկզբունքների բացահայտումը և ուսումնասիրությունը: Ներմուծվել է էնտրոպիկ աղբի գաղափարը և ուսումնասիրվել է դրա կենսաբանական հատկանիշները:

-- Հայտնի է քաղցքեղի աղետալի վիճակը Հայաստանում: Վարդան Բարդախչյանը ակտիվ մասնակցում է քաղցքեղի վիճակագրության ուսումնասիրմանը Հայաստանում:

Հաշվողական ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժանմունք (ՀՖ և SS)

Ղեկավար՝ ֆ.-մ.գ.դ, պրոֆ., Ն.Զ. Ակոպով

Ավանդաբար ՀՖ և SS բաժանմունքի գործունեությունը ընթանում է երկու ուղղությամբ՝ SS կառուցվածքի սպասարկում (ծրագրային ապահովում, ցանցային ադմինիստրացիա) և ֆիզիկական տվյալների մշակում՝ Belle II համագործակցության շրջանակներում:

SS ոլորտի գործունեություն – Առաջադրանքներ և նախագծեր

Տարվել է հետևողական աշխատանք՝ ԱԱԳԼ-ի ներքին ցանցը որակապես նոր մակարդակի բարձրացնելու համար: Որոշ հանգուցային երթուղիչների (routers) և տեսաձայնագրման սարքավորումների վրա տեղադրվել են անխափան սնուցման սարքեր (UPS)՝ էլեկտրաէներգիայի անջատումների ժամանակ անխափան հոսանք ապահովելու համար, ինչը շարունակական գործընթաց է: ԱԱԳԼ-ի տարածքների վերանորոգումների ժամանակ, մեր վերահսկողությամբ և աջակցությամբ, անցկացվել են բացառապես բարձրորակ մալուխներ, իսկ սենյակները կահավորվել են բարձրորակ ինտերնետային վարդակներով և երթուղիչներով: Փոխարինվել են բազմաթիվ համակարգիչների վնասված սնուցման բլոկերը, տեղադրվել են բազմաթիվ SSD կրիչներ՝ հին համակարգիչների աշխատանքը բարելավելու համար: Կատարվել են համակարգիչների վերանորոգման բազմաթիվ այլ աշխատանքներ:

Տեղադրվել, տեղափոխվել կամ փոխարինվել են տեսախցիկները: Մասնակիորեն թարմացվել է DVR սարքերի քանակը: Հաջորդ տարի նախատեսվում է ձեռք բերել տեսաձայնագրիչների և տեսախցիկների նոր խմբաքանակ: Իրականացվել են բազմաթիվ համակարգիչների, տպիչների, երթուղիչների, Wi-Fi սարքերի, DVR-ների, IP տեսախցիկների, IP հեռախոսների կարգավորման և ընթացիկ սպասարկման, ինչպես նաև տարբեր ծրագրերի տեղադրման աշխատանքներ: Ըստ պահանջի՝ տարբեր տարածքներում և սենյակներում անցկացվել են նոր UTP մալուխներ:

Ամենօրյա ռեժիմով ապահովել ենք ԱԱԳԼ-ի անվտանգության աշխատակիցների համակարգիչների, տեսահսկման ծրագրերի և տեսահսկման ողջ համակարգի սպասարկումը: Իրականացվել է աշխատակիցների էլեկտրոնային փոստերի ամենօրյա սպասարկում (էլ. հասցեների բացում, փակում, ապաբլոկավորում, խմբավորում և այլն): Ձեռք է բերվել մեկ նոր հզոր սերվեր, և ավարտին է հասցվել մեր գործընկերոջից (DESY) երկու սերվերների փոխանցման գործընթացը, ինչը էապես կբարելավի սպասարկման որակը:

Համակարգային ադմինիստրատորների կողմից պարբերաբար իրականացվում են գրադարանների և փաթեթների բոլոր անհրաժեշտ թարմացումները: Մենք հասել ենք LINUX

սերվերների վիրտուալացման բավականին բարձր աստիճանի, ինչը հանգեցրել է էներգիայի սպառման զգալի խնայողության:

- 37.26.168.23 և 37.26.168.28 սերվերների վրա տեղակայված կայքերի սպասարկում և ծրագրային թարմացումներ:
- aanl.am կայքում փաստաթղթերի առցանց լրացման գործառույթի ավելացում, ինչպես նաև դրանց թարմացում և սպասարկում:
- https://epd.yerphi.am/ կայքի վերականգնում և պատասխանատու անձի համար խորհրդատվության տրամադրում:
- Նոր՝ https://epd.yerphi.am կայքի ստեղծում:
- http://noramberd.aanl.am/ կայքի պատրաստում և սպասարկում:
- «Նոր Ամբերդ» տեսական ֆիզիկայի դպրոցի տեխնիկական սպասարկում:
